


ՌՈՒՇԱՆ ՓԻԼՈՍՅԱՆ

РУШАН ПИЛОСЯН


# ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

# КЛОЧКИ ПАМЯТИ

КНИГА ПЕРВАЯ


"Медиацентр им. И. Гаспринского"

# ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

# КЛОЧКИ ПАМЯТИ

КНИГА ПЕРВАЯ

Ռուշան Փիլոսյան
Պատմվածքներ
Նկարազարդումները՝
Սվետլանա Բաղդասարյանի

*Рассказы Рушана Пилосяна*
*на армянском и русском языках.*
*Книга иллюстрирована живописью*
*Светланы Багдасарян.*

Медиацентр им. И. Гаспринского
2018

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

## ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հիշողությունները՝ լավ կամ վատ, մեր մշտական ուղեկիցներն են կյանքում։ Դրանք անցյալի դրոշմներն են մեր ուղեղի և հոգու վրա, և մենք՝ ուզենք, թե չուզենք, այդ ոչ միշտ հաճելի բեռը կրում ենք մեր կյանքի ողջ ընթացքում։ Ասում են՝ ամենադժբախտ մարդը նա է, ով ապրում է միայն հիշողություններով։ Սակայն, անկախ մեր կամքից, հիշողությունները կան և կլինեն՝ պահպանված երբեմն մասնակիորեն, երբեմն էլ՝ ամբողջովին՝ երեկվա կամ տասնամյակների հնություն ունեցող դեպքերն ու իրադարձությունները, որպեսզի՝ մեկ հաճելի լինի դրանք հիշել, մեկ՝ ցավագին ու տանջալի…

## ВМЕСТО ПРЕДИСЛОВИЯ

Воспоминания, добрые или недобрые, наши неотвязные спутники жизни. Они – плод наших дум и чувств, и, хотим мы этого или нет, всё же носим этот не всегда приятный груз в течение всей нашей жизни. Говорят, что самый несчастный человек тот, который живет только воспоминаниями. Но зависит ли это от нашей воли? Воспоминания – отголоски прожитой жизни и они всегда будут: иногда частично, иногда – полностью. Это или события вчерашние, или десятилетней давности, иногда приятны, иногда – мучительны…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

# ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

# ВРЕМЕНА ГОДА

ГАУ РК "Медиацентр им. И.Гаспринского"

# Աշնանային տրամադրություն

Մռայլ ամպեր՝ սև ու մութ, ու գորշ մտքեր՝ ցուրտ ու լուռ, մերկ կատարներ ծառերի, հոգնած հույսեր արևի… Այն ոսկեզօծ աշխարհից, ջերմ ու քնքուշ բառերից, ժպիտներից սիրով լի, երազներից բազմերանգ և շուրթերից նազելի, վերջին հույսից դողդոջուն մնաց միայն մի բուռ հուշ, այն էլ՝ թոշնած տերևի, աշնան դեղնած տերևի, խոնավ ու ցուրտ տերևի մեռնող գրկում կուչ եկած…

Իսկ աշնան օրերը կարճ, արևը՝ ծույլ ու նվազ, անձրևները՝ հարատև, մելամաղձոտ երգ ու բառ անցած գարունն են հիշում: Հիշում են սերն անցողիկ, որ հարատև էր թվում: Հիշում են ծովը ամռան և ալիքը գուրգուրող, որ շիկացած ավազին երիցուկներ էր նետում, հեքիաթներ էր խոստանում հազար ու մի գիշերվա…

Երբ արևը շիկահեր՝ հոգնաբեկ ու ինքնագոհ, գիրկն էր անցնում սարերի, երբ երեկոն դյութական լուռ իջնում էր անտառին՝ վառվում էին երկնքում բյուր աստղերը մարգարիտ… Կյանքը թվում էր երազ՝ ոսկեշղթա ճանապարհ…

Եվ ինչո՞ւ հենց աշնանը՝ մայրամուտին բնության, հին օրերն են միշտ հիշվում՝ այն պահերը երջանիկ, որ երբեք չեն կրկնվի…

Հիշո՞ւմ ես դու… Վաղո՜ւց էր… Գարնան ծաղկի նման էր, կարճ՝ թիթեռի կյանքի պես... ընկնող աստղի ցոլք դարձավ երազների պահը վառ… Քո ջերմացնող հայացքում ես խոստումներ կարդացի, բայց, ավա՜ղ, խաբկանք էր դա, իսկ ես քեզ հավատացի: Եվ թվաց՝ չկա ինձ պես երջանիկ մարդ աշխարհում, թվաց՝ հասել եմ անհաս լեռան գագաթին… Եվ թվաց՝ անվերջ է այս երջանիկ պահը սիրո… Եվ թվաց, թե աշխարհի տիրակալն եմ ես այնժամ… Խենթացա՜ ես, գինովցա՜, էլ չկար ուրիշ երազ…

Իսկ հիմա դալուկ աշնան անձրևի տակ միալար քայլում եմ ու քեզ փնտրում, որ հարցնեմ՝ ինչո՞ւ, հոգյա՜կ, մոռացար ամառը մեր, ծովը՝ չքնաղ, կապուտակ, ափերին՝ երիցուկներ…

Գորշ աշնան խոնավ քամին սև ու մութ ամպերի հետ քշում է, տանում հեռու իմ միակ հույսը բեկբեկ: Դրոշմը քո հետքերի սառն անձրևն է լվանում, չի՞ թողնում գոնե մի հետք, որ գնամ ես նրանով… Միգուցե, գտնե՞մ հանկարծ տրորված երիցուկներ… Իմ շնչով կյանք տամ նրանց, որ նորից ժպտան բարի, արթնացնեն

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

երազը հին: Եվ զինովնա՛մ ես նորից, խենթանա՛մ քո բառերից, քո այրող շրթունքներից, հանելուկ քո հայացքից: Եվ, գուցե, այնժամ դառնամ ես նորից տերն աշխարհի... Որ գոնե հույսը մնա անթեղված երազների, թե չէ այս աշնան քամուց կկորչեմ անվերադարձ և միայն հուշերիդ մեջ կմնամ հավերժ անմահ...

Միգուցե, ո՛վ իմանա, դեռ կգան նոր գարուններ, և ամռան տապը նորից՝ ալիքի ուսին նստած, ոսկեզօծ ավազներին կնետի երիցուկներ...

## Осеннее настроение

Тёмные серые тучи, мрачные мысли, холодные и молчаливые голые кроны деревьев, утомленная надежда на солнце...

От того золотистого мира тёплых и нежных слов, улыбок, полных любви, красочных цветных грёз и нежных губ, от последней надежды осталась лишь горстка воспоминаний, да и те съежились в объятиях увядающей листвы, жёлтых осенних листьев, умирающих от холода и сырости...

А короткие осенние дни, ленивое солнце, долгие дожди, печальные песни и слова вспоминают прошедшую весну и угасающую любовь, которая казалась вечной. Вспоминают море летнее и ласковую волну, которая выносит на раскалённый песок ромашки и обещает сказки тысячи и одной ночи. Когда златовласое солнце, утомлённое, но самодовольное, опускалось в объятия гор, когда очаровательный вечер тихо окутывал лес, в небе зажигались кристаллики звёзд-жемчужин, жизнь казалась сном, дорогой с золотыми цепями...

И почему именно осенью, на закате природы, вспоминаешь дни прошедшие, их счастливые мгновения? Дни, которые, быть может, никогда больше не повторятся...

Вспоминаешь тот счастливый миг, который подобен вспышке падающей звезды, короткий, как жизнь бабочки, как весенний цветок...

А в твоём тёплом и ласковом взгляде я прочитал признание, но, увы, оно было обманчивым, а я поверил. И казалось, что

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

нет на свете человека счастливее меня, и казалось, достиг я непреступной вершины… И казалось, что вечен этот счастливый миг любви… И казалось, что я властелин Вселенной… Я сошел с ума, опьянел, и нет другой мечты…

Но сейчас, под осенним монотонным дождем, я бреду в поисках тебя, чтобы спросить: «Отчего, душа моя, ты забыла наше лето, чудесное море синее, ромашки на берегу?»

А осенний влажный ветер вместе с тяжёлыми мрачными тучами гонит и уносит вдаль мою сокровенную мечту. Дождь смывает твои следы, не оставляет ни одного, чтобы можно было пройти по ним и найти растоптанные ромашки… Своим дыханием вернуть их к жизни, чтобы снова они, ласково улыбнувшись, пробудили старые мечты. Чтобы снова опьянеть, сойти с ума от твоих слов, от твоих обжигающих губ, от твоего загадочного взгляда. И, может, тогда я снова стану властелином Вселенной. Я должен сохранить мечту, иначе с этим осенним ветром пропаду навсегда и бесследно, и останусь лишь в твоих воспоминаниях. Быть может, придут ещё новые вёсны, и знойный ветер вместе с белогривыми волнами вынесут новые ромашки на золотистые пески…

## Առաջին ձյունը

Առաջին ձյունը… Այն միշտ էլ անսպասելի է գալիս՝ ինչպես առաջին սերը: Երբեմն գալիս է անժամանակ (արդյոք լինո՞ւմ է անժամանակ սեր)՝ ավետելով լացակումած աշնան վախճանը և նորաթուխ ձմռան գալուստը: Գալիս է, որպեսզի նորից հեռանա, իր տեղը զիջի մանուկ գարնանը՝ արևի խինդով ու ծաղկած ծառերի գույնզգույն ժպիտներով…

Ձյան «ծաղկաթերթիկները»՝ ծառերից պոկված թիթեռնիկների պես, թռչկոտում են ու պար գալիս: Ապա հոգնած՝ հանդարտ իջնում են սարին ու քարին, դաշտ ու անտառին՝ իրենց հետ բերելով վաղուց սպասված հանգստություն և անդորր աշնան պաղ քամիներից ձանձրացած ու սառած, միապաղաղ անձրևներից հագեցած հողին…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Ճերմակ ու փափուկ ձյունը նուրբ սավանով ծածկել է ամեն ինչ… Խոր քուն է մտել բնությունը ծեր ու երազներում նորից տեսնում է պայծառ գարուններ: Նա երազներում տեսնում է օրեր՝ անցած-գնացած, օրեր՝ լավ ու վատ, երջանիկ ու ձախորդ, հուսահատ ու վեհ, կարոտի, հույսի, անդարձ կորստի, արդեն հուշ դարձած սև ու մութ օրեր: Եվ քանի՜ գարուն, ամառ ու աշուն անցան իր գլխով՝ պայծառ օրերով, փոթորիկներով, ամպրոպի թինդով, կիզիչ արևով, սոխակի երգով, գայլի ոռնոցով, լաջվարդ երկնքով, կարկուտ ամպերով…

Քանի՜ ծառ ու թուփ պտուղ տվեցին, քանի՜ ծառ ու թուփ ամուլ մնացին, քանի՜ երգ երգեց լացող ուռենին, քանի՜ երգ ընկավ՝ խոցված գնդակից: Գալի՞ս են, անցնո՞ւմ քարավանի պես՝ հուշե՞ր, երազնե՞ր և ինչքա՞ն են դեռ գալո՞ւ, անցնելո՞ւ՝ քանի դեռ տաք է վերմակը հողի, քանի դեռ ձյունը առվակ չի դարձել՝ հողը ներքաշվել, որ հետո զուլալ մի աղբյուր դառնա: Դեռ քայլելու է հուշ-քարավանը անհոգ երազի, որ կյանք է կոչվում՝ տրված ի վերուստ: Այն հարատև է բնության համար, բայց մի կաթիլ է օվկիանոսի մեջ, թե մարդ ես ծնվել, թե մարդ ես կոչվում…

Ձյունը փափո՜ւկ, փափո՜ւկ էր քայլերի համար,<br>
Ձյունը տաքո՜ւկ, տաքո՜ւկ էր սրտերի համար:<br>
Ո՞վ անցավ ձյան վրայով՝ հետքն իր թողեց.<br>
Կյանքի մի կաթիլ:<br>
Մեկը վազքով է անցել դաշտն այս ձյունապատ,<br>
Մեկը փութով է անցել դաշտն այս ձյունապատ,<br>
Հեռվում, եթե մի լույս սպասել է նրան.<br>
Կյանքի մի կաթիլ…

Առաջին ձյունը… Որքան անսպասելի էր նրա գալուստը, նույնքան էլ բազմազան էր նրա առաջացրած տրամադրությունը հոգում: Տաք օրերի կորուստը, ձմռան ցուրտն ու քամին երբեմն հուսահատության են հասցնում: Աչքերն արցունքով են լցվում՝ ոչ միայն արևի տակ բոցկլտացող ձյան ծիածանից, այլև՝ տխուր մտքերից, ձմռան երկար ու ձիգ գիշերների բութ մթությունից: Հույսը, սակայն, որն ապրելու վերջին շյուղն է, մեր կողքին է, չի լքում մեզ, չի լքում մեզ…

ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского»

## Первый снег

Первый снег… Он всегда выпадает внезапно, как приходит первая любовь. Первый снег выпадает обычно в самое неожиданное время, оповещая о конце осени и предсказывая увядание природы…

Снежинки, подобно слетевшим с веток бабочкам, попрыгивая, кружатся в танце, затем степенно опускаются на горы, поля и леса, принося земле, уставшей от осенних ветров и монотонных дождей, долгожданный покой…

Белым и мягким снегом, будто одеялом, укрыто всё вокруг: природа в глубоком сне, ей снится яркая весна, и ушедшие дни – хорошие, добрые, счастливые и несчастные, удручающие и возвышающие, дни тоски и надежд, черные дни невосполнимых утрат. Сколько весен, лет и зим прошло с тех пор – с яркими днями, метелями, грозой и жарким солнцем, трелью соловья и волчьим воем, синим небом и грозным градом! Сколько деревьев дали плоды, а сколько остались бесплодными, сколько песен спела плакучая ива, сколько песен упало, пронзенных пулями! Приходят и уходят, как караван воспоминаний, мечты…

А сколько их придет и уйдет пока еще хранит тепло покрывало земли, покуда снег не растаял, чтобы в будущем стать хрустальным родником. Ещё будет шагать караван мечты, что зовётся жизнью, данной от Бога. Жизнь вечна для природы, а для того, кто родился и называется человеком, она всего лишь капля в море…

Снег был мягким и пушистым под ногами!
Снег был добрым и тёплым для сердец!
Кто прошёл по снегу – оставил свой след:
Это капля жизни…
Кто-то бегал по этому полю, покрытому снегом,
Кто-то в спешке прошел по этому полю, покрытому снегом,
Если вдалеке его ждал какой-то свет…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Это капля жизни…

Первый снег… Как неожиданно пришёл он, вызвав столько разнообразных чувств. Теплые дни утрачены, зимняя стужа порой смущает душу человека и вселяет в неё разочарование. Наши глаза наполняются слезами не только от искрящегося под солнцем снега, но и от темноты долгих, бесконечных зимних ночей. Однако надежда, последняя опора в нашей жизни, не покидает нас, не покидает нас…

## Գարունն անցավ

Գարունն անցա՛վ՝ ձյան հալոցքի արցունքներով, զմրուխտ կանաչով, պայթող բողբոջներով, իսկ ես նույնիսկ չնկատեցի, թե ինչպես անցավ այն…

Գարունն անցա՛վ՝ արթնացած հույզերի ջրվեժով, սիրաշող հայացքներով, սրտատրոփ սպասումներով, իսկ ես նույնիսկ չնկատեցի, թե ինչպես անցավ այն…

Այո՛, գարունն անցա՛վ, և ես չնկատեցի… Չլսվա՛ծ, չտեսնվա՛ծ բան… Կյանքում առաջին անգամ ես չնկատեցի աշխարհում ամենագեղեցիկը՝ գարունը։ Դեռ լավ է, որ հիշողությանս մեջ դրոշմված են անցյալ գարունները, լավ է, որ դեռ չեմ կորցրել հիշողությունս, որն էլ հիշեցրեց՝ գարունն անցա՛վ…

Իսկ, միգուցե, ավելի լավ կլիներ, եթե ես այն իսպառ կորցրած լինեի. չկա հիշողություն՝ չկա տառապանք, ցավ, գիշերային մղձավանջ, այլ կա միայն գարուն, որն ընկալում ես անմնացորդ՝ քո ողջ էությամբ, հմայվում ես գեղեցիկներից գեղեցիկով ու անհամբեր սպասում ես հաջորդ գարնան այցին…

Իսկ այս գարունն անցավ աննկատ…

## Весна прошла

Весна прошла со слезами талого снега, с изумрудной зеленью, с лопнувшими почками деревьев, а я даже не заметил, как она прошла…

Весна прошла с необузданной грозой, ароматом роз, грацией ромашки, а я даже не заметил, как она прошла…



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Весна прошла с водопадом проснувшихся чувств, лучистыми взглядами, трепетом ожидания, а я даже не заметил, как она прошла...

Да, весна прошла, и я не заметил её... Это что-то неслыханное и невиданное. Впервые в жизни я не заметил самое прекрасное в мире – весну. Хорошо ещё, что в памяти запечатлены прошлые вёсны, и хорошо, что я покуда не потерял память, которая и подсказала мне: весна прошла...

А, быть может, было бы хорошо, если б я вовсе потерял память. Нет памяти – нет страдании, боли, ночных кошмаров. Есть только весна, которую воспринимаешь всем своим существом, восхищаешься этим чудом природы и с нетерпением ждешь прихода следующей весны...

А эта весна прошла... незаметно...

## Գարնանային էտյուդ

Կապուտակ ու ջինջ երկինքը աչք է շոյում՝ արբեցնում իր մաքրությամբ ու անհասանելի հեռուներով: Ձմռան հոգսը թոթափած՝ արևը ջերմ ժպտում է ամենքին: Ի պատասխան՝ ժպտում են նոր բողբոջած ծառերը, նորաբաց ծաղիկները, ժպտում են ծառերին թառած, իրենց ծլվլոցով անտառի անդորրը գուրգուրող թռչունները: Ժպտում է քնքուշ մանուշակը՝ կապույտ աչիկները հառած նույնքան կապույտ երկնքին: Երջանկությունից, թե մեղմ զեփյուռից, նրա թրթռացող նուրբ թերթիկները սիրով կանչում են այս ու այն կողմ թռչկոտող մեղուներին, թե՝ եկե՛ք, իմ նեկտարից էլ տարեք:

Ուրախ ու անհոգ խաղաղություն է իջել աշխարհին՝ անվերջանալի, երջանիկ երազի նման...

Գարուն է...

Ամպի ծվենները՝ քամուց հալածված երամի պես, արագորեն ծածկեցին երկնքի լաջվարդը: Արևը, որը մերթընդմերթ դուրս էր պրծնում թխպոտ ամպերի խոնավ գրկից և աչքով անում դեռ քիչ առաջ ժպտացող աշխարհին, վերջիվերջո կուլ գնաց մոխրագույն հեղեղին: Ժպիտը սառեց ծառերի կատարներին: Հեռվում ինչ-որ տեղ կայծակը պատռեց երկնքի կուրծքը, և նրա որոտից

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

վախվորած թռչունները կուչ եկան ու լռեցին: Անձրևի կաթիլներն սկսեցին անխնա թմբկահարել ծառ ու ծաղիկ, դաշտ ու անտառ: Նրանք չխնայեցին նաև կապուտաչյա մանուշակին, իսկ նա՝ ամոթխած հարսի պես, գլուխը խոնարհեց ու սկսեց դողալ սառն անձրևից: Տխրեց մանուշակը. նա արև էր երազում, նրանով ապրում… Իսկ անձրևը գալիս էր ու գալիս…

Գարուն է…

Անսպասելի սկսված հորդառատ անձրևն՝ անսպասելի էլ կտրվեց: Ամպերը քամեցին վերջին կաթիլները և՝ անչափ գոհ իրենցից, սկսեցին դանդաղ հավաքել մոխրագույն խոնավ վարագույրը: Արևը դուրս լողաց թուխպերից և գերությունից ազատվածի պես՝ էլ ավելի պայծառ սկսեց ժպտալ: Անձրևից հագեցած հողը գոլորշի արտաշնչեց, և նրա տաք ու խոնավ շնչից անտառը նորից արթնացավ: Մեղուների բզզոցը, թռչունների դայլայլը, անձրևից գոյացած մեծ ու փոքր առվակների կարկաչը նորից ողողեցին նրա անդորրը:

Կապույտ մանուշակը՝ երկչոտ ու զգույշ, նախ՝ ուղղեց մեկ, հետո՝ մյուս բոլոր ծաղկաթերթիկները և՝ ուրախության արցունքն աչքերին, նայեց երկնքին: Ամեն ինչ դարձյալ նույնն էր. նույն կապույտ ու ջինջ երկինքը, նույն պայծառ արևը, նույն ուրախ ու անհոգ խաղաղությունը՝ անվերջանալի երազի նման իջած աշխարհին…

Գարուն է…

## Весенний этюд

Небо, подёрнутое синевой, ласкает глаз, опьяняет своей чистотой и недоступностью. Солнце, сбросившее с себя зимнюю неволю, ласково улыбается каждому. В ответ ему улыбаются зазеленевшие деревья и распустившиеся цветы, птицы подают голоса, нарушая гордую тишину леса. Улыбается и нежная фиалка, устремившая в синее небо свои голубые  глазки. Её лепестки, дрожащие то ли от счастья, то ли от легкого ветерка, как бы зазывают пролетающих мимо пчел: «И мой нектар не забывайте!..». Какой-то безмятежный покой опустился на землю как бесконечный, счастливый сон…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Весна…

Тучи, гонимые ветром, быстро заволокли небо. Солнце временами выглядывало из-за них, будто подмигивая ещё недавно улыбавшемуся миру. Но, в конце концов, и его поглотил мрачный поток. Улыбка застыла на кронах деревьев. Где-то вдали молния пронзила небо. Испуганные раскатом грома, птицы замолкли, сбились в кучу. Капли дождя бешено заколотили по деревьям и цветам. Эти тяжелые, как свинец, капли не пощадили и нежную синеокую фиалку. Она, подобно смущённой невесте, склонила низко голову и задрожала от холодного дождя. Загрустила фиалка: она мечтала о солнце, им она жила… А дождь всё шел и шел…

Весна…

Неожиданно начавшийся дождь так же внезапно и оборвался. Тучи выжали последние капли и, видимо, довольные содеянным, гордо и чинно стали убирать мрачный влажный занавес. Солнце выплыло из-за облаков и, как освободившийся от оков узник, заулыбалось ярче прежнего. Насытившаяся дождем земля выдохнула пар. От её тёплого и влажного дыхания вновь пробудился лес. И вновь тишину леса разорвали жужжание пчел, трели птиц, журчание больших и маленьких ручьев, возникших после дождя.

Синеокая фиалка осторожно распрямила сначала один лепесток, потом другие и со слезами счастья на глазах взглянула на синюю, бездонную даль. А там – то же яркое солнце, то же голубое небо, тот же, окутавший мир, безмятежный и животворный покой…

Весна…

## Ամառային տրտմություն

Ամռան արև… Կապուտակ ծով… Ոսկեզօծ ավազներ…

Հրաշալի եղանակ, երանելի ժամանակ, ներդաշնակ նյարդեր, անհոգ մտորումներ…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Ես՝ նստած ծովափին, տարված եմ հեռվում լողացող առագաստանավերով… Սակայն այս ամենն իմ հոգու վարագույրն է միայն… Եթե փորձես ետ տանել վարագույրն այդ, ապա… Ո՛չ, ավելի լավ է՝ հրաժարվես այդ մտքից, որովհետև այնտեղ՝ վարագույրի ետևում, իմ ամառային տրտմությունն է: Այնտեղ խոր աշուն է, տաղտկալի անձրև…

Այնտեղ անբուժելի թախիծ է, այնտեղ են իմ տխուր հիշողությունները…

Ամռան արև… Կապուտակ ծով… Ոսկեզօծ ավազներ…

Հրաշալի եղանակ, երանելի ժամանակ, ներդաշնակ նյարդեր, անհոգ մտորումներ…

Այնտեղ՝ վարագույրի ետևում, ես իմ հիշողությունից առանձնացնում եմ քո անունը և գրում եմ այն հրաշեկ ավազներին… Հանկարծ ողջ աշխարհը փոքրանում ու տեղավորվում է այդ մեկ հատիկ բառի՝ քո անվան մեջ: Ամռան արևը ջերմացնում է ավազները, իսկ ավազների հետ՝ այդ մեկ հատիկ բառի մեջ ներփակված ողջ աշխարհը… Ես ըմբոշխնում եմ քո անվան հետ իմ ռունգերին հասնող ջերմությունը…

Ամռան արև… Կապուտակ ծով… Ոսկեզօծ ավազներ…

Հրաշալի եղանակ, երանելի ժամանակ, ներդաշնակ նյարդեր, անհոգ մտորումներ…

Սա իմ հոգու վարագույրն է միայն… Թող միշտ փակ մնա այդ վարագույրը, որի ետևում իմ ամառային տրտմությունն է՝ լի տխուր հիշողություններով… Թող դու երբեք չտեսնես, թե ես ինչպես եմ քո անունը գրում ջերմ ավազներին ամեն օր՝ առավոտից մինչ երեկո… Թող դու երբեք չտեսնես, թե ինչպես է ալիքը ափ լողում, որպեսզի մեղմի ավազների հևքը բոց: Իսկ երբ ալիքը ետ է գլորվում, ավազների հետ միասին անզգուշորեն տանում է նաև քո անունը… Ես նորից քո անունն եմ գրում ավազներին, ալիքը դարձյալ իր գիրկն է առնում այն և գլորվում է ետ…

Ես ուզում եմ, որ դու տեսնես ամռան արև, կապուտակ ծով, ոսկեզօծ ավազներ… Ես ուզում եմ, որ քեզ համար միշտ լինի հրաշալի եղանակ, երանելի ժամանակ, որ նյարդերդ միշտ լինեն ներդաշնակ, մտորումներդ՝ անհոգ…

Ես ուզում եմ, որ դու երջանիկ լինես. իսկ դա կլինի միայն այն դեպքում, եթե իմ հոգու վարագույրը միշտ փակ մնա քեզ համար, որի ետևում իմ ամառային տրտմությունն է…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

## Летняя печаль

Летнее солнце… Синее море… Золотой песок…

Чудесная погода, блаженное время, гармония души, беззаботные мысли…

Я, сидя на берегу моря, увлечен далеко проплывающими парусниками… Но это всего лишь занавес моей души… Если ты вздумаешь открыть этот занавес, то… Нет, тебе лучше отказаться от этой мысли, потому что там, за занавесом, глубокая осень, нудный дождь… Там неизлечимая печаль, там мои грустные воспоминания, там моя летняя печаль…

Летнее солнце… Синее море… Золотой песок…Чудесная погода, блаженное время, гармония души, беззаботные мысли…

Там, за занавесом, я из своих воспоминаний вырываю твоё имя и пишу его на раскаленном песке, и вдруг весь мир становится маленьким и помещается в этом единственном слове – в твоём имени. Летнее солнце греет песок, и вместе с песком – весь мир, собранный в твоём имени… Я наслаждаюсь тем теплом, которое приходит ко мне вместе с твоим именем…

Летнее солнце… Синее море… Золотой песок…

Чудесная погода, блаженное время, гармония души, беззаботные мысли… Но это всего лишь занавес моей души…

Пусть всегда будет нависать этот занавес, за которым моя летняя печаль, полная грустных воспоминаний… Пусть ты никогда не увидишь, как я пишу твоё имя каждый день на горячем песке – с утра до вечера… Пусть ты никогда не увидишь, как катится на берег волна, чтобы охладить пыл горячих песков. А когда она возвращается назад, вместе с песком уносит в море и твоё имя…

Но я снова пишу его на песке, а волна обнимает и катится назад…

Я хочу, чтобы ты видела только летнее солнце, синее море, золотистые пески… Я хочу, чтобы вокруг тебя всегда была прекрасная погода, блаженное время, чтобы твои ощущения всегда были гармоничны, а мысли – беззаботны… Я хочу, чтобы ты была счастлива. А это будет лишь в том случае, если занавес моей души всегда будет закрыт для тебя… Занавес, за которым моя летняя печаль…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

# ԵՂԵՌՆ

# ГЕНОЦИД

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

# Ապրիլի 24-ը

1915 թվական, 24-ը ապրիլի…

Գարո՛ւն, գարո՛ւն էր իջել հայոց աշխարհին. ծաղիկ էր հագել ծիրանենին, կանաչով էին զուգվել դաշտ ու անտառ: Արագիլը հին բույնն էր նորոգում, առավակն ուրախ երգ էր քչքչում, երկինքը կապո՛ւյտ, կապո՛ւյտ էր այնքան, արևը պայծա՛ռ, պայծա՛ռ էր կրկին…

Հայ շինականը նորից վերցրել էր բահն ու բրիչը և հանապազօրյա իր հացն էր քամում հողից ու քարից: Նորից վերցրել էր մուրճն ու հատիչը և եկեղեցու սուրբ քարն էր տաշում, կամար էր կապում՝ կամար հավատի և ապագայի, կամար մեծ սիրո և երջանկության…

Սարերում նորից սրինգն էր երգում, նորից ծորում էր մեղեդին հայոց՝ ծիրանի փողից: Կյանքն ընթանում էր դարերի հունով, որ Հայաստան էր կոչվում ու Մասիս, որ «Հորովել» էր ու «Մոկաց Միրզա», որ սուրբ տաճար էր ու ժանյակ խաչքար…

1915 թվական, 24-ը ապրիլի…

Գարուն էր… Բայց ի՞նչ կատարվեց հանկարծ… Ձյուն մաղեց անամպ երկնքից, արյունով ներկվեց աշխարհը հայոց: Ձյուն տեղաց անպաշտպան գլխին այն ժողովրդի, որ հայ էր կոչվում… Սարեր ու ձորեր, գյուղեր, քաղաքներ, ամեն, ամեն տուն ցնցվեցին հանկարծ մարդկային մահաասարսուռ աղաղակներից՝ առ Աստված ուղղված անհույս աղոթքից, օգնություն աղերսող մեռնող ձայներից: Այդ ինչպե՞ս եղավ, որ ամայացա՛վ չքնաղ մի երկիր, որ սրի քաշվեց մի ո՛ղջ ժողովուրդ՝ համայն աշխարհի բաց աչքի առաջ… Մի ո՛ղջ ժողովուրդ, մի ազգի կե՛սը… Այդ ինչպե՞ս եղավ, որ թուրք ասկյարի յաթաղանն արյունոտ չխնայեց ո՛չ ծեր, ո՛չ մանուկ, ո՛չ կին՝ ո՛չ մեկին… «Ո՞ւր էիր, Աստվա՛ծ, երբ կոտորում էին մի ո՛ղջ ժողովուրդ»…

1915 թվական, 24-ը ապրիլի…

Գարո՛ւն ու Եղե՛ռն… Հայոց Մե՛ծ Եղեռն…

Սակայն մինչև ե՞րբ, դո՛ւ, հիշողությո՛ւն, պետք է այցի գաս ամեն մի հայի՝ ամեն գարնան հետ, մինչև ե՞րբ պետք է նորոգես ցավը, այդ սպիացած հին վերքի ցավը: Դո՛ւ, հիշողությո՛ւն, մինչև ե՞րբ պետք է հիշեցնես, որ կար մի հին ժողովուրդ՝ շինարար,

ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского»

արարող մի ազգ, որ կար դրախտ մի երկիր ու մի Արարատ՝ ազգի սրբություն և խորհրդանիշ, որ կար տաճարների քաղաք Անի, որ կային Վան ու Մուշ, Զեյթուն ու Սասուն, կային հանճարներ՝ Կոմիտա՛ս, Զոհրա՛պ, Սիամանթո՛, Վարուժա՛ն… Դո՛ւ, հիշողությո՛ւն, մինչև ե՞րբ պետք է հիշեցնես, որ ծաղկուն երկրից անապա՛տ մնաց, իսկ անապատում՝ հայերի գանգեր՝ սպիտակ բլուրներ… Իսկ նրանք, ովքեր հրաշքով մազապուրծ եղան, սփռվեցին աշխարհով մեկ, որպեսզի սերունդների բառապաշարը հարստանա ևս մեկ բառով՝ «սփյուռքով», Հայոց սփյուռքով… Դո՛ւ, հիշողությո՛ւն, մինչև ե՞րբ պետք է հայի շուրթերին տխուր երգ մնաս՝ պանդխտության երգ. «Քելե՛, լաո՛, քելե՛ էրթանք մըր էրգիր»…

1915 թվական, 24-ապրիլի…

Արդյոք հնարավո՞ր է ջնջել հայի հիշողությունից պատմության այս արյունոտ էջը՝ համոզել, ստիպել, սպառնալ՝ մոռանալ Եղեռնը, Հայոց Մե՛ծ Եղեռնը։ Կամ, արդյոք, պե՞տք է մոռանալ… Ինչո՞ւ մոռանալ, ինչպե՞ս մոռանալ։ Այո՛, ինչպե՞ս մոռանալ, երբ հիշողությունը դարձել է գեն՝ սերնդեսերունդ փոխանցելով քսաներորդ դարի ամենամեծ ոճիրներից մեկը։ Իսկ հանցագործը մինչև օրս չի ուզում ընդունել իր հանցանքը… Ո՛չ, պետք է հիշել և հիշեցնել բոլորին, որպեսզի այլևս երբեք չկրկնվի եղեռն կոչվածը աշխարհի ոչ մի անկյունում…

## 24-ое апреля…

1915 год, 24-ое апреля…

Весна опустилась на землю армянскую, расцвели абрикосовые деревья, украсились зеленью леса и поля. Аист обновил старое гнездо, ручеек зажурчал веселой песней… Небо стало голубее, а солнце – ярче…

Армянин снова лопатой и мотыгой «выжимал» свой хлеб из земли и камня. Своим молотом и резцом тесал святой церковный камень, арку сооружал – арку веры и будущего, арку любви и счастья…

В горах вновь свирель запела песню гор, опять полилась армянская мелодия из дудука. Жизнь проходила по вековым

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

колеям, что зовется Арменией и Масисом, «Оровелом» и «Нубар-Нубаром», храмом святым, кружевным хачкаром…

Была весна… Но что случилось вдруг?.. Почему снег пошел из безоблачного неба, кровью покрылась страна армян. Почему снег выпал на голову того народа, имя которому – армяне. Горы и ущелья, сады и поля, деревни и города, каждый дом вдруг потрясли человеческие вопли и безнадежные молитвы, умирающие, просящие помощи голоса. Как это случилось, что опустошалась целая страна, как это вырезали целый народ на виду всего мира?… Как это случилось, что турецкий ятаган не пощадил никого – ни старых, ни малых, ни женщин, никого… «Где ты был, Бог, когда уничтожался целый народ?».

Весна… Геноцид… Великий Геноцид армян…

А ты, память, до каких пор будешь напоминать, что был древний народ… Народ строящий, народ творящий… И была страна прекрасная с горой Арарат – святыней и символом нации… И был Ани – город храмов, были города Ван, Муш, Зейтун, Сасун… И были гении, сыны Армении – Комитас, Зограп, Сиаманто, Варужан…

Ты, память, до каких пор должна помнить, что от цветущей страны осталась пустыня, а в пустыне той – армянские черепа и кости, кости… А те, что чудом спаслись, рассыпались по всему миру, чтобы словарный запас потомков обогатился ещё одним словом – диаспорой, армянской диаспорой…

Ты, память, до каких пор должна оставаться на губах армянина грустной песней – песней скитальца: «Пойдем, сынок, пойдем в нашу страну»…

1915 год, 24-ое апреля…

Возможно ли стереть из памяти армянина эту кровавую страницу истории, возможно ли уговаривать, заставлять, угрожать армянину, чтобы он забыл Геноцид? А вообще, нужно ли забывать? Для чего забывать и как забывать? Да и как забыть, когда память стала геном, который передает из поколения в поколение одно из самых больших преступлений двадцатого века? А наследники преступника до сих пор не хо-

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

тят признавать своей вины… Нет, надо помнить и напоминать всем, чтобы больше никогда не повторилось такое ни в одном уголке мира…

## Հարթաքանդակի մոտ

Ապրիլի 24-ը…

Վաղ առավոտից մարդկանց անընդմեջ թափորը ձգվում է դեպի երևանյան բլուրներից մեկը՝ Ծիծեռնակաբերդ, դեպի 1915 թվականի Հայոց Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը… Բոլորի ձեռքին ծաղիկներ կան, որոնցից հուշարձանի անմար կրակի շուրջ ծաղկաբլուրներ են գոյանում…

Դեպի հուշարձան տանող արահետի կողքին սպիտակ մարմարից կերտված մի ոչ մեծ հարթաքանդակ կա, որի վրա պատկերված է Եղեռնի մահասարսուռ տեսարաններից մեկը… Անցորդները նրա շուրջ նույնպես ծաղիկներ են դնում, վրան՝ մոմեր վառում…

Այդ օրն էլ ծաղիկներ կային հարթաքանդակի մոտ, մի մեծ մոմ էր վառվում կողքին, սակայն տեսարանն այս անգամ անսովոր էր, որի «մեղավորը» ծեր կինն էր: Նա փոքրամարմին էր, նիհարավուն, սպիտակահեր: Սև զգեստ էր հագել, սև գլխաշոր կապել: Ծերությունը խոր ակոսներ էր թողել նրա դեմքին: Ձեռքին մի փունջ ծաղիկ կար՝ ալ կարմիր մեխակներ, որոնք էլ ավելի էին ընդգծում գույների հակադրությունը՝ միաժամանակ տխուր ամբողջություն կազմելով իրար հետ:

Ո՞վ էր այդ միայնակ ծեր կինը՝ ոչ ոք չգիտեր:

Մարդիկ մի պահ կանգ էին առնում այս տեսարանի առաջ, լուռ նայում և շարունակում էին իրենց ճանապարհը: Հետո անցորդներից մեկը պարզաբանեց. 1915-ին կորցրել է բոլոր հարազատներին՝ թվով տասներկու հոգի, սեփական աչքերով տեսել է, թե ինչպես են սրի քաշել ծնողներին, քույրերին ու եղբայրներին… Իսկ ինքը հրաշքով փրկվել է…

Արցունքներ հայտնվեցին նույնիսկ տղամարդկանց աչքերում… Իսկ ծեր կինը լուռ նստած էր հարթաքանդակի մոտ՝ ձեռքին մի փունջ ալ մեխակներ…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

## У барельефа

24-ое апреля…

С раннего утра начинается шествие к одному из ереванских холмов – к Цицернакаберду, памятнику жертв Геноцида… У всех на руках цветы, из которых возле вечного огня памятника образуются холмы…

По дороге к памятнику есть небольшая мраморная плита – барельеф, на котором изображен один из множественных ужасающих эпизодов Геноцида… На барельеф прохожие тоже возлагают цветы, ставят свечи…

В этот день на плите тоже были цветы, рядом горела одна большая свеча, но на этот раз зрелище было необычное, и «виновницей» этого была пожилая женщина, щупленькая, с седыми волосами. Она вся была в черном. Старость оставила глубокие борозды на её лице. В руках женщина держала букет цветов – алые гвоздики, которые дополняли её образ, составляя одно грустное целое. Кто эта старая женщина? Никто не знал об этом. Люди останавливались ненадолго возле неё, молча смотрели и продолжали свой путь. Потом один из прохожих пояснил: в 1915 году она потеряла всех родных – двенадцать человек, собственными глазами видела, как жестоко убивали родителей, братьев и сестер… Сама чудом спаслась…

Слёзы появлялись даже у мужчин… А пожилая женщина молча сидела у барельефа, держа в руках букет алых гвоздик…

## Ատելություն

Երբ ինձ հարցնում են, թե ինչու եմ ատում «թուրք» և «Թուրքիա» բառերն ու դրանց հետ կապված ամեն ինչ, ես պատասխանում եմ, որ այդ բառերն ատում էր իմ հայրը: Իսկ երբ ինձ հարցնում են, թե ինչու էր դրանք ատում իմ հայրը, ես հիշում եմ հորս պատմածը…

…Մինչև ատամները զինված՝ թուրք հեծյալների ջոկատն անսպասելի ներխուժեց գյուղ: Հանկարծակիի եկած՝



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

խուճապահար բնակիչներից ոմանք փորձեցին փախչել, մյուսները՝ թաքնվել իրենց տներում կամ գոմերում, հուսալով, որ կփրկվեն օսմանի արյունոտ յաթաղանից… Ավա՜ղ…

Մայրը հաց էր թխում թոնրում, երկու քույրերն օգնում էին նրան… Հայրը, որը վարպետ հյուսն էր, որոշել էր տան համար նոր դուռ սարքել և առավոտից փոքրիկ արհեստանոցում զբաղված էր իր մտահղացման իրագործմամբ: Տասը տարեկան Կորյունը (հայրս)՝ իր կաղ հորաքրոջ հետ միասին, բանջարանոցն էր ջրում…

Թուրքերի երևալուն պես՝ հորաքույրը հասցրեց Կորյունի հետ թաքնվել գոմում: Մահվան սարսափն աչքերում, նրանք երկուսով բակում կատարվող սպանդի ականատեսը դարձան…

Ընտանիքի մյուս անդամները չհասցրեցին ո՜չ փախչել, ո՜չ թաքնվել…

Թուրքերը բռնեցին և կապոտեցին բոլորին: Քույրերին և մորը՝ բռնաբարելուց հետո, նետեցին շիկացած թոնիրը և ողջ-ողջ այրեցին… Հորը գետին տապալեցին և իր իսկ սղոցով կտրեցին գլուխը…

Թուրքերը վաղուց էին հեռացել գյուղից՝ չխնայելով ոչ մեկին, սակայն հրաշքով փրկված հայրս ու նրա կաղ հորաքույրն՝ ավելի շուտ մեռած, քան կենդանի, կուչ էին եկել գոմի մի անկյունում և վախենում էին դուրս գալ իրենց թաքստոցից: Նրանց աչքերում դեռ մարդկային սպանդի սահմռկեցուցիչ տեսարանն էր, նրանց ականջներում դեռ հնչում էին հարազատների աղիողորմ ճիչերը… Եվ միայն մութն ընկնելուց հետո նրանք համարձակվեցին թողնել իրենց թաքստոցը և հեռանալ այս իրական դժոխքից…

Հայրս այս պատմությունը միշտ էլ սարսափով էր հիշում: Անցած տասնամյակներն այդպես էլ չկարողացան ամոքել վերքը, հիշողությունից ջնջել հարազատների կոտորածի հավերժ խարանված տեսարանը…

Տասնամյակների ընթացքում այս պատմությունը դարձավ նաև իմ «սեփականությունը»՝ տարեցտարի էլ ավելի շատ «նստվածք տալով» իմ հոգում, էլ ավելի ուժեղացրեց իմ ատելությունը: Որքան էլ ես փորձում եմ վանել այդ ատելությունն իմ սրտից, հիշողությունը համառորեն ինձ «հրամցնում է» այս պատմությունը, որը տասնամյակների ընթացքում արդեն դարձել է նաև իմ զավակների «սեփականությունը»…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

## Ненависть

Когда меня спрашивают, почему я ненавижу слова «турок», «Турция» и всё, что связано с этими словами, я объясняю: потому что их не любил мой отец. А когда спрашивают, почему их не любил мой отец, я рассказываю эту историю...

...Вооруженный до зубов отряд турок внезапно ворвался в деревню. Жители, которых застали врасплох, попытались бежать или спрятаться в домах, надеясь таким образом избежать турецкого кровавого ятагана... Увы...

...Мать в тонире пекла хлеб, сестры помогали ей... Отец, который был умелым столяром, решил смастерить новую дверь для дома... А десятилетний Корюн (мой отец) со своей хромой тетей поливал огород...

При появлении турок тетя успела с Корюном спрятаться в хлеву. Оттуда они с ужасом наблюдали, что творилось во дворе...

Остальные члены семьи не смогли ни убежать, ни спрятаться... Турецкие солдаты поймали и связали всех. После того, как изнасиловали мать и сестер, их бросили в горящий тонир и заживо сожгли... Отца свалили на землю и его же пилой отрезали ему голову...

Турки давно ушли, не пощадив никого из односельчан, а чудом спасшиеся Корюн и его хромая тётя, скорее мертвые, чем живые, съежились в углу хлева, боясь выйти из своего убежища. Перед их глазами все еще стояли картины человеческой бойни, в их ушах ещё звенели ужасающие вопли родных... И только с наступлением темноты они осмелились выйти из хлева и уйти подальше от этого настоящего ада...

Отец эту историю всегда рассказывал с ужасом. Прошедшие десятилетия так и не смогли залечить рану, стереть из памяти эту резню...

По истечении времени эта история стала и моей нравственной «собственностью», с каждым годом оставляя ещё больше «осадков» в моей душе, усиливая тем самым ненависть мою. И как бы я ни хотел подавить эту ненависть, память упрямо «угощает» мои сердце и ум этой историей, которая с годами становится «собственностью» уже моих детей...



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

# ԱՂՈԹՔ

# МОЛИТВА

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

# Աստղաթափ

Լուսաբացից առաջ աստղերը հրաժեշտ են տալիս միմյանց. նրանք մեղմ ճառագում են շողիկ-թեիկներով և արևի առաջին ճառագայթներից մարում են՝ հաջորդ երեկո անպատճառ հանդիպելու պայմանով: Նրանք չեն կարող չհանդիպել, որովհետև չեն կարող ապրել առանց մեկը մյուսի: Իսկ մինչ այդ ողջ գիշեր, նրանք անդադար զրուցո՛ւմ են, զրուցո՛ւմ…

Այն ցերեկային ժամերը, որոնք բաժանում են աստղերին, մի ողջ հավիտենություն են թվում նրանց: Իսկ երբ արևը հավաքում է իր ճառագայթները և մուշ-մուշ քուն է մտնում մոր գրկում, մութ երկնքում հայտնվում են գիշերային ճրագները, և նորից սկսվում է աստղային զրույցը: Դա նույնիսկ զրույց չէ, այլ տիեզերական մեղեդի, աստղային սիմֆոնիա՝ պայծառ ու անբիծ, ինչպես մանկան ժպիտը, ինչպես անեղծ բնությունը, ինչպես հավերժական սերը…

Ամեն աստղ իր զույգն ունի՝ իր ընկերը, այն հավատարիմ էակը, առանց որի անհնարին և անիմաստ է կյանքը տիեզերքում…

Սակայն աստղերն էլ հավերժ չեն… Եվ այնպես է պատահում, որ աստղերից մեկը հանկարծ ցոլում է մի պահ պայծա՛ռ-պայծա՛ռ և վայր է ընկնում… Մարում է մի ճրագ, որի բացակայությունը, կարծես թե, չի էլ զգացվում բյուրավոր աստղաբույլերում: Սակայն այդ աստղաբույլերում կա մի աստղ, որի համար իր ընկերոջ մահը հավասար է սեփական մահվան, որովհետև միլիարդների մեջ մարած աստղը նրա համար միակն է, անկրկնելին, անփոխարինելին… Ահա թե ինչու, երբ որևէ աստղ ցոլում է վերջին անգամ և գահավիժում, նրան իսկույն հետևում է մեկ ուրիշը՝ այն միակ աստղը, որը նկատել է ընկերոջ կորուստը, և որի համար նույնպես ավարտվել է տիեզերական կյանքը…

Այսպես է սկսվում աստղաթափը…

Իսկ մյուս աստղերի համար կյանքը շարունակվում է. շարունակվում է աստղային մեղեդին՝ պայծառ ու անբիծ, ինչպես մանկան ժպիտը, ինչպես անեղծ բնությունը, ինչպես հավերժական սերը…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

# Звездопад

Перед рассветом  звёзды прощаются друг с другом: они нежно мерцают своими лучами-крыльями и гаснут от первых лучей солнца, условившись встретиться в следующий вечер. Они не могут не встретиться, потому что не могут жить друг без друга. А до этого всю ночь они беседуют, беседуют…

Те дневные часы, которые разделяют звезды, им кажутся вечностью. А когда солнце собирает свои лучи и сладко засыпает в объятиях своей матери, на тёмном небе снова появляются лампады, и возобновляется звёздная беседа. Это даже не беседа, это космическая мелодия, звёздная симфония – яркая и чистая, как детская улыбка, как непорочная природа, как вечная любовь…

Каждая звезда имеет своего друга – то верное существо, без которого невозможна жизнь во Вселенной…

Но, увы, звёзды тоже не вечны… И случается так, что какая-нибудь из звезд, ярко сверкнув на небосклоне, падает вниз… Гаснет одна лампада, уход которой кажется незаметным среди миллиардов звёзд. Но в этих миллиардах есть одна звезда, для которой смерть друга равна собственной смерти, потому что та, уже погасшая звезда – единственная, неповторимая и незаменимая. Вот почему, когда какая-то звезда, сверкнув в последний раз, падает вниз, за ней сразу следует другая звезда, та единственная, которая заметила смерть друга и для которой жизнь во Вселенной тоже закончилась… И начинается звездопад…

А для других звёзд жизнь продолжается, продолжается звёздная симфония – яркая и чистая, как детская улыбка, как непорочная природа, как вечная любовь…

# Վերջին նամակը

Իմ վերջին նամակը ես գրում էի ամեն օր՝ սկսած այն օրից, երբ գրեցի առաջին նամակը։ Մի տանջող միտք՝ նման որդի, անընդհատ կրծում էր ուղեղս, թունավորում էր

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

տրամադրությունս, մռայլում էր երջանկությունս: Մի մաշող ցավ՝ միշտ կանգնած կողքիս, անվերջ կրկնում էր՝ Ո՜ւՇ է, Ո՜ւՇ է… Ես փորձում էի արհամարհել, անտեսել նրան, երբեմն էլ՝ հերքել (միամի՜տ մարդ), այսինքն՝ հույսը դեռ առկայծում էր ինչ-որ տեղ՝ հեռվում… Իսկ ես՝ այդ փոքրիկ հույսից ոգևորված, պատռում էի վերջին նամակը, որպեսզի մեկ վայրկյան անց նորից սկսեմ գրել…

Այսպես անցնում էին օրերն ու ամիսները, իսկ առանց այդ էլ չնչին հույսը՝ շագրենու կաշվի նման, օրեցօր փոքրանում էր, դառնում էր աննշմարելի… Մի օր էլ նկատեցի, որ այն ամբողջովին անհայտացել է՝ ՉԿԱ՜… Սակայն նույնիսկ այդ ժամանակ ես պատռեցի հերթական վերջին նամակը, որպեսզի նորը գրեմ: Չգիտեմ՝ ինչու…

Այստեղ պետք է մի փոքրիկ լիրիկական շեղում կատարել, հիշել ոչ այնքան հեռավոր անցյալը՝ հետ գնալ ընդամենը մի երկու տարի, որպեսզի ինչ-որ բան հնարավոր լինի մեկնաբանել…

Նրա երկրորդ՝ անսպասելի հայտնությունը տակնուվրա արեց իմ մեջ այն ամենն, ինչ հնարավոր էր տակնուվրա անել: Ես մի ցատկով հաղթահարեցի մի քանի տասնամյակ և հասկացա, որ ողջ կյանքում միայն նրան եմ սիրել, միայն նրան եմ սպասել, միայն նրան եմ երազել, որ մնացած բոլոր «սերերը» եղել են անցողիկ ու համարյա թե հետք չեն թողել իմ հոգում: Ես դրանք մոռացել եմ այնպես հեշտ, ինչպես մոռանում են սովորական գլխացավը կամ օրվա հոգնածությունը: Վերջապես հասկացա, որ միայն նրան չեմ մոռացել, որ ամենուր, ամեն վայրկյան նրան եմ փնտրել այսքան տարի: Միգուցե, սա՞ է սերը: Չգիտե՜մ… Միայն գիտեմ, որ երջանիկ էի նրա երջանկությամբ և տխուր նրա թախծով, ապրում էի նրա գոյությամբ, աղոթում էի նրա համար, աշխարհի տերն էի՝ նրա հեռավոր և ուշացած սիրով… ՆՐԱ ՈւՇԱՑԱ՜Ծ ՍԻՐՈՎ, որն ավելի էր թեժացնում իմ սերը, դարձնում ինձ ամենաերջանիկ և, միևնույն ժամանակ, ամենադժբախտ մարդն աշխարհում…

ԻՍԿ ՆՐԱ ՍԵՐԸ ՇԱ՜Տ ԷՐ ՈւՇԱՑԵԼ…

Վերջին նամակը մնում է… վերջին նամակ… Բայց ինչպե՞ս ավարտել այդ վերջին նամակը, որպեսզի ամեն ինչ լինի տրամաբանական և ամբողջական, ավարտուն և համապարփակ,

ГАУ РТ «Медиацентр им. И. Гаспринского»

ապակու նման պարզ ու թափանցիկ, որ երբ այն ավարտվի, հարցեր չառաջանան: Մի՞թե հնարավոր է նման նամակ գրել: Որքան էլ գրես ու բացատրես, միևնույն է, մութ կետեր կմնան, որոնց լուսաբանման համար պետք է ևս մեկ վերջին նամակ գրել… Ուրեմն ի՞նչ, ավարտել նամակն ու վե՞րջ տալ անօգուտ աշխատանքին, թող մնացածն ավարտի երևակայությո՞ւնը… Միգուցե, ճիշտը դա է…

## Последнее письмо

Моё последнее письмо я начал писать с того дня, как написал первое. Одна мучительная мысль, как червь, всё время грызла мой мозг, отравляла настроение, омрачала счастье. Изнуряющая боль, которая всегда стояла рядом, бесконечно повторяла: ПОЗДНО, ПОЗДНО! Я пытался игнорировать, а иногда опровергать её (наивный человек!), то есть надежда ещё тлела где-то в глубине. А я, воодушевлённый этой крошечной надеждой, рвал последнее письмо, чтобы секунду спустя начать новое…

Так проходили дни и месяцы, а крошечная надежда, как шагреневая кожа, с каждым днём становилась всё меньше, почти незаметной. В один прекрасный день я понял, что надежда исчезла – её НЕТ! Но даже тогда я разорвал последнее письмо, не зная почему…

Это было два года назад…

ЕЁ второе неожиданное появление в моей жизни перевернуло во мне всё, что можно было перевернуть. Я одним прыжком преодолел несколько десятков лет и наконец-то понял, что всю жизнь любил только ЕЁ, только ЕЁ я ждал, только о ней мечтал. Я понял, что другая «любовь» была мимолётной и почти ничего не оставила в моей душе. Я эту «любовь» забыл так легко, как забывают обычную головную боль или усталость. Я понял, что только ЕЁ не забыл, что везде искал только ЕЁ все эти годы. Может быть, это и есть любовь? Не знаю. Только знаю, что был счастлив ЕЁ счастьем, жил тем,



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

что она есть, жил ЕЁ запоздалой любовью... ЕЁ ЗАПОЗДАЛОЙ ЛЮБОВЬЮ, которая ещё больше обостряла мою. Она делала меня самым счастливым человеком в мире и одновременно самым несчастным, потому что ЕЁ ЛЮБОВЬ ОЧЕНЬ ОПОЗДАЛА... В этом случае поговорка «Лучше поздно, чем никогда» становится бессмысленной, пустым выстрелом...

Последнее письмо... оно и есть последнее. Но как написать его, чтобы всё было логичным и целостным, законченным и всеобъемлющим, простым и прозрачным, как стекло, чтобы, когда оно закончится, не возникло вопросов. Разве можно написать такое письмо? Как бы ни писал и ни объяснял, всё равно останутся тёмные пятна, для освещения которых нужно написать ещё одно последнее письмо. Какой вывод? Закончить письмо и всё... Остальное пусть завершит фантазия адресата? Может быть, это правильно... Значит, конец... последнему письму...

## Մենություն

Կապույտը պայծա՛ռ էր, պայծա՛ռ... Սակայն աստիճանաբար խամրում էր այն, որովհետև մարում էր Նարնջագույնը՝ Կապույտի սրտում փթթած արևը: Մարում էր ու վերածվում մի շատ փոքրիկ կայծի՝ ստեպ-ստեպ առկայծելով խամրող Կապույտի խորքում...

Սևը քուլա-քուլա օղակում էր Սպիտակաթույր Ծաղիկները՝ ստիպելով նրանց նահանջել դեպի սեփական ընդերքը: Սպիտակաթույր Ծաղիկները դիմադրում էին, սակայն նրանք շատ քիչ էին և շատ նուրբ, որպեսզի կարողանային դիմադրել հսկա Սև քուլաներին...

Այսպես Նարնջագույնը մնում էր միայնակ՝ շրջապատված խամրած Կապույտով: Մենությունը նրան տանջում էր, սակայն նա ավելի շատ վշտանում էր՝ հեռվում, ինչ-որ տեղ Սև քուլաներով շրջապատված Սպիտակաթույր Ծաղիկներին և իրեն բաժանող դատարկ տարածության առկայությունից: Այդ տարածությունը երբեք չէր կրճատվում, չէր փոքրանում, հետևաբար, Սպիտակաթույր Ծաղիկները երբեք չէին մոտենում.

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

հենց այդ պատճառով էլ Նարնջագույնն իրեն ավելի շատ էր միայնակ զգում:

Այս մենությունը տևում էր օրեր ու ամիսներ, որոնք ձգվում ու վերածվում էին տարիների: Իհարկե, երբեմն՝ շատ կարճ ժամանակով, Կապույտը դարձյալ դառնում էր պայծառ, Նարնջագույնը բոցավառվում էր նոր ուժով՝ վերածվելով մեծ ու ջերմ արևի: Որքան շատ էր հուրհրում Նարնջագույնը, այնքան ավելի շատ էր պայծառանում Կապույտը՝ դառնում էր կուրացնելու աստիճան շլացուցիչ… Ահա այդ պահերին էր Սպիտակն աճում, խոշորանում: Տարածությունն իսկույն կրճատվում էր, լցվում էր Սպիտակաթույր Ծաղիկներով, պայծա՛ռ-պայծա՛ռ Կապույտով և ջերմ Նարնջագույնով: Եռագույնը՝ պայծառ, շլացուցիչ և ջերմ, իշխում էր ամենուր… Սևի հետքն անգամ չէր երևում. այն տպավորությունն էր ստեղծվում, թե միշտ այդպես է եղել…

Որքան անսպասելի ու հանկարծակի հայտնվում էր գույների այս զգլխիչ խաղը, նույնքան էլ վայրկենական ավարտվում էր այն, և ամեն ինչ իր տեղն էր ընկնում, որովհետև միշտ այդպես է եղել, իսկ այն, ինչ տեսել էր Նարնջագույնը, ընդամենը խաբկանք էր եղել… Նարնջագույնը դարձյալ միայնակ էր՝ շրջապատված խամրած Կապույտով: Նա առաջվա պես վշտանում էր, որ դատարկ տարածությունը բաժանում է իրեն ու Սպիտակաթույր Ծաղիկներին: Նրան դարձյալ տանջում էր մենությունը՝ հավերժ մենությունը…

## Одиночество

Синий был ослепительно ярким… Но он постепенно тускнел, потому что угасал Оранжевый – солнце, расцветавшее в сердце Синего. Оно угасало и превращалось в искорку, время от времени мерцая в глубине тускневшего Синего…

Чёрный клубами окружал Белоснежные цветы, вынуждая их отступать в собственные недра. Белоснежные цветы сопротивлялись, но их было мало, и они были очень нежны, чтобы оказать серьёзное сопротивление огромным Чёрным клубкам…

Таким образом Оранжевый оставался один, окруженный потускневшим Синим. Он страдал от одиночества, но его больше

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

всего печалило присутствие пустого пространства между собой и Белоснежными цветами, окружёнными Черными клубками. Это пустое пространство никогда не сокращалось и не уменьшалось, поэтому Белоснежные цветы никогда не приближались, от чего Оранжевый ещё больше чувствовал себя одиноким.

Это одиночество длилось дни, месяцы, которые превращались в годы. Конечно, иногда, на очень короткое время, Синий становился ослепительно ярким, Оранжевый воспламенялся с новой силой, превращаясь в огромное солнце. Чем больше пылал Оранжевый, тем ярче сиял Синий, становясь ослепительно ярким. Вот в такие моменты Белый становился огромным… Пространство моментально сокращалось и наполнялось Белоснежными цветами, ярким Синим и горячим Оранжевым. Яркая, ослепительная и горячая тройка цветов властвовала повсюду, от Черного не оставалось и следа. Создавалось такое впечатление, что так было всегда…

Чарующая игра цветов, появлявшаяся внезапно и нежданно, таким же образом исчезала, и всё становилось на свои места, потому что так было всегда. А то, что видел Оранжевый, был всего лишь мираж… Оранжевый, как и прежде, был одиноким, окруженный потускневшим Синим. Он снова был грустным от того пустого пространства, которое отделяло его от Белоснежных цветов. Его опять мучило одиночество, вечное одиночество…

## Խոստովանություն

Դեռ չի հայտնագործվել չափման այն միավորը, որով հնարավոր է չափել իմ սիրո մեծությունը…

Աշխարհի ոչ մի լեզու չունի այն բառերը, որոնցով հնարավոր է նկարագրել իմ սիրո վեհությունը…

Դեռ չի ստեղծվել այն զենքը, որով հնարավոր է սպանել իմ սերը…

Դեռ չի ծնվել այն կինը, որը կարող է ինձ այդպես սիրել…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

## Признание

Ещё не изобрели ту единицу измерения, которой можно измерить мою любовь к тебе, радость моя…

Ни один язык в мире не имеет тех слов, которыми возможно описать всю величественность моей любви…

Ещё не создано такое оружие, которым можно убить мою любовь…

Ещё не родилась та женщина, которая может так меня любить…

## Աղոթք

Ես դանդաղ մարում եմ առանց քեզ՝
Սիրում եմ, հիշում, տառապում…
Մորմոքված շուրթերս մշտապես
Մենության աղոթքն են շշնջում…

Ես պետք է ուժե՛ղ, շա՛տ ուժեղ լինեմ, պետք է դիմանա՛մ ցավին, դիմանա՛մ, սակայն քեզ ինչպե՞ս, ինչպե՞ս մոռանամ…

Ես քեզ սիրում եմ, ես քեզ սիրում եմ… Սա արդեն սեր չէ՝ ես քեզ պաշտում եմ… Պաշտում եմ՝ ինչպես չի պաշտել երբեք ոչ մի հեթանոս իր բագիներին…

Թո՛ղ աստվածուհիս լինի երջանիկ՝ պատրաստ եմ զոհել երջանկությունս… Պատրաստ եմ նաև զոհել իմ կյանքը, միայն թե՛ սերս երջանիկ լինի: Իսկ դրա համար… ես պետք է ուժե՛ղ, շա՛տ ուժեղ լինեմ, պետք է դիմանա՛մ ցավին, դիմանա՛մ, սակայն քեզ ինչպե՞ս, ինչպե՞ս մոռանամ…

Իմ երգը՝ ծնված ցավից ու ցավով, իմ երգը՝ թրծված ծովցավերի մեջ, շաղախված ցավով, հնչում է ցավով…

Ես պետք է այրեմ վերջին կամուրջը, ես պետք է խզեմ ամեն, ամեն կապ, ես պետք է ջնջեմ անցյալ ու ներկա, պետք է մոռանամ, որ ապագա կա, ես պետք է… սակայն, սակայն քեզ ինչպե՞ս, ինչպե՞ս մոռանամ…

Հիշողությունը անջատիչ չունի, հիշողությունը կարող է մեռնել լոկ իր տիրոջ հետ…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Մտքեր խառնիխուռն, կույր խարխափումներ, անհասկանալի՝ ճիշտն ու սխալը։ Չգիտեմ՝ ինչի՞ց, ինչի՞ց սկսել, չգիտեմ՝ ինչպե՞ս, ինչպե՞ս ավարտել…

Ատրճանակի փողը՝ քունքիս մոտ… Բայց քաջությո՛ւնս… դարձյալ չի ներում… Անտանելի է դարձել ապրելը, կյանքը՝ անիմաստ, սերը՝ պաշտամունք, սիրելին՝ անհաս մի աստվածուհի…

Ալեբախությո՛ւն, իննե՛րորդ ալիք… Սա արդեն սեր չէ, սա պաշտամունք է՝ երկրպագություն հավատացյալի, որ չի հանդուրժում և չի ճանաչում ո՛չ չափ, ո՛չ սահման։ Իսկ որտե՞ղ է այն սահմանը, որտե՞ղ, որից հետո սերն աստիճանաբար մարում է անձայն…

Եվ կրկին՝ նոպա, և կրկին՝ քունքիս սև ատրճանակ, և կրակոցը խավարն է ճեղքում կեսգիշերային, իսկ լռությունը զնգում է սև-մութ գիշերվա սրտում, ձգվում է, ծորում, դառնում է կպչուն, դառնում՝ հեղձուցիչ…

Քահանա՛, դու ինձ էլ մի վախեցրու գալիք դժոխքով, չարչարանքներով, ես արդեն վաղուց այս դժոխքում եմ՝ կյանքս դժոխք է, ավելին՝ էլ ի՞նչ… Միայն չգիտեմ, թե որտեղ է իմ սև քավարանը, մեկ էլ չգիտեմ, թե ինչպե՞ս, ինչպե՞ս մեղքերս քավեմ…

Լուսանկարներ՝ մակագրություն՝ «Իմ ամուսի՛նը… Ի՛նչ երջանկություն…»։ Սպասի՛ր, իսկ ե՞ս… Ես պետք է ուժե՛ղ, շա՛տ ուժեղ լինեմ, պետք է դիմանա՛մ ցավին, դիմանա՛մ, սակայն քեզ ինչպե՞ս, ինչպե՞ս մոռանամ…

Այնպես ուզում եմ՝ աշխարհին իմանա, որ սիրում եմ քեզ, այնպես ուզում եմ քեզ ասել կրկին (որերորդ անգամ), որ սիրում եմ քեզ… Բայց ինչպե՞ս ասել, երբ արգելված է այդ մասին նույնիսկ, նույնիսկ… մտածե՛լ…

Քեզ կարոտո՛ւմ եմ, քեզ կարոտո՛ւմ եմ, քեզ կարոտո՛ւմ եմ…

Ես պետք է ուժե՛ղ, շա՛տ ուժեղ լինեմ, պետք է դիմանա՛մ ցավին, դիմանա՛մ, սակայն քեզ ինչպե՞ս, ինչպե՞ս մոռանամ…

Այս ի՞նչ կրակ էր, ինչպե՞ս վառեցիր, իմ տանջված հոգին ի՞նչ ես խորովում… Օրը բացվում է՝ քեզնով եմ տարված, գիշերն է իջնում՝ դու կողքիս կանգնած… Ամենուր դու ես՝ ամեն բառի մեջ, ամեն հնչյունում, ամեն երգի մեջ քո ձայնն եմ լսում… Ես

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

մոռացել եմ իմ օրն ու ժամը, ես անհաղորդ եմ իմ շուրջբոլորը եռացող կյանքին, միայն հին երգն է պապակ շուրթերիս…

Ես ավելորդ եմ՝ մենակ ու լքված, և… հանցագործ եմ. համարձակվեցի ուրիշի գանձը իմը համարել, սուրբ ընտանիքի սերը պղտորել… Ես հանցագործ եմ, նաև՝ դատավոր և անսիրտ դահիճ: Դատավճիռը ես եմ կայացնում՝ ի կատար ածում՝ այրում եմ բոլոր կամուրջները ես, որ այդ բոցերում ես նույնպես այրվեմ ու մոխիր դառնամ…

Ես իմ պատիժը կրում եմ անձայն. այնպե՛ս ուզում եմ ցավից մռնչալ…

Ես պետք է ուժե՛ղ, շա՛տ ուժեղ լինեմ, պետք է դիմանա՛մ ցավին, դիմանա՛մ, սակայն քեզ ինչպե՞ս, ինչպե՞ս մոռանամ…

Եվ վանկարկում է ամբոխը դաժան. «Արժանի՛ պատիժ՝ հանցանքի դիմաց»: Արժանի՛ պատիժ… Բայց ձե՛ր ինչ գործն է… Դուք չեք հասկանում՝ ինչ բան է պաշտել մի սուրբ էակի: Դուք դատապարտել գիտեք՝ քարկոծել, ոտնակոխ անել, հրեշ համարել, հացագործ կոչել: Բայց եթե մի պահ իմ տեղը լինեք… Չէ՛, ի՛նչ եմ ասում, պետք չէ իմ տեղը լինել, այլապես դուք էլ կկոչվեք հանցագործ, այնժամ… Ո՛չ, պե՛տք չէ, պե՛տք չէ իմ տեղը լինել…

Ես քեզ սիրում եմ, ես քեզ սիրում եմ… Սա արդեն սեր չէ՝ ես քեզ պաշտում եմ… Պաշտում եմ՝ ինչպես չի պաշտել երբեք ոչ մի հեթանոս իր բագիներին…

Թո՛ղ աստվածուհիս լինի երջանիկ՝ պատրաստ եմ զոհել երջանկությունս… Պատրաստ եմ նաև զոհել իմ կյանքը, միայն թե՛ սերս երջանիկ լինի: Իսկ դրա համար… ես պետք է ուժե՛ղ, շա՛տ ուժեղ լինեմ, պետք է դիմանա՛մ ցավին, դիմանա՛մ, սակայն քեզ ինչպե՞ս, ինչպե՞ս մոռանամ…

Իմ երգը՝ ծնված ցավից ու ցավով, իմ երգը՝ թրծված ծովցավերի մեջ, շաղախված ցավով, հնչում է ցավով…

Ես պետք է ուժե՛ղ, շա՛տ ուժեղ լինեմ, պետք է դիմանա՛մ ցավին, դիմանա՛մ, սակայն քեզ ինչպե՞ս, ինչպե՞ս մոռանամ…

ГАУ РТ "Медиацентр им. И. Гаспринского"

## Молитва

Я молча угасаю без тебя:
Люблю и страдаю от любви.
Шепчу я с печалью на губах
Горького одиночества молитвы…

Я должен быть очень сильным, я должен терпеть эту боль. Но как мне забыть тебя навсегда?

Я люблю тебя, тебя я люблю… Это уже не любовь – я обожаю,  обожествляю тебя так, как не почитал никогда ни один язычник своих богов…

Пусть богиня моя будет счастливой – готов я пожертвовать своим счастьем… Готов я также пожертвовать собственной жизнью, лишь бы ты, любовь моя, была счастлива. А для этого… я должен быть сильным, очень сильным, я должен терпеть эту боль, терпеть, но как мне забыть тебя навсегда?

Моя песня, которая родилась из боли и с болью, моя песня, обожженная в море боли и замесившаяся болью, звучит больно…

Я должен сжечь последний мост, разорвать всякую связь, стереть прошлое и настоящее, забыть, что есть будущее, я должен… Но как мне забыть тебя навсегда?

У памяти нет выключателя, память умирает лишь со своим хозяином…

Беспорядочные мысли, слепые блуждания, непонятно, где правда, а где – ложь? Я не знаю с чего начать и чем закончить?

Возле моего виска – дуло пистолета, но опять не хватает смелости… Жить стало невыносимо тяжело, жизнь – бессмысленна… Любовь – обоготворение,  любимая – недосягаемая богиня…

Волны бьются о скалы… девятый вал… буря… Нет, это уже не любовь, это – обоготворение, поклонение верующего, который не знает  ни меры, ни границ! А где та граница, после чего любовь умирает молча?

И опять – приступ, и опять – черный пистолет возле моего виска… и выстрел пронзает полуночную тишину, а тишина звенит в сердце тёмной ночи, тянется, сочится, становится липкой и удушливой…

Священник, не пугай меня предстоящим адом и муками. Я уже давно в аду – жизнь моя и есть ад, куда уж больше! Только  не



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

знаю, где моё чистилище, и ещё не знаю, чем искупить свою вину?

Фотография и подпись: «Мой муж, какое это счастье!»… Погоди, а я?.. Я должен быть очень сильным, терпеть эту боль. Но как мне забыть тебя навсегда?

Хочу закричать, чтобы весь мир узнал: я люблю тебя, так хочу тебе сказать опять (уже который раз), что люблю тебя… Но как сказать, когда запрещено мне об этом даже… думать…

Меня мучает невыносимая тоска по тебе…

Что за огонь, словно костер, разжёг мою растерзанную душу, за что? Наступает день – тобой я заворожен, опускается ночь – ты опять со мной. Ты везде, в каждом слове, каждом звуке, каждой песне я слышу твой голос… Я забыл мой день и мой час, я безразличен ко всему, что творится вокруг меня, только старая песня на моих жаждущих губах…

Я лишний, одинокий и покинутый, я… ещё и преступник. Осмелел чужой клад своим считать, осквернил любовь святой семьи. Я – преступник, одновременно – судья и палач. Сам приговариваю, сам исполняю – жгу все мосты, чтобы в этом огне самому сгореть и превратиться в пепел…

Своё наказание несу я молча… о, как хочу кричать от боли!

А жестокая толпа скандирует: «Заслуженное наказание за преступление!» Заслуженное наказание! Но какое ваше дело? Вы не понимаете, что такое любить святую. Вы лишь умеете камнями бросать, затоптать под ногами, обозвать чудовищем и преступником. Но если бы хоть на миг были бы на моём месте! О нет, не нужно быть на моём месте, а то и вас назовут преступником!

Я люблю тебя, тебя я люблю… Это уже не любовь – я обожаю, обожествляю тебя так, как не почитал никогда ни один язычник своих богов…

Пусть богиня моя будет счастливой – готов я пожертвовать своим счастьем… Готов я также пожертвовать собственной жизнью, лишь бы любовь моя была счастлива. А для этого… я должен быть очень сильным, терпеть эту боль. Но как мне забыть тебя навсегда?

Моя песня, которая родилась из боли и с болью, моя песня, обожженная в море боли и замесившаяся болью, звучит больно…

Я должен быть очень сильным, терпеть эту боль. Но как мне забыть тебя навсегда?

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

# ԱՄԱՆՈՐ

# НОВЫЙ ГОД

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

# ՆՆՏ կամ «Նոր» Նոր տարի

Այո՛, բարեկամնե՛ր, վերջապես երկարատև (մեկ տարի) և անհամբեր (համբերատար) սպասումից հետո եկավ «Նոր» Նոր տարին (այսուհետ՝ ՆՆՏ): Ի դեպ, չմոռանանք, որ կա նաև «Հին» Նոր տարի (այսուհետ՝ ՀՆՏ), որին դեռ կանդրադառնանք: Եվ այսպես, եկավ ՆՆՏ-ն, որին, առանց բացառության, «անհամբեր համբերատարությամբ» սպասում էին բոլորը՝ հարուստն ու աղքատը, երջանիկն ու դժբախտը, հաջողակն ու ձախորդը, մի խոսքով՝ ողջ մարդկությունը, քանզի բոլորն էլ ինչ-որ ակնկալիքներ ունեն ՆՆՏ-ից և հուսով են, որ ՆՆՏ-ի գալուստը կբերի նոր երջանկություն, նոր առողջություն, նոր հարստություն, նոր երիտասարդություն... Ներեցե՛ք, այստեղ արդեն սխալվեցինք. ցավո՛ք, երիտասարդությունը մարդուն տրվում է մեկ անգամ, և եթե մի փոքր խմբագրենք Նիկոլայ Օստրովսկու հայտնի խոսքերը, ապա կարելի է ասել, որ երիտասարդությունը «...պետք է ապրել այնպես...», դե՛, շարունակությունը դուք լավ գիտեք (եթե, պատահաբար, չգիտեք, ապա մեր խորհուրդն է՝ գի՛րք կարդացեք):

Չնայած դեռ մեկ օր էլ չի անցել ՆՆՏ-ից (այս տողերը գրում ենք հունվարի մեկին, կեսօրից հետո, երբ մեր ուղեղը քիչ թե շատ աշխատում է), սակայն մենք համոզված ենք, որ հիմնական բաժակաճառերն արդեն ասված են, ալկոհոլային (հիմնականում) և ոչ միայն այդպիսին (որպես լրացում) հեղուկների գետեր են հոսել մարդկանց ստամոքսները (թող չվիրավորվեն նրանք, ովքեր ծովեր և օվկիանոսներ են խմել, և մեկ էլ նրանք, ովքեր ցամաքած աղբյուրի են հանդիպել. կյանք է, ամեն ինչ էլ կպատահի): Մենք կարծում ենք, որ ամանորյա ճոխ կամ էլ ոչ այնքան ճոխ (այդպես էլ է պատահում) սեղաններից դեռ ինչ-որ բան մնացել է, որ դեռ շարունակում են զրնգալ բաժակները (իսկ ոմանց՝ գլուխները), որ դեռ մենք շարունակում ենք ծանրացնել և գերհագեցնել մեր, առանց այդ էլ, սպիտակուցներով, ճարպերով ու զանազան հեղուկներով լի ստամոքսները: Այլ կերպ ասած, ոմանց համար տոնական խրախճանքը շարունակվում է ամբողջ թափով և որոշ կարճ կամ երկար ընդմիջումներով կշարունակվի մինչև Հին կամ լավ մոռացված Նոր տարի: Ուրեմն, ապրե՛նք մինչև ՀՆՏ:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

## ННГ или «Новый» Новый год

Да, друзья, наконец-то это случилось! После долгих ожиданий (длиной в целый год!) наступил «Новый» Новый год (в дальнейшем – ННГ). Кстати, давайте не забывать, что есть и так называемый «Старый» Новый год (в дальнейшем – СНГ). Итак, наступил ННГ, которого с нетерпением ждут все: стар и млад, богач и бедняк, счастливый и несчастный, удачник и неудачник, словом, всё человечество. Все ждут чего-то от ННГ и надеются, что он принесёт новое счастье, новое здоровье, новое богатство, новую молодость… о, извините, тут я ошибаюсь! К сожалению, молодость дается раз в жизни, и если чуть перефразировать знаменитые слова Николая Островского, то можно сказать, что молодость «…надо прожить так…», ну а дальше сами знаете.

Да, ННГ… И хотя дня не прошло от ННГ, но мы уверены, что все главные тосты уже произнесены… Алкогольные (в основном) и неалкогольные (в качестве дополнения) реки потекли в желудки людей. Пусть не обижаются те, кто пил моря и океаны, а также те, кто наткнулся на засохший родник. Мы так же думаем, что от ННГ пышных и не очень богатых столов ещё что-то осталось и что ещё продолжают звенеть фужеры (а у кого-то голова). Все ещё продолжают, без малейшей жалости, грузить и перегружать белками и жирами и без того полные желудки. Иначе говоря, для всех нас (почти для всех) праздничный пир продолжается со всей силой и с несколькими короткими и длинными перерывами дойдет и до СНГ. Значит, доживем до СНГ!

## ՀՆՏ կամ «Հին» Նոր տարի

Այսօր հունվարի տասներեքն է, այսինքն՝ դարձյալ Նոր տարի է (հիմա էլ՝ հին տոմարով), իսկ ավելի ստույգ՝ «Հին» Նոր տարի (այսուհետ՝ ՀՆՏ)։ Ուրեմն, դարձյալ տոն է, ուրախանալու, քեֆ անելու, մեկ անգամ ևս լավ ուտելու և խմելու հրաշալի առիթ, որը, մեր խորին համոզմամբ, բաց չեն թողնի հատկապես «հրո ջրի» թունդ սիրահարներն ու շատակերները…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Դեռ չէինք հասցրել, ինչպես հարկն է, սթափվել Նոր տարվա և Ծննդյան տոների առատ սեղաններից առաջացած ստամոքսի և գլխի ցավերից: Վերջապես ցանկություն էր առաջացել՝ ստիպել մեզ՝ մտնելու աշխատանքային նորմալ հունի մեջ, որպեսզի նոր ուժ հավաքենք, իսկ որ ամենակարևորն է, նոր դրամական միջոցներ հայթայթենք (հասկանալի է, որ ո՛չ ուժը, ո՛չ էլ փողը փողոցում թափված չեն. ձեր հույսը դրեք Աստծո վրա, սակայն՝ ինքներդ էլ անգործ մի նստեք), երբ վրա հասավ ևս մեկ տոն՝ ՀՆՏ-ն: Այնպես որ, ուզենք, թե չուզենք, պետք է մեկ-երկու օր էլ տրամադրենք շնորհավորանքներին, բաժակաճառերին, բարեմաղթանքներին: Պետք է համոզենք մեր ստամոքսներին ու գլուխներին, որ սա վերջին տոնն է... հունվարին, որ տոնական օրերի հաստատման և պարտադիր անցկացման գործում մենք ոչ մի մեղք չունենք: Միակ «մեղավորը» պետությունն է, և մենք այս հրաշալի և ուրախ պետությունից դժգոհելու կամ, առավել ևս, այն (այսինքն՝ պետությունը) թավշյա, հոկտեմբերյան, փետրվարյան, նարնջագույն կամ այլ գույնի հեղափոխություններով կործանելու և նորն ստեղծելու միտք անգամ չունենք: Չունենք, որովհետև աշխարհում մենք չգիտենք մեկ ուրիշ այսպիսի պետություն, որտեղ քեֆ անելու այսքան շատ առիթներ լինեն: Մենք միայն մի շատ անմեղ հարց ունենք. «Ե՞րբ է ավարտվելու այս «տոնական հրաշքը», ախր հոգնե՜լ ենք այս բութ խրախճանքից»:

## СНГ или «Старый» Новый год

Сегодня 13-ое января. То есть Новый год, а точнее «Старый» Новый год (в дальнейшем – СНГ). Значит, опять праздник, опять веселье. Повод ещё раз хорошенько погулять и выпить: последнее, конечно, не пропустят «мимо ушей» ярые любители «огненной воды».

Все мы ещё не успели как следует отрезветь, избавиться от головной и желудочной боли – результат пышных новогодних столов. Все мы собирались насильно заставлять себя войти в нормальный рабочий ритм, чтобы набраться новых сил, а, самое главное, заработать новые денежные средства для дальнейших пиршеств. Понятно, что ни сила, ни деньги на улице не валяются. «На Бога надейся, а сам...».



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Мы собирались, но «неожиданно» настал новый праздник – СНГ. Так что хотим ли мы этого или нет, придется ещё пару дней выделить на поздравления и тосты, уговаривать наши желудки и головы, что это последний праздник… в январе и что не мы повинны в утверждении и проведении праздников. Во всем виновато государство, и мы не имеем никого морального права быть недовольными нашим новым чудесным и весёлым государством. Более того, у нас и в мыслях нет разрушить его (то есть государство) какой-нибудь октябрьской, оранжевой, бархатной или велюровой революциями, чтобы создать другое государство. У нас действительно нет такого плана, потому что мы не знаем в мире другого такого государства, где есть столько поводов пировать. У нас есть только один невинный вопрос: «Когда закончится эта «чудесная вереница праздников»? Праздник праздником, но ведь устали уже от этого… тупого пира…

## Լինե՞լ, թե՞ չլինել…

Պատմական և ճակատագրական «Լինե՞լ, թե՞ չլինել» հույժ կարևոր հարցից բացի մարդու կյանքում կան ոչ պակաս կարևոր մի քանի հարցեր ևս, որոնց պատասխանները մինչև օրս ճշտված չեն և ողջ աշխարհի գիտնականների, նաև՝ ոչ գիտնականների գլխացավանքի հիմնական պատճառներից մեկն են: Թվարկենք դրանցից մի քանիսը. «Ուտե՞լ, թե՞ չուտել», «Խմե՞լ, թե՞ չխմել» (այստեղ խոսքը ոչ միայն սովորական ջրի մասին է, այլև՝ մյուս բոլոր հեղուկների, այդ թվում, այսպես կոչված՝ ոգելից խմիչքների), «Ծխե՞լ, թե՞ չծխել», «Սիրե՞լ, թե՞ ատել», «Վերցնե՞լ, թե՞ տալ», «Ապտակի պատասխանը տա՞լ, թե՞ թողնել, որ մյուս այտիդ էլ հասցնեն» և այլն, և այլն…

Ինչպես տեսնում եք՝ հարցերը շատ են ու բարդ, և մարդկությունը պարտավոր է ոսկե կամ, որ ավելի լավ է, պլատինե արձան կանգնեցնել այն հանճարին, որը, վերջիվերջո, կգտնի եթե ոչ բոլոր, ապա գոնե այս հարցերի կեսի ճիշտ պատասխանները:

Փորձենք քննարկել (միայն և միայն՝ քննարկել, այլ ոչ թե տալ ճիշտ պատասխան, որովհետև մենք ոչ հանճար ենք, ոչ էլ ամենագետ, դրանց հավակնելու միտք անգամ չունենք) վերը նշված հարցերից, մեր խորին համոզմամբ, ամենակարևորները՝ «Ուտե՞լ, թե՞ չուտել» և «Խմե՞լ, թե՞ չխմել»:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Եթե մարդկության զարգացման արշալույսին, երբ մարդը կապկից քիչ բանով էր տարբերվում, «Ուտե՞լ, թե՞ չուտել» հարցի պատասխանը միանշանակ էր և առաջնության դափնին անտարակույս տրվում էր ուտելուն (ընդսմին, որքան կարելի է՝ շատ), ապա մարդու՝ մարդ դառնալու (ներեցեք կրկնաբանության համար, պարզապես, խոսքը վերաբերում է մարդ արարածի և ձևին, և բովանդակությանը) գործընթացին զուգահեռ շարունակ փոխվել է մարդկության կարծիքն այս կարևոր հարցի մասին: Կշեռքի նժարներն անընդհատ տատանվել են մեկ այս, մեկ այն կողմ՝ այդպես էլ չմնալով ո՛չ ուտելու, ո՛չ էլ չուտելու կողմը:

Հարցը հատկապես սրվել է մեր օրերում, իսկ բանավեճերին ու խոհանոցային «մենամարտերին» վերջ ու վախճան չկա:

Ոմանք ստույգ համոզված են, որ միսը վնասակար է, ահավոր են ճարպերը, շաքարն ու աղը սպիտակ մահ են՝ հեռո՛ւ սպիտակ մահից, կարագը դեղին մահ է, խոտը կանաչ մահ է, սև պղպեղը սև մահ է, կարմիր պղպեղը՝ կարմիր մահ և այլն, և այլն…

Մի խոսքով, ծիածանի բոլոր գույներն ու երանգները չեն բավարարի՝ բոլոր խայտաբղետ մահերը թվարկելու համար: Իհարկե, եթե չես կարող ապրել առանց ուտելու և, բացառված չէ, որ կարող ես, պարզապես, անգույն մահով մեռնել, նման պարագայում ուտելու հակառակորդներն առաջարկում են քիչ ուտել, այսինքն՝ դիետա պահպանել, որը որոշ չափով կհետաձգի մահվան ուրվականի հայտնվելու պահը: Ինչ խոսք, նման կարծիք ունեցողների գերակշիռ մասը գեղեցիկ սեռի ներկայացուցիչներն են՝ մեր սիրելի կանայք, որոնց համար մահը գերադասելի է գիրանալուց: Նրանք համոզված են, որ գիրությունը մեծագույն չարիք է և նույնիսկ՝ մահ: Որպես լավագույն օրինակ մատնանշվում է ռուս առակագիր Իվան Կռիլովը. ասում են, թե նա շատակերությունից և գիրությունից է մահացել:

Շատակերությունը վնաս է նաև ընտանիքի բյուջեին՝ կարկատաններ են առաջանում այնտեղ: Այդ կարկատանները պետությանը պարտադրում են ավելացնել աշխատավարձը, որից այդ նույն պետության բյուջեում մեծ ու փոքր ճեղքեր են առաջանում: Երկիրը սնանկանում է, իսկ բնակչությունը հասնում է աղքատության դուռը (ի տարբերություն հարստության դռան, այս դուռը միշտ հյուրընկալորեն բաց է): Մի՞թե այս բոլոր ծանրակշիռ ապացույցները բավական չեն, որպեսզի պարզ լինի,

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

որ պետք է պատերազմ հայտարարել շատակերությանը, իսկ որ ավելի ճիշտ է՝ ուտելուն ընդհանրապես:

Առաջինների հակառակորդները, այսինքն՝ ուտելու մոլի սիրահարները, պարսավում և թշնամի են համարում նրանց, ովքեր ուզում են մարդկությանը զրկել ուտելու մեծագույն հաճույքից: Նրանք փորձում են ապացուցել, որ ուտելը մարդու բնական պահանջն է, որ կեցությունն է որոշում գիտակցությունը (հե՛յ, ակա՛նջդ կանչի, Կա՛րլ Մարքս): Բացի այդ (որն ամենակարևորն է), մարդ չուտելուց է մահանում, այլ ոչ թե ուտելուց, որ օրգանիզմին հարկավոր են վիտամիններ՝ որքան շատ, այնքան լավ, որ չուտելը կամ քիչ ուտելը ժլատության նշան է, որ բազմաթիվ անեկդոտներ կան չուտողների և նիհարների մասին (վերջիններս չուտողների կամ քիչ ուտողների ամենացայտուն օրինակն են): Այս առիթով՝ մի անեկդոտ նիհարների մասին. «N» գյուղում մի աղքատ և շատ նիհար մարդ էր ապրում: Մի օր այս մարդը ստամոքսի բնական պահանջը բավարարելու համար հաց է գողանում հարևանից, սակայն բախտը չի բերում՝ բռնվում է հանցանքի վայրում: Համագյուղացիները որոշում են հանցագործին տանել անտառ և շղթայով կապել ծառից, որ գայլերին կեր դառնա: Գայլերը գալիս՝ շղթան ուտում են, իսկ գողին, նիհար լինելու պատճառով, չեն ուտում, թողնում են ու գնում»:

Ուտելու կողմնակիցներն այն կարծիքին են, որ առանց այդ էլ սոված օրեր անցկացնելու շատ առիթներ են լինում կյանքում, որ մեր դժվարին ժամանակներում երբեմն նույնիսկ հացի փող չես ունենում, էլ ուր մնաց՝ միս կամ կարագ, թթվասեր կամ շաքարավազ գնես: Այնպես որ, ավելի լավ է՝ կե՛ր, խմի՛ր, քե՛ֆ արա, քանի դեռ հնարավորություն ունես, և մի մտածիր ուտելու վնասների մասին (չէ որ մի անգամ ես ապրում, իսկ հետո շա՛տ ուշ կլինի): Համարյա թե այս նույն կարծիքին է կանադացի գրող Սթիվեն Լիքոքը, որն, ամենայն հավանականությամբ, ուտողների բանակի հավատարիմ զինվորներից է: Լիքոքը, ինչպես կտեսնեք ստորև, առաջարկում է երկու հարյուր տարի ապրելու «լավագույն դեղատոմսը»: Ահա թե ինչ է ասում նա. «Մեր երիտասարդները համակված են առողջության մոլուցքով և իրենց կյանքը վերածում են տաժանակրության: Նրանք միս չեն ուտում, որովհետև դրա մեջ շատ ազոտ կա: Նրանք միրգ չեն ուտում, որովհետև մրգի մեջ ազոտ ընդհանրապես չկա: Սպիտակուցն ու ազոտը նրանք ավելի շատ են գերադասում,

ГАУ РТ "Медиацентр им. И. Гаспринского"

քան հապալասն ու փքաբլիթը: Կերե՛ք այն ամենը, ինչ ուզում եք: Շա՛տ կերեք, այնքան, մինչև չզգաք, որ ևս մի կտոր, և դուք էլ չեք կարող սենյակից սենյակ անցնել ու ամբողջ կերածով մեկ փռվել բազմոցին: Կերե՛ք այն ամենը, ինչ ձեզ դուր է գալիս, կերե՛ք մինչև կոկորդը: Այստեղ չափը մեկն է՝ կարո՞ղ եք արդյոք վճարել կերածի համար: Եթե չեք կարող՝ մի՛ կերեք: Եվ լա՛վ լսեք. հոգ մի տարեք այն մասին, թե արդյո՞ք ձեր կերածի մեջ կա օսլա, սպիտակուց, ազոտ և սնձան… Սովորական կերակուրների մեջ, որոնք մենք ուտում ենք, ո՛չ ազոտ կա, ո՛չ ֆոսֆոր, ո՛չ սպիտակուց. ամեն մի կարգին տնային տնտեսուհի խոհանոցի լվացարանում լվանում է այս բոլորը, նախքան կերակուրը կհայտնվի ձեր սեղանին…»:

Ինչ վերաբերում է «Խմե՞լ, թե՞ չխմել» նույնքան ավանդական դարձած հարցին, ապա այստեղ նույնպես միակարծիքություն չկա: Մարդկությունը հիմնականում բաժանված է երկու հզոր բանակների, և բանակներից յուրաքանչյուրն աշխատում է ամեն կերպ իր կարծիքը (որը միակ ճշմարիտն է համարում) պարտադրել հակառակորդի բանակին և դրանով վերջ տալ բոլոր տարաձայնություններին:

Չխմողների բանակն իր ծանրակշիռ ապացույցներն է առաջ քաշում՝ օրինակ բերելով ինչպես պատմության դասերը, այնպես էլ առօրյա կյանքում ամեն քայլափոխին, հենց մեր աչքի առաջ կատարվող բազմաթիվ դեպքերն ու իրադարձությունները, որոնք, հիմնականում, ողբերգական վախճան են ունենում՝ նյութական և բարոյական վնաս պատճառելով և՛ խմողին, և՛ նրա շրջապատին: Միանգամայն հասկանալի է, որ խոսքը ոգելից խմիչքների մասին է, չնայած քննադատվում են և թեյ խմողները, և սուրճի սիրահարները, և կաթ խմողները և, նույնիսկ, ջուր և այլ հեղուկներ օգտագործողները: Սակայն այսօր մենք կդիտարկենք այն մտքերն ու կարծիքները, որոնք վերաբերում են այդ «աստծո պատուհասին»՝ չարաբաստիկ ոգելից խմիչքներին: Թվարկենք չխմողների բերած փաստարկներց մի քանիսը. «Գինին շա՛ռ է, շա՛ռ, Գարսևա՛ն ջան», «Կրակե ջուրը» մարդկության գլխին կախված Դամոկլյան սրից էլ ահավոր է», «Խմողը քանդում է ոչ միայն իր, այլև հարևանի տունը», «Հարբեցողը երբեք չի հարստանա», «Մեկը լավ է, երկուսը բավ է, երեքը ցավ է», «Հարբածից խղճուկ և ծիծաղելի մարդ չկա»: Եվ, վերջապես, ամենածանրակշիռ փաստարկը. անեկդոտների մի մեծ շարք կա հարբեցողների մասին: Կարծում ենք, որ այսքանը լիովին

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

բավական է, որպեսզի պարզ լինի հետևյալը. խմելը նույնպես հանցագործություն է և արժանի է հասարկության պարսավանքին ու ամենաբացասական վերաբերմունքին:

Սակայն, եկեք տեսնենք, թե ինչ փաստարկներ են բերում նրանք, ովքեր ոգելից խմիչքների մեծ սիրահար են և չեն պատկերացնում ինչպես իրենց, այնպես էլ այլոց կյանքն առանց դրանց, ովքեր այդ խմիչքներն ընդունելուց հետո դառնում են ուրախ և անբռնազբոսիկ, իրենցից թոթափում են բոլոր կոմպլեքսները, դառնում են զվարճախոս, սրամիտ ու սրտամոտ, իսկ ծովը միշտ էլ նրանց ծնկներից է: Ահա այս բանակի մի քանի «կարկառուն» ներկայացուցիչների նույնքան էլ «կարկառուն» ու տարածված մտքերը. «Լցնե՛նք, ընկերնե՛ր, բաժակները լի, թո՛ղ հայոց գինին մեզ անո՛ւշ լինի» (ոչ հեռու անցյալում շատ տարածված հայկական երգ), «Մեծ դերասանը, կոմպոզիտորը, նկարիչն ու բանաստեղծը չեն կարող իսկական արվեստագետ լինել, եթե չօգտագործեն «կրակե ջուրը» կամ դրա մերձավոր բարեկամներին» (շատ կասկածելի է), «Ոչ մի քեֆ, ուրախություն առանց խմիչքի չի լինում» (հիշենք գոնե մի այդպիսի «անխմիչք» հարսանիք), «Ձմռանը ջեռուցման լավագույն (՞՞՞) միջոցներից մեկն էլ ոգելից խմիչքն է» (ով գոնե մեկ անգամ փորձել է, նրան այլևս համոզել պետք չէ): Այս բոլորին ավելացնենք մի «տխուր» անեկդոտ խմողների կյանքից, ավելի շուտ՝ կյանքի՝ տխուր վերջաբանից: Ահա այն. «Որդին շատ էր խմում, և հայրը՝ դաստիարակչական նպատակներով, նրան մի օր տանում է գյուղի գերեզմանատուն: Որ գերեզմանին մոտենում են՝ տապանաքարին գրված է. «Խմեց, խմեց՝ մեռավ»: Որդին գնալով մռայլվում է, իսկ հոր դեմքն, ընդհակառակը, պայծառանում է: Նա ավելի է համոզվում, որ հարբեցողությունից վատ բան չկա: Հանկարծ որդին մոտենում է մի գերեզմանի, կարդում է տապանաքարի վրա գրվածն ու սկսում է քահ-քահ ծիծաղել: Հորը կանչում է, թե՝ կարդա: Հայրը կարդում է. «Խմեց, խմեց, երեք օր չխմեց՝ մեռավ»:

Մեզ մնում է այս բոլորին ավելացնել, որ վերը նշված հարցերին ճշմարիտ ու հիմնավորված պատասխան չկա և չի էլ կարող լինել: Պարզապես, ամեն մարդ ինքը պետք է որոշի իր անելիքը՝ ելնելով տվյալ պահից ու իրադրությունից, սեփական կարողություններից ու բնավորությունից, խելքի ու գրպանի պարունակությունից, ախորժակից ու ստամոքսի վիճակից: Այլ կերպ ասած՝ «Խեղդվողի փրկությունն իր սեփական ձեռքերում է»: Մնացած մեկնաբանություններն ավելորդ են…

ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского»

## Быть или не быть?

После исторического и рокового вопроса «Быть или не быть?» в жизни человека есть и другие не менее важные вопросы, на которые до сих пор нет точных ответов. Стало быть, эти вопросы – одна из основных причин головной боли ученых и неученых всего мира. Перечислим некоторые из них: «Кушать, или не кушать?», «Пить или не пить?» (здесь речь идет не только о простой воде, но и о других жидкостях, в том числе о горячительных напитках). Так же очень важны вопросы «Курить или не курить?», «Любить или не любить?», «Ненавидеть или не ненавидеть?», «Брать или давать?» (конечно деньги), «Ответить на пощечину или позволить, чтобы по другой щеке тоже ударили?» и т.д. и т.п.

Как видите, вопросов много и все они сложные. Поэтому человечество должно поставить золотую, нет, лучше платиновую статую тому, кто даст хотя бы половину вразумительных ответов на эти вопросы.

Попробуем обсудить (только обсудить, а не давать правильные ответы, потому что мы – не гении и не всезнающие, и не претендуем на это), на наш взгляд, два самых важных вопроса – это «Кушать или не кушать?» и «Пить или не пить?».

На заре развития человечества, когда человек мало чем отличался от животного, ответ на вопрос «Кушать или не кушать?» был однозначным и пальма первенства без колебания отдавалась кушанью, а точнее жратве (притом, чем больше жратвы, тем лучше). Но параллельно и одновременно процессу становления человека человеком (извините за тавтологию, просто речь идет и о форме, и о содержании человека) изменилось мнение человечества об этом очень важном вопросе. Чаши весов всё время колебались то в одну, то в другую сторону, так и не останавливаясь на какой-нибудь из них.

Вопрос особенно обострился в наши дни, а дискуссиям и «кухонным» дуэлям нет конца.

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Некоторые уверены, что мясо опасно, жиры ужасно вредны, сахар и соль – белая смерть: прочь от белой смерти! Масло – жёлтая смерть, зелень – зеленая смерть, черный перец – черная смерть, а красный – соответственно красная смерть, апельсин – оранжевая смерть… Словом, не хватит всех цветов радуги, чтобы перечислить все разноцветные смерти. Конечно, если не можешь жить без еды и не исключено, что умрешь бесцветной смертью, то в таких случаях противники еды предлагают или мало есть, или диету. Без сомнения, большая часть тех, кто придерживается такого мнения – представители прекрасной половины человечества, женщины. По их мнению, лучше умереть, чем растолстеть. Полнота – это зло, даже смерть, – уверены они и в качестве яркого примера приводят русского баснописца Ивана Крылова, который якобы умер от переедания.

Прожорливость вредна и для семейного бюджета – там появляются большие и маленькие дыры-заплаты. Эти дыры-заплаты заставляют государство увеличивать зарплату, пенсии, отчего в бюджете этого же государства также появляются… дыры-заплаты, и страна разоряется, а население становится нищим… Разве недостаточны эти весомые аргументы, чтобы нам всем стало ясно: нужно объявить войну обжорству, а лучше – еде вообще.

Противники первых, то есть ярые сторонники еды, порицают и считают врагами тех, кто пытается лишить человечество одного из величайших наслаждений – трапезы. Они ещё пытаются доказать, что кушать – это естественная потребность человека, и бытие определяет сознание (да здравствует великий Карл Маркс!), что (это самое главное) человек умирает от того, что не кушает, а не от того, что кушает. Более того, говорят они, нашему организму нужны витамины: чем больше, тем лучше, а не кушать или мало есть – это знак скупости. Ещё один немаловажный факт: есть множество анекдотов о тех, кто мало ест и худой. По этому поводу один анекдот о худых: «В

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

деревне «N» жил один бедный и очень худой человек. Однажды этот человек, чтобы удовлетворить одну из своих естественных потребностей, а конкретно – кушать, украл хлеб у соседа. Но ему не повезло: его поймали с поличным и решили отвести в лес и там привязать железными цепями к дереву, чтобы волки съели его. Сказано – сделано. Но бедному повезло: волки пришли, цепи съели, а его, из-за худобы, оставили и ушли».

Сторонники кушать придерживаются мнения, что и так много поводов провести день без еды, и в наше трудное время иногда не хватает денег на хлеб, не говоря уже о мясе или масле, сметане или сахаре. Так что, лучше кушай, пируй, пока есть возможность, и не думай о вреде кушанья: ведь живешь всего один раз, потом будет о-о-очень поздно! Такого мнения придерживается и канадский писатель Стивен Ликок, который, видимо, один из верных воинов армии кушающих. Ликок, как вы увидите ниже, предлагает лучший «рецепт» прожить двести лет. Вот что он пишет: «Наша молодежь охвачена манией здоровья и превращает свою жизнь в каторгу. Они не кушают мясо, потому что в нем много азота. Они фруктов не едят, потому что в фруктах азота вообще нет. Они предпочитают белки и азот бруснике и пышке.

Кушайте всё, что хотите! Кушайте много! Кушайте столько, пока не почувствуете, что ещё один кусок, и вы уже не сможете перейти из комнаты в комнату со всем съеденным распластаться на диване. Кушайте всё то, что вам нравится, кушайте по горло. Здесь мера одна: сможете ли вы платить за съеденное? Если не можете – не кушайте! И послушайте хорошенько: не думайте о том, есть ли в том, что вы ели, крахмал, белок, азот и клейковина…В обычной еде, что мы кушаем, нет ни азота, ни фосфора, ни белков: каждая нормальная хозяйка в кухонной мойке вымывает всё это до того, когда появится еда на вашем столе…».

Что касается столь же традиционного вопроса «Пить или не пить?», то здесь тоже нет единого мнения. Человечество

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

в основном разделено на две мощные армии, и каждая армия старается навязывать своё мнение (которое только и правильно) противоборствующей стороне и этим положить конец всем разногласиям.

Армия непьющих приводит свои весомые аргументы: она ссылается как на уроки истории, так и современные события и происшествия, которые происходят на наших глазах и в основном заканчиваются трагически, нанося материальный и моральный ущерб как пьющим, так и окружающим. Конечно, понятно, что на данный момент речь идёт об алкогольных напитках, хотя критикуют и тех, кто чай и кофе пьет, и тех, кто употребляет молоко, даже воду и другие жидкости. Однако, мы с вами сегодня обсудим те мнения, которые относятся к этому бичу божьему – злополучным горячительным напиткам. Перечислим несколько аргументов непьющих: «Вино, это беда, дорогой Гарсеван» (фраза из фильма «01-99»), «Огненная вода» страшнее Дамоклова меча, пьяница разрушает не только свой, но и соседний дом», «Пьяница никогда не разбогатеет», «Одна (рюмка) – хорошо, две – достаточно, три – уже беда» (и поговорка, и песня). И наконец-то, самый весомый аргумент: есть целый цикл анекдотов про пьяных и алкоголиков. Думаем, этого достаточно, чтобы выяснилось, что алкоголизм – это преступление и нужно всячески его порицать и искоренять любимыми путями.

Но давайте теперь посмотрим, чем обосновывают свои «преступные» поступки большие любители спиртных напитков и не представляющие свою и чужую жизнь без этих напитков. Это те, кто после ста граммов и больше становятся веселыми и непринужденными, сбрасывают с себя всякие комплексы и всем им море по колено. Теперь приведем некоторые «выдающиеся» мысли таких же «выдающихся» представителей этой «бесстрашной» армии: «Налейте, друзья, полные бокалы, пусть армянское (или другое) вино нам будет сладко» (в недалеком прошлом очень распространенная армянская песня),

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

«Великий композитор, поэт, артист и художник не могут быть настоящими творцами, если не будут употреблять спиртного» (очень сомнительно). «Нет ни одного пира, веселья без «горячительных» напитков, попробуйте вспомнить хоть одну свадьбу без «ста граммов», «Зимой спиртное – самое лучшее (лучшее ли???) средство согреться. Кто пробовал один раз, того уговаривать больше не надо». Ко всему этому добавим один «грустный» анекдот из жизни пьющих, точнее из грустного финала их жизни. Вот он: «Сын много пил, и отец в воспитательных целях решил однажды повести его на сельское кладбище. К какой могиле не подойдут, на плите написано: «Пил, пил – умер». Сын, чем дальше, тем мрачнее становится, а отец наоборот – веселее. Вдруг сын подходит к одной могиле, читает, что написано на надгробной плите, и смеется. Зовет отца и просит прочитать надпись. А там написано: «Пил, пил, три дня не пил – умер».

Ко всему этому нам остается лишь добавить, что на вышеуказанные вопросы однозначно правильных и аргументированных ответов нет и не может быть. Просто каждый человек сам должен выбрать себе путь, исходя из данной ситуации, собственных возможностей и характера, своего ума и содержимого кармана. Иначе говоря: «Спасенье утопающих – дело рук самих утопающих». Остальные комментарии излишни…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

# ՉՈՐՍ ՆՈՎԵԼ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

# ЧЕТЫРЕ НОВЕЛЛЫ О ЛЮБВИ

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

## Գարնանն էլ է ձյուն գալիս…

Գարնանն էլ է ձյուն գալիս, երբ ահազանգում են եկեղեցու զանգերը…

Գարնանն էլ է ձյուն գալիս, երբ հրաժեշտ են տալիս հանդիպումից հետո՝ այստեղ՝ այս կյանքում…

Գարնանն էլ է ձյուն գալիս, երբ հրաժեշտ են տալիս հանդիպումից առաջ՝ այնտեղ՝ այն կյանքում…

Գարնանն էլ է ձյուն գալիս, հետո… ձմեռ է գալիս…

Գարնանն էլ է ձյուն գալիս, հետո այդ ձյունը ճահիճ է դառնում…

Գարնանն էլ է ձյուն գալիս, երբ վերջակետ են դնում… չավարտած նախադասության վերջում…

Գարնանն էլ է ձյուն գալիս, երբ որբանում ես…

Գարնանն էլ է ձյուն գալիս, երբ քեզ մենակ են թողնում…

Գարնանը միշտ էլ ձյուն է գալիս, երբ մահանում է սերը…

## И весной снег идёт…

И весной снег идёт, когда бьют в набат церковные колокола…

И весной снег идёт, когда прощаются после встречи здесь, в этой жизни…

И весной снег идёт, когда прощаются перед встречей там, в той жизни…

И весной снег идёт… потом приходит зима…

И весной снег идёт… потом всё превращается в болото…

И весной снег идёт, когда ставят точку после недосказанного слова…

И весной снег идёт, когда осиротеешь…

И весной снег идёт, когда тебя оставляют в одиночестве…

Весной всегда снег идёт, когда умирает любовь…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

# Երկու մոմ

Եկեղեցում երկու մոմ վառվում են կողք-կողքի. մեկն իմ մոմն է, մյուսը՝ քոնը։

Ես չեմ լսում, թե ինչի մասին են նրանք խոսում։ Իսկ, միգուցե, չեն էլ խոսո՞ւմ։ Պարզապես, ժամանակ առ ժամանակ, իրար են մոտեցնում բոցավառվող գլխիկները, կարծես թե ինչ-որ գաղտնիք են ուզում փսփսալ մեկը մյուսի ականջին։ Հետո հեռացնում են գլխիկները՝ հանդարտվում և ականջ են դնում եկեղեցու լռությանը…

Եկեղեցում երկու մոմ վառվում են կողք-կողքի. մեկն իմ մոմն է, մյուսը՝ քոնը։

Ես ուշադիր նայում եմ նրանց, և մի պահ ինձ թվում է, թե նրանք շարժվում են, կարծես ուզում են մոտենալ միմյանց, միաձուլվել և դառնալ մեկ մոմ՝ եկեղեցու կիսախավարը փոքր-ինչ ավելի ցրելու համար… Ո՛չ, դա պատրանք է։ Նրանք չեն կարող շարժվել, չեն կարող մոտենալ իրար, առավել ևս՝ միաձուլվել, որովհետև նրանց ոտքերն ամուր գամված են գետնին…

Եկեղեցում երկու մոմ վառվում են կողք-կողքի. մեկն իմ մոմն է, մյուսը՝ քոնը։

Նրանք այնքան մոտ են իրար, որ եթե ձեռքերը պարզեն, կարող են գրկախառնվել։ Ինձ անընդհատ հետապնդում է այն միտքը, որ ևս մի պահ, ու նրանք կնետվեն իրար գիրկ, քանզի այնքա՜ն մեծ է նրանց վաղո՜ւց տանջող այդ ցանկությունը։ Կգրկախառնվեի՜ն, եթե … ձեռքե՜ր ունենային…

Եկեղեցում երկու մոմ վառվում են կողք-կողքի. մեկն իմ մոմն է, մյուսը՝ քոնը։

Նրանք չգիտեն, թե դեռ որքան են վառվելու։ Ես նույնպես չգիտեմ, այդ պատճառով էլ հեռանում եմ եկեղեցուց՝ թողնելով նրանց միայնակ։ Ես չեմ ուզում տեսնել նրանց վախճանը։ Մյուս կողմից, հետաքրքիր է՝ ինչո՞վ ավարտվեց նրանց լուռ երկխոսությունը, կամ՝ ավարտվե՞ց արդյոք…

ГАУРК „Медиацентр им. И. Гаспринского"

## Две свечи

В церкви рядом горят две свечи. Одна из них – моя свеча, другая – твоя.

Я не слышу, о чём они шепчутся. А может быть, они и вовсе молчат. Просто, время от времени, они приближают друг к другу свои пылающие головки, как будто хотят какой–то секрет на ушко сказать. Потом отводят пылающие головки, успокаиваются и слушают церковную тишину…

В церкви рядом горят две свечи. Одна из них – моя свеча, другая – твоя.

Я не моргая смотрю на них… И в какой-то момент мне кажется, что они двигаются, как будто хотят приблизиться друг к другу, слиться друг с другом, стать одной свечой, чтобы ещё чуточку рассеять полумрак церкви. Нет, это иллюзия! Они не могут двигаться, не могут приближаться, тем более слиться друг с другом, потому что их ножки крепко прикованы к земле…

В церкви рядом горят две свечи. Одна из них – моя свеча, другая – твоя.

Они так близко стоят, что если протянут руки, они могут обнять друг друга.

Меня всё время преследует мысль, что ещё один миг, и они бросятся в объятия друг другу, потому что так велико давно мучающее их желание. Бросились бы давно, если бы у них были… руки…

В церкви рядом горят две свечи. Одна из них – моя свеча, другая – твоя.

Они не знают, сколько им ещё гореть. Я тоже не знаю, поэтому выхожу из церкви, оставляя их наедине. Я не хочу видеть их огарки. А с другой стороны интересно, чем завершится их безмолвный диалог и завершится ли?

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

## Ես և դու

Ես կատարեցի քո ցանկությունը՝ սիրո նամակներ այլևս չեմ գրում։ Արդյոք խիղճդ հանգստացա՞վ, հոգիդ խաղաղվե՞ց, այլևս մեղավոր չե՞ս զգում քեզ, գոնե հիմա երջանի՞կ ես…

Դու ասում ես, որ սրտիցդ մի ծանր քար ընկավ… Արդյոք իմացա՞ր, թե ուր ընկավ այդ քարը։ Այն իմ սրտի մեջ հայտնվեց, սակայն այնտեղ երկար չմնաց, այլ բումերանգի նման հետ վերադարձավ դեպի քո սիրտը։ Եվ հիմա կրկնակի ծանր է այդ քարը, քանզի քո ցավին գումարվեց նաև իմ ցավը…

Նույնը կատարվեց ինձ հետ։ Իմ ցավն էլ է հիմա կրկնակի ծանրացել, որովհետև մենք երկուսս էլ զբաղվում ենք ինքնախաբեությամբ…

«Ո՛չ քեզ հետ, ո՛չ առանց քեզ»… Սրանք էլ են քո բառերը… Ահա մեր միակ ձեռքբերումը՝ չհաշված գլխացավերն ու անքուն գիշերները, սիրո տառապանքի արցունքները, բաժանման և կորստի ցավը…

Մեր չորրորդ՝ հույսի մոմը վաղուց է մարել, իսկ մենք դեռ շարունակում ենք երազել առաջին երեքի՝ հանգստության, հավատի և սիրո մոմերի մասին։ Եվ որքան շատ ենք երազում, այնքան շատ ենք հեռանում իրարից, միևնույն ժամանակ, նույնքան էլ շատ ենք մոտենում իրար…

Մեզ սարեր ու ձորեր են բաժանում, սակայն մեզ միացնում է սերը…

Մեզ մեր հարազատներն են բաժանում, սակայն մեզ միացնում է սերը…

Մեզ բաժանում են գրված և չգրված բարոյական օրենքները, սակայն մեզ երիցս միացնում է սերը…

Մենք ստեղծված ենք միմյանց համար, սակայն պարտավոր ենք ապրել իրարից հեռու, իրարից բաժան՝ առանց չորրորդ մոմի…

## Я и ты

Я выполнил твоё желание – больше не пишу любовные письма. Успокоилась ли твоя совесть? Теперь ты не чувствуешь себя виновной? Счастлива ты теперь?

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Ты говоришь: «Гора с плеч упала...». Ты хоть знаешь, где оказалась эта гора? Нет, она не осталась в моём сердце, а как бумеранг вернулась к тебе, в твоё сердце. Сейчас эта гора вдвойне тяжелее, потому что к твоей боли прибавилась и моя боль...

То же самое случилось со мной: моя боль вдвойне потяжелела, потому что мы оба занимаемся самообманом.

«Ни с тобой, ни без тебя», – говоришь ты. Вот наше единственное печальное достижение, если не считать головных болей и бессонных ночей, слёз рыдающей любви, боль разлуки, боль утраты...

Наша четвёртая свеча – свеча надежды давно погасла, а мы ещё продолжаем мечтать о первых трёх – о свечах спокойствия, веры и любви. И чем больше мы мечтаем о них, тем больше удаляемся друг от друга и одновременно ещё больше приближаемся друг к другу.

Нас разделяют горы и моря, но нас соединяет любовь.

Нас разделяют наши близкие, но нас соединяет любовь.

Нас разделяют писаные и неписаные моральные законы, но нас трижды соединяет любовь.

Мы созданы друг для друга, но обязаны жить далеко и раздельно друг от друга – без четвёртой свечи...

## Ժամանակն ու մենք

Ժամանակն անցնում է մեր կողքով ու չի նկատում մեզ: Ժամանակը երբեք կանգ չի առնում, ժամանակը երբեք ետ չի վերադառնում...

Մենք անցնում ենք սիրո կողքով, սակայն չենք զգում, չենք գիտակցում, որ հենց դա է իսկական ու միակ սերը: Իսկ երբ, վերջապես, հասկանում ենք, արդեն ուշ է լինում, որովհետև ժամանակին չենք նկատել, երբ անցել ենք նրա կողքով: Իսկ ժամանակն, ինչպես հայտնի է, երբեք կանգ չի առնում, ոչ էլ ետ է վերադառնում: Մենք՝ նույնպես...

Մեր միակ ու անկրկնելի սերը մնում է ինչ-որ տեղ՝ հեռու անցյալում, իսկ մենք ժամանակի հետ թռչում ենք դեպի անհայտության գիրկը...



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Եթե հնարավոր լիներ գոնե մի պահ կանգնեցնել ու ետ վերադարձնել ժամանակը, եթե հնարավոր լիներ մեկ անգամ էլ անցնել ժամանակին սրտից վրիպած սիրո կողքով, ապա աշխարհում դժբախտ սեր չէր լինի…

Ժամանակն անցնում է մեր կողքով ու չի նկատում մեզ: Ժամանակը երբեք չի նկատի մեզ… Այդ մենք պետք է նկատենք ժամանակը և ամեն ինչ անենք ժամանակին…

## Время и мы

Время проходит мимо, не замечая нас. Время никогда не останавливается, никогда не возвращается…

Мы проходим мимо любви, но не чувствуем, не осознаём, что это и была настоящая и единственная любовь. А когда наконец понимаем, бывает поздно, потому что мы не заметили её, когда она была рядом. А время, как известно, никогда не останавливается и никогда не возвращается. Мы тоже… Наша единственная и неповторимая любовь остается где-то в прошлом, а мы, как и время, уходим в неизвестность…

Если было бы возможно хоть на миг остановить время и вернуть его назад, если бы можно было ещё раз пройти мимо незамеченной любви, то в мире не было бы несчастной любви …

Время проходит мимо, не замечая нас. Время никогда не заметит нас. Это мы должны подмечать время и всё делать вовремя…



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

# ԱՅՍ ԽԱՅՏԱԲՂԵՏ ԱՇԽԱՐՀԸ

# ЭТОТ ПЁСТРЫЙ МИР

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

# Ամեն երեկո

Ամեն երեկո, երբ վերջիվերջո արևի լույսից, մարդկանց դեմքերից և առօրյայի մաշող ժխորից փակվում են հոգնած աչքերս, և ես ընկնում եմ գիրկը լույս երազների, լոկ դու ես ինձ հետ, իսկ, ավելի ճիշտ, դու սրտիս մեջ ես: Ես հոգեզմայլ լսում եմ քնքուշ շնչառությունդ և սրտիդ մեղմ տրոփյունը, զգում եմ քո հայացքն ու ժպիտը, ես վայելում եմ քո բուրմունքը և քեզնից բխող նուրբ ջերմությունը: Եվ ես տեսնում եմ քո երազները. նրանք փարվում են իմ երազներին՝ երազներիս հետ, երազներիս մեջ…

Ամեն երեկո այցելում ես ինձ, երբ մթնշաղն է իջնում կապտավուն, և թանձրանում են ստվերներն անձև: Այցելում ես ինձ, երբ հանդարտվում է վազքը ցերեկվա, և անտառների, դաշտերի վրա, հոգնած աչքերիս ու հոգուս վրա անդորր է իջնում: Նման պահերին խաղաղ է հոգիս, նման պահերին այն ներդաշնակվում և միաձուլվում է բնության հեքին: Իսկ երբ դու արդեն կողքիս ես՝ իմ սրտում, երբ ձեռքերդ շոյում են դեմքս, իսկ վարսերդ մեղմիկ զեփյուռից ալիքվում և հպվում են աչքերիս՝ անուշ գրգիռներ առաջացնելով իմ երակներում, երջանկությունից, հրճվանքից անհուն իմ էությունը, պրկված նյարդերս՝ ավելի խաղաղ և ներդաշնակված, ննջում են կարծես…

Ամեն երեկո դու գալիս ես իմ հինավուրց, գողտրիկ դղյակը, որը ես կերտել եմ մարդկանց աչքերից հեռու մի սքանչելի վայրում՝ լեռների գրկում տարածված թավուտ անտառում: Այստեղից բացվող տեսարանը մի հրաշք պատկեր է. փիրուզյա ծովը՝ տեղ-տեղ բրոնզի հալված շերտերով, լազուր երկինքը՝ բամբակի ճերմակ-քուլա ամպերով, իսկ այս բոլորի վրա իշխում են վեհափառ լեռները:

Դղյակում ես մենակ եմ ապրում. հրաժարվել եմ նույնիսկ իմ խոնարհ ծառաներից, քանզի նրանք լոկ խանգարում են ինձ՝ հանգիստ երազել: Սակայն, երբեմն, լինում են պահեր, երբ ինչ-որ մեկի կարիքն եմ զգում, որպեսզի նրա հետ կիսեմ զգացմունքներս, տանջող խոհերս, մասնակից անեմ իմ երազներին: Եվ, հավանաբար, դա էր պատճառը, որ հայտնվեցիր դու՝ կիսելու իմ մենությունը և այն՝ երկար սպասված երջանկությունը, որը հենց ինքդ ես ինձ ընծայել: Աստվա՜ծ իմ, որքա՜ն երջանիկ եմ ես, որ



ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского»

դու կաս կյանքում և այցելում ես իմ դղյակն ամեն երեկո՝ քեզ հետ բերելով երջանիկ լույսի շողը կենարար…

Ամեն երեկո այցելում ես ինձ և մնում ես ինձ հետ՝ սրտիս մեջ ամբողջ գիշեր: Եվ ամբողջ գիշեր ես չեմ հասկանում՝ քնա՞ծ եմ՝ արթո՞ւն, իրակա՞ն է այս ամենը, թե՞ լոկ տեսիլք՝ բորբոքված ուղեղի արդյունք, անհաս երազանք: Այսպես անցնում է ամբողջ գիշերը՝ մեկ վայրկյանի պես (այսպես էլ կյանքն է անցնում՝ հանց մեկ պահ), և հետզհետե թանձր խավարն իր տեղը զիջում է կենարար լույսին: Իսկ երբ արևի առաջին ճառագայթները քսվում են լեռների ճերմակ կատարներին, դու հեռանում ես՝ կրկին թողնելով ինձ միայնակ՝ իմ դատարկ դղյակում՝ իմ խոհերի և զգացմունքների, իմ գիշերային երազների հետ: Իսկ թե ինչու ես գնում՝ չես բացատրում: Սակայն առանց քո բացատրության էլ պարզ է ամեն ինչ. դու քո աչքերով, խոսուն հայացքով զգուշացնում ես, որ կկործանվենք մենք երկուսս էլ, եթե դու մնաս: Հետո՝ հանցանք է՝ մեծ մեղք՝ սեփական երջանկությունը կառուցել այլոց դժբախտության և արցունքի վրա: Դու, հավանաբար, ճիշտ ես, չգիտե՛մ…

Ամեն երեկո, երբ փակում եմ հոգնած աչքերս, դու դարձյալ ինձ հետ ես՝ իմ սրտի մեջ: Ամեն երեկո ես ստույգ գիտեմ, որ իմ գիշերային տեսիլները կրկնվելու են, իսկ առավոտյան դու հեռանալու ես: Ես դարձյալ թողնելու եմ իմ դղյակն ու գնամ, որպեսզի կրկին անգամ աչքերս կկոցեմ արևի լույսից, և նրանք հոգնեն մարդկանց անտարբեր, սառը դեմքերից, օրվա ժխորից, առօրեական ճղճիմ լուրերից: Ես նաև գիտեմ, որ կավարտվի այդ օրը գորշավուն, լուռ մթնշաղը կիջնի սարերին և անտառներին, կխաղաղվի իմ շուրջբոլորը: Ես դարձյալ կվերադառնամ իմ հին դղյակը և համբերատար կսպասեմ այցիդ: Եվ երբ դու լինես ինձ հետ՝ իմ սրտում, ես մեկ անգամ էլ (արդեն ո՛րերորդ անգամ) կփորձեմ խզել այս կախարդական ու փակ շրջանը, որպեսզի դու ինձ հետ լինես ոչ թե ամեն երեկո՝ մինչև առավոտ, այլ լինես ինձ հետ՝ սրտիս մեջ, անկախ ժամերից ու ժամանակից, ամեն, ամեն օր՝ գիշեր ու ցերեկ…

ГАУРК "Медиацентр им. И. Гаспринского"

## Каждый вечер

Каждый вечер, когда наконец-то закрываются мои глаза, уставшие от человеческих лиц и повседневности изнуряющего шума, и я оказываюсь в объятиях светлых сновидений, только ты со мной, в моем сердце. Я завороженно слышу твое нежное дыхание, биение твоего сердца, чувствую твой взгляд и твою улыбку, я наслаждаюсь твоим ароматом и твоей теплотой. Я вижу твои сны: они обнимают мои сны, они с моими сновидениями, в моих сновидениях.

Каждый вечер ты посещаешь меня, когда начинаются синие сумерки и густеют бесформенные тени, когда утихает бег дня, и на леса и поля, на уставшие мои глаза и душу опускается тишина. В такие минуты безмятежна моя душа, в такие минуты она полностью созвучна с природой. А когда ты уже рядом – со мной, во мне, в моем сердце, когда твои руки ласкают моё лицо, а локоны от нежного ветерка колышутся и прикасаются к моим глазам, вызывая сладкое возбуждение в моих венах, моя сущность и напряженные нервы от счастья и радости становятся более спокойными…

Каждый вечер ты приходишь в мой красивый старинный замок, который я построил подальше от человеческих глаз в живописном месте – в лесу, в горах. Отсюда открывается сказочная панорама: под ногами – изумрудное подножье горы, вдалеке – бирюзовое море, местами покрытое «расплавленной бронзой», над головой – синее небо с белоснежными хлопьями облаков.

В замке я живу один: отказался даже от слуг, потому что они мешают мне спокойно мечтать. Но иногда бывают минуты, когда я нуждаюсь в общении с человеком, с которым хочу делить мои чувства и мысли, мои мечты. И, видимо, по этой же причине явилась ты, чтобы разделить моё одиночество и то долгожданное счастье, которое ты мне подарила. О, Боже, как я счастлив, что ты есть и посещаешь мой замок каждый вечер, принося с собой лучи животворящего света.

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Каждый вечер ты приходишь ко мне и остаешься со мной, в моём сердце на всю ночь. И я не могу понять – это сон или явь? Действительно это так или всё это – видение, результат воспаленного мозга, недосягаемая мечта? Так проходит ночь, как один миг (так проходит жизнь), постепенно густая тьма уступает свету. А когда первые лучи солнца нежно касаются белоснежных вершин гор, ты уходишь, опять оставляя меня одного с моими мыслями и чувствами, с моими ночными видениями в моём пустом замке. Но почему уходишь, ты не объясняешь, хотя и без этого всё ясно: ты своим выразительным взглядом предупреждаешь, что мы оба погибнем, если ты останешься. Потом – преступление, большой грех, строить собственное счастье на чужом счастье и слезах. Может быть, ты права, не знаю…

Каждый вечер, когда я закрываю усталые глаза, ты снова со мной, в моём сердце. Каждый вечер я точно знаю: повторятся мои ночные видения, а утром ты опять уйдёшь. И я оставлю свой замок и уйду, чтобы зажмурить глаза от солнечного света. Мои глаза устанут от человеческих холодных и безразличных лиц, от дневного шума и обыденных, тривиальных новостей. Я ещё знаю, что закончится этот серый день, тихие сумерки опустятся на горы и леса. Вокруг меня станет тихо, я вернусь в мой старый замок и нетерпеливо буду ждать тебя. И когда ты будешь со мной, в моём сердце, я уже в который раз попытаюсь разорвать этот заколдованный круг. Разорвать, чтобы ты приходила каждый вечер не только в сновидениях, но и наяву, независимо от времени. Я мечтаю лишь о том, чтобы ты была рядом каждый день – днем и ночью…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

# Ծիրանենին

Ճակատագիրը ձեռնոց է նետել,
Ճակատագիրը փորձում է կրկին…

Ձմռան պարզկա ու սառած երկինք՝ արծաթե լուսին՝ սառույցի կտոր:

Եվ սառած մատներ, սառած հայացքներ՝ ցուրտ ու կիսամութ սենյակում անշուք…

Հոգևարք ապրող տխուր վառարան, որ ջերմություն է կորզում ավելի, քան կարող է տալ: Եվ միայն միտքն է տենդագին գործում՝ ուղի, գեթ մի ելք փնտրելով խավար ու ցուրտ այս վիհից դուրս գալու համար, քանզի մոխրացող, մեռնող փայտերը վառարանի մեջ վերջինն են, ավա՜ղ…

Իսկ վաղը, հետո, մյուս օրերին… երկինքը՝ սառած, լուսինը՝ սառույց. անշուք սենյակում ցուրտն էլ ավելի դաժան կլինի, իսկ ջերմացնելու համար էլ չկա փայտի գեթ մի շյուղ: Եվ ո՞րն է ելքը…

Ուղեղն անդադար գործում է, տքնում, հատում, միացնում, փնտրում է, փնտրում ու… կայծակի պես հույսն է բոցկլտում հոգնած ուղեղում. կա՛ միակ ելքը, ուրիշ ելք չկա՛…

Լուսնի կաթնագույն ու սառած լույսից ճերմակ են հագել կացնահար եղած բները մեծ ու փոքր ծառերի: Եվ միայն մեկը՝ իմ ծիրանենին, որ ամեն տարի, ամեն գարնան հետ փթթում է՝ ճերմակ և բուրումնավետ շղարշ սփռելով իր շուրջբոլորը, իսկ ամռան տապին իր դեղնակարմիր և անուշաբույր պտուղն է մեկնում ամեն անցորդի… Ծիրանենին իմ կանգնած է հպարտ: Նա դեռ չգիտի, որ մոտ է արդեն իր վախճանը վաղ… Նա դեռ չգիտի, որ կացնով զինված՝ սառած մատներով, սառած հայացքով իր իսկ տնկողը և խնամողը՝ հուսահատ տենդով, մոլուցքով տարված, ուրիշ ելք չունի և կայացրել է վճիռ անողոք. պետք է զոհ գնա ծառը ծիրանի, որպեսզի չլինեն սառած մատներ ու հայացքներ…

Կացինն է փայլում ձմռան արևի սառը շողերից և իր կացնային բութ համառությամբ կողն է մխրճվում ծիրանի ծառի՝ ո՞ր մեղքի համար: Տնքում է ծառը՝ հանց խոցված էակ՝ կենդանի էակ… Դիմադրում է ծառը ծիրանի և իր մերկացած ձեռքերն է պարզում



ГАУ РИ "Медиацентр им. И. Гаспринского"

դեպ երկինք՝ Աստված: Միգուցե, շարժվի գութը կտրողի… Բայց օգուտ չկա խղճուկ աղերսից, փրկություն չկա կացնի պատճառած խորունկ վերքերից…

Իսկ տաշեղները ամեն հարվածից մի պահ, կարծես թե, պարում են օդում խոլական պարով, հետո ընկնում են անշունչ՝ սառն ու անտարբեր, ձյունապատ գետնին…

Հոգնած, նվաղած ձեռքերը վայր են դնում կացինը և զգուշորեն ու դողդողալով հպվում են ծառի արյունածոր վերքերին… Ա՜խ, ինչքա՜ն տաք է մարմինը ծառի, ինչքա՜ն անուշ է բույրը ծիրանի… Եվ դեռ կանգուն է, դեռ չի տապալվել, դեռ մրմնջում է հեզ ծիրանենին. «Ամենակարո՜ղ Աստված դու հզոր, ո՞ր մեղքիս համար»:

Եվ շանթահար է լինում ուղեղը. ձեռքերը մեղք են գործում ահավոր՝ ծիրանենի են սպանում անմեղ, ո՛չ, մեղեդի են սպանում հազար, որ պիտ հնչեին դուդուկ չդարձած ծիրանի ծառից: Դուդուկներ, որոնք պիտի ծնվեին վաղը կամ, գուցե, մի օր՝ այս ծիրանենու փայտից կենդանի, շունչ պիտ առնեին իրենց մայր ծառից և չնաշխարհիկ ելևէջներով պիտի շոյեին ունկը լսողի…

Բայց եթե դիմես խղճիդ սեփական այսօր և վաղը, օրեր, շաբաթներ (մինչև կավարտվի ձմեռը դաժան) դարձյալ կմնաս սառած մատներով, սառած հայացքով և՝ ոչ միայն դու, այլև հարազատ քո ընտանիքը, զավակները քո, որ քեզ վրա են լոկ հույսը դրել: Այնպես որ, վե՛րջ տուր այդ սրտաճմլիկ մտքերիդ հիմա, էլ զոհ մի՛ գնա խղճիդ կանչերին, թե չէ կսառչեն մատներ բարալիկ, հայացքներ անմեղ: Գարնանը նորից ծառեր կտնկես՝ մեկի փոխարեն՝ տասը, քսանը, գոնե դրանով մեղքդ կքավես…

«Մենք մեղք ենք գործում», – կրկնում են նորից ձեռքերը հոգնած, մատները սառած, հայացքը սառույց: – Մենք մեղք ենք գործում և կպատժվենք հանցանքի համար: Չէ որ այս ծառը՝ այս ծիրանենին, կարծես մարդ լինի՝ միս ու արյունից, ամեն հարվածից խուլ հառաչում է և անօգնական իր մերկ ճյուղերը երկինք է պարզում, օգնություն հայցում»…

«Թե շարունակվի այս երկվությունը՝ կխելագարվեմ, – ուղեղն է տնքում: – Վե՛րջ, վե՛րջ կասկածին ու տվայտանքին, քեզ են սպասում սառած հայացքներ ու սառած մատներ»…

Կացինն է նորից փայլում սառն օդում, շարունակվում են հարվածները սուր: Աստիճանաբար տեղի է տալիս ծառը ծիրանի՝

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

տաշեղներ սփռում շուրջը իր բնի: Էլի մեկ հարված բթամիտ կացնի, որ չորն ու թացը չի զանազանում…

Եվ կույր մոլուցքով տարված՝ ձեռքերը պատրաստ են վերջին հարվածը հասցնել ու… վե՜րջ կասկածին, վե՜րջ երկվությանը, գործն ավարտված է: Թե ինչ կլինի հետո, թող դատի ապագան կամ հենց ինքը՝ տեր Աստված…

Պատիժը երկար սպասել չտվեց և վրա հասավ այնքա՜ն, այնքա՜ն շուտ ու անսպասելի, որ չհասցրեց ուղեղն ընկալել և պաշտպանվելու մի հնար գտնել: Այդ ինչպե՞ս եղավ: Արդյոք մատները շա՞տ էին հոգնած, հայացքը՝ սառա՞ծ, թե՞ հաղթանակի բերկրանքով գերված՝ ուշադրությունը շեղվել էր մի պահ: Դժվար է ասել: Այն օրհասական, միակ հարվածը, որ պետք է լիներ ամենավերջինն ու վերջ տար բոլոր հարցականներին, հանկարծ շեղ իջավ… Չարախնդորեն կացինը փայլեց ձմռան արևից և իր կացնային բթությամբ հանդերձ՝ նենգորեն (իբր՝ միամտորեն) իջավ կտրողի անզգույշ ոտքին…

Տարիներ անցան… Տարիների հետ վերքն ամոքվեց ու սպիացավ, մարմնական ցավն էլ հետը չքացավ: Բայց ամեն անգամ սպին տեսնելիս՝ ծիրանի ծառը վերհուշի նման այցի է գալիս իրեն հատողին: Տխուր վերհուշից, հոգեկան ցավից սիրտը նվում է, արագ տրոփում, իսկ տխուր հուշը ժամանակի հետ չի անցնում անհետ: Եվ դեռ շա՜տ երկար, գուցե մինչև մահ, հիշեցնելու է ծիրանենին այն, որ կրակ դարձավ, ծխի հետ կորավ ձմռան երկնքում: Նա չի ծաղկելու ամեն մի գարնան, պտուղ չի տալու, էլ մեղեդիներ չեն հնչելու դուդուկ չդարձած ծիրանի փողից: Հիշեցնելու է սառած մատները և հայացքները, որ ջերմացան քիչ՝ այրվող փայտերից: Հիշեցնելու է մեր կյանքի սառած ու տխուր հատվածը, որ ոչ մի կիզիչ արև չի կարող ջերմացնել երբեք, քանզի շատ խորն են սառած հետքերը հիշողության մեջ…

*Եվ որպեսզի էլ չլինեն սառած մատներ ու հայացքներ, որ չլինի հատված ոչ մի ծիրանենի՝ ամեն գարնան ծառեր տնկենք մենք բարության ու լավ գործի, ծառեր տնկենք ուրախության ու ժպիտի, ծառեր տնկենք արդար գործի՝ հանուն կյանքի…*

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

## Абрикосовое дерево

Ясное и замерзшее зимнее небо, серебряная луна, как кусочек льда. Замерзшие пальцы и холодные взгляды в полутемной убогой комнате ...

Грустная печка в агонии: она больше отбирает, чем отдает тепла. И только мозг лихорадочно мыслит, чтобы выйти из этой темной и холодной бездны, потому что, увы, умирающие поленья в печке последние... А завтра и в последующие дни... небо – замерзшее, луна – как кусочек льда... В убогой комнате холод будет более жестоким, а для тепла нет больше дров. И где выход?..

Мозг непрерывно работает – старается, режет, соединяет, все ищет, ищет и... надежда сверкает как молния в уставшем мозгу: есть один выход, другого нет!..

От замерзшего молочного лунного света в белом все вырубленные стволы больших и маленьких деревьев. Только одно абрикосовое дерево, которое каждый год, каждую весну расцветает, накрываясь бело-розовой вуалью, а в летний зной угощает каждого своими желто-красными плодами... оно ещё гордо стоит. Дерево ещё не знает, что близок его конец... Тот, кто его посадил, вооруженный топором, в отчаянии и забывший обо всем, с замерзшими пальцами и взглядом, не знает другого выхода. Он уже решил: должно умереть абрикосовое дерево, чтобы не было замерзших пальцев и холодных взглядов...

Сверкает топор в холодных лучах зимнего солнца и со своим топорным тупым упрямством вонзается в тело абрикосового дерева – за какие грехи? Дерево стонет как живое существо... Дерево сопротивляется, вознеся свои руки к небу – к Богу. Быть может, проснётся совесть у того, кто так беспощадно рубит его. Нет, надежды нет, бесполезна эта мольба, нет спасения от глубоких ран, нанесенных топором...

А щепки после каждого удара несколько мгновений пляшут в воздухе и падают бездыханно на замерзшую, снежную землю...



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Уставшие руки бросают на землю топор, осторожно с дрожью прикасаются к большим и окровавленным ранам… Ох, какое теплое тело абрикоса и какой сладкий его аромат! И пока стоит, не свалилось, оно ещё шепчет. «Всемогущий Бог, за какие грехи?».

Как будто молния ударила по сердцу: руки вершат преступление – убивают невинное абрикосовое дерево. Нет, руки убивают тысячи мелодий, которые должны были звучать из дудуков. Дудуки, которые родились бы завтра или в какой-нибудь день из этого абрикосового дерева и своей мелодией ласкали бы слух…

Но если обратиться к совести своей, то сегодня-завтра, да ещё много дней и ночей останешься с ледяными пальцами и ледяным взглядом: и не только ты, а хуже того, твоя родня, дети твои, которые надеются только на тебя. Так что перестань ныть и думать о плохом, оставь грустные и ранящие душу мысли, пусть совесть тебя не мучит, а то замерзнут тоненькие пальцы и невинные взгляды. Весной снова посадишь деревья взамен одного – десять, двадцать, и этим искупишь свою вину…

«Мы совершаем преступление, – снова повторяют уставшие руки, замерзшие пальцы, ледяной взгляд. – Мы совершаем преступление и поплатимся за это. Ведь это дерево – абрикосовое дерево, как – человек, из живой плоти. После каждого удара топора оно стонет и, поднимая руки к небесам, просит пощады»…

Если продолжится это раздвоение, можно с ума сойти. Всё! Надо кончать с этими сомнениями и мучениями, тебя ждут замерзшие руки и взгляды!

И вновь топор сверкает в холодном воздухе, продолжаются удары. Постепенно сдаётся абрикосовое дерево, щепки его накрывают замерзшую землю. Ещё один удар «тупого» топора, что не отличает сухое от мокрого, и…

Обезумевшие руки готовы нанести последний удар, и конец всем сомнениям… Дело сделано… Что будет потом, пусть судит будущее или сам Бог…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Недолго пришлось ждать наказания… Оно пришло так быстро, так неожиданно, что мозг не успел отреагировать и что-то предпринять, чтобы защищаться… Как это случилось? Может быть, руки были слишком уставшими, а взгляд – замерзшим? Или плененное близкой победой внимание притупилось? Трудно сказать… Тот судьбоносный и последний удар вдруг… прошел мимо дерева… Злостно смеясь и сверкая на зимнем солнце, топор своей топорной тупостью коварно (якобы нечаянно) ударил по ноге…

Годы прошли… С годами рана излечилась и превратилась в шрам. Прошла и телесная боль. Но каждый раз видя шрам, абрикосовое дерево появляется вновь в памяти… От грустного воспоминания сердце ноет и бьется учащенно. И, может быть, очень долго, до самой смерти запомнится абрикосовое дерево, которое превратилось в огонь и вместе с дымом исчезло в зимнем небе. Дерево будет напоминать, что не расцветет больше никогда весной, не будет сочного абрикоса. Будет напоминать те замерзшие пальцы и взгляды, которые чуть-чуть согрелись от сгоревшего дерева. Будет напоминать тот замерзший отрывок нашей жизни, который никакое солнце не согреет, потому что слишком глубоки замерзшие следы в нашей памяти…

*И чтобы не было больше никогда замерзших пальцев и взглядов, чтобы больше никогда не рубили мы абрикосовое дерево, давайте каждую весну сажать деревья добра, радости и улыбок, деревья за жизнь…*

## Գործուղում

Վերջերս գործուղման էի մեկնել Հայաստան: Երկու տարի էր՝ չէի եղել հայրենիքում, և ինձ այնտեղ էր ձգում ոչ միայն անսահման կարոտը, այլև՝ հետաքրքրասիրությունը. ի՞նչ վիճակում է երկիրը, ինչպե՞ս է ապրում ժողովուրդը, կա՞ն արդյոք դրական փոփոխություններ, որքանո՞վ է բարելավվել (եթե, իրոք, բարելավվել է) բնակչության վիճակը: Ճիշտ է, գնացող-եկողները որոշ բաներ պատմում էին, բայց, նախ՝ նրանց պատմածները



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

երբեմն իրարամերժ էին և, բացի դրանից՝ «Լավ է մի անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել»: Ահա իմ տեսածի և ստացած տպավորությունների մասին եմ ուզում պատմել:

* * *

… Ինքնաթիռը սրընթաց վայրէջք էր կատարում, արագորեն մեկը մյուսին էին փոխարինում ինքնաթիռի կլոր լուսամուտից երևացող տեսարանները՝ Էջմիածինն ու Զվարթնոցը, Մուսալեռը (իմ հարազատ Մուսալեռը), ծառաստաններն ու տեղ-տեղ ձյան պատառիկներով ծածկված դաշտերը: Ողջ համայնապատկերը պարուրված էր գորշ, բայց թափանցիկ՝ ամպամած երկնքից արտացոլվող շղարշով: Այս ամենն այնքա՜ն ծանոթ է. ի՜նչ եմ ասում, այս ամենն այնքան մոտ է ու հարազատ, այնքա՜ն իմը՝ ներծծված իմ երակներում ծննդյանս օրվանից՝ հողի ու ջրի, արևի ու մորս կաթի հետ: Եվ ես՝ Հայրենիք կոչվող այս երկրի մի չնչին մասնիկս, թվում է, թե մի ամբողջ հավերժություն բաժանված եմ եղել իմ մորից, տնից ու այգուց, իմ քարից ու թփից… Ների՜ր ինձ, մա՜յր, ների՜ր ինձ, հո՜ղ հայրենի, որ ստիպել եմ ձեզ՝ կարոտել ինձ՝ ձեր կորուսյալ որդուն: Ներեցե՜ք, որ ստիպել եմ կռունկից «Խաբրիկ մը չունի՞ս» հարցնել, ների՜ր ինձ, ամենակարո՜ղ Աստված…

* * *

… Ինձ սթափեցրեց ուղեկցորդուհու ձայնը. «Մեր ինքնաթիռը վայրէջք կատարեց… Օդի ջերմաստիճանը… Անձնակազմը հրաժեշտ է տալիս ձեզ…»:

Բարև՜, Հայաստա՜ն…

Դեռ նոր էի ոտքս դրել գետնին՝ շրջվեցի, որպեսզի տեսնեմ աստվածաշնչային Արարատը: Ավա՜ղ… Սևագորշ ամպերը գերել էին նաև սուրբ լեռը: Ասում են, թե մեղավորներից Արարատը թաքցնում է իր դեմքը: Ես սնոտիապաշտ չեմ, բայց, այնուամենայնիվ, մի ճնշող թախիծ պատեց հոգիս: Այնպես որ, տրամադրությունս զրոյից ցածր էր, ինչպես օդի ջերմաստիճանը… Հավանաբար, շա՜տ եմ մեղավոր…

* * *

Մայրս միշտ սպասում է ինձ՝ անկախ «ժամ ու պատարագից», սակայն այդ պահին իմ այցը նրա համար անսպասելի ու երջանիկ անակնկալ էր… Երբ տուն մտա, նա չգիտեր՝ հավատա՞



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

արդյոք աչքերին… Ուրախության և կարոտի արցունքները միախառնվեցին… Հավանաբար, միայն նա է ինձ միշտ ներում, որքան էլ մեծ լինի հանցանքս…

Չգիտեմ՝ վառարանից տարածվող հաճելի ջերմությունի՞ց էր արդյոք (գալստյանս առթիվ մայրս չէր խնայում այդքան թանկարժեք վառելափայտը), թե՞ երկարատև զրույցից (պատմելու շատ բան կար) կամ, միգուցե, ճանապարհի հոգնությունից էր, որ վրաս մի հաճելի թմրություն իջավ։ Խոնջացած մարմինս ներդաշնակ խաղաղության մեջ էր հոգուս և ուղեղիս անդորրի հետ… Ի՜նչ անգին գանձ է մայրը, ի՜նչ լավ է տանը, հարազատ տանը…

* * *

Ոչ երկար ժամանակով բաժանումը, որն ինձ, սակայն, մի ամբողջ հավիտենություն էր թվում, և այդ բաժանումից առաջացած մեծ կարոտն ինձ տանում են հայրենի գյուղի՝ տեղ-տեղ՝ ուղիղ, տեղ-տեղ՝ ծուռումուռ, նեղլիկ, ցեխոտ փողոցներով, որոնք այդպես էլ չհասցրեցին «դեպի պայծառ ապագա տանող» մաքուր ու գեղեցիկ ճամփաներ դառնալ։ Ավելի շուտ, դրանք անհանգրվան ճամփաներ են կարծես, որ նույնիսկ հույսն են կորցրել, թե մի օր իրենց կտեսնեն բարեկարգված՝ եզրերին կանաչ ու ծաղիկներ, սաղարթախիտ ծառեր, որոնք այնքան դուրեկան ստվեր էին զգում ամառվա տապին։ Ի դեպ, ծառերի մասին. 1993-94 թվականների ցուրտ ու խավար ահավոր ձմեռները մեր գյուղի (և ոչ միայն մեր) շատ ու շատ ծառերի համար վերջին ձմեռները եղան։ Սակայն երկու տարի առաջ նրանցից ոմանք դեռ կենդանի էին և ահուդողով սպասում էին իրենց վախճանին։ Այժմ մերկ են փողոցները, մերկ է գյուղի միակ պուրակը, հատված ծառերից միայն կոճղերն են մնացել, այն էլ՝ ոչ ամեն տեղ. երբեմն ծառն արմատախիլ են արել։

Դժվար է մեղադրել մարդկանց. այլ վառելիք չկա կամ էլ շատ թանկ արժե, իսկ ջերմություն պետք է բոլորին՝ ինչպես թթվածինը, ինչպես հացը…

Ծառը՝ ծառ, սակայն մարդկանց վիճակն էլ մի բան չէ։ Վատ են ապրում, չնչին բացառությամբ, բոլորը։ Դա իմանալու համար հեռու գնալ պետք չէ։ Ամեն քայլափոխի հանդիպում եմ ընկերներիս, ծանոթներիս, մի խոսքով՝ համագյուղացիներիս,

ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского»

որոնք բոլորն էլ իրենց պարտք են համարում՝ ձեռքով բարևել ու տալ ավանդական հարցը՝ ինչպե՞ս ես: Ես պատասխանում եմ ջերմ ձեռքսեղմումով ու նույնքան ավանդական բառերով. «Ոչի՜նչ, փա՜ռք Աստծո…»:

Սովորական հարց ու պատասխանից հետո հետևում է «Այստե՞ղ է լավ, թե՞ այնտեղ» հարցը: «Ե՜վ այստեղ, և՜ այնտեղ»,- կես կատակ, կես լուրջ պատասխանում եմ ես: Հետո բացատրում եմ, որ տնտեսապես և սոցիալապես Ղրիմը փոքր-ինչ ավելի բարվոք վիճակում է, քան Հայաստանը, բայց այստեղ իմ հայրենիքն է, իմ ժողովուրդը, իմ տունը: Այնպես որ, ինքներդ դատեք, թե որտե՜ղ է ինձ համար ավելի լավ…

«Այստեղ շա՜տ վատ է, – հուսահատ ձեռքերը թափ են տալիս նրանք: – Անչափ դժվարացել է ապրելը: Ի՜նչ ասենք, ինքդ ես ամեն ինչ տեսնում»:

Տեսնո՜ւմ եմ, սիրելի համագյուղացիներ, տեսնում եմ. տնտեսությունը փլուզված է, գործազրկությունն ահռելի չափերի է հասել, շարունակվում է ճանապարհների շրջափակումը հարևան պետության (ոչ բարով լիներ) կողմից: Եվ այս բոլորի վերջը չի երևում: Շատ քչերն են հավատում, թե լավ կլինի, այն էլ՝ միայն նրանք, ովքեր համեմատաբար լավ են ապրում: Ըստ ոչ պաշտոնական վիճակագրական տվյալների, Հայաստանի բնակչության մոտ կեսը գտնվում է չքավորության շեմին, մարդիկ, ինչպես ասում են, մի կերպ կարողանում են պահել իրենց գլուխը՝ հիմնականում զբաղվելով մանր առևտրով: Գյուղերում փորձում են հող մշակել կամ անասուն պահել. ոչ բոլորի մոտ է ստացվում, որովհետև շատ թանկ են և պարարտանյութը, և գյուղատնտեսական տեխնիկան, և բենզինն ու սոլյարայուղը: Նրանք, ովքեր հանապազօրյա հացը հայթայթելու այլ միջոց չունեն, ստիպված են դիմել վաղուց հայտնի դասական միջոցին՝ մուրացկանությանը՝ ստվարացնելով ամեն ամոթ, հարգանք ու պատիվ մոռացած՝ փող մուրացողների բանակը…

* * *

Եկեք մի կողմ թողնենք ժամանակակից «գյուղական հովվերգությունը» և անցնենք քաղաքային առօրյային՝ խոսենք Հայաստանի մայրաքաղաք Երևանի մասին:



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Յուրաքանչյուր պետության իրական դեմքը նրա մայրաքաղաքն է՝ իր բոլոր դրական և բացասական, լավ ու վատ կողմերով: Եվ նույնիսկ օտարերկրացին, եթե ուշադիր է նա և գոնե մի փոքր «տիրապետում է» շերլոկհոլմսյան դեդուկցիային՝ գլխավորն ու երկրորդականը, արտաքին ձևն ու ներքին բովանդակությունն իրարից զանազանելու և ճիշտ գնահատելու համար (էլ չեմ խոսում տեղացու մասին), ապա նույնիսկ նրա համար դժվար չի լինի նկատել, որ եթե աշխարհը հիմնված է հակասությունների վրա, իսկ մարդն այդ հակասությունների արգասիքն ու լավագույն շարունակողն է, ուրեմն Երևանից ու երևանցիներից ավելի ցայտուն օրինակ փնտրել պետք չէ:

Ինչ խոսք, երկու տարվա ընթացքում (հենց այդքան չէի եղել Երևանում) Հայաստանի մայրաքաղաքն իրոք փոխվել է: Խոսքն, իհարկե, արտաքին փոփոխության մասին է. փողոցները, համեմատաբար, ավելի մաքուր են ու բարեկարգ, դրանցով, ինչպես տասը տարի առաջ, հաճելի է (դարձյալ՝ համեմատաբար) քայլել: Ճիշտ է, դեռ զգացվում են համատարած ծառահատման հետևանքները, սակայն այնքան անհրաժեշտ ջերմության (վերջինս, փաստորեն, 1993-94 թվականներին կենաց և մահու խնդիր էր դարձել, որի զոհն էլ դարձան հազարավոր ծառեր) վերածված ծառերի փոխարեն աճել են նորերը, իսկ լավ մերկացված ծառերը երիտասարդ ընձյուղներ են արձակել, որպեսզի նորից զով սփռեն իրենց շուրջն ամառվա տապին:

Չկան նաև մայթերի ողջ երկայնքով շարված խեղճուկրակ, այսպես կոչված՝ «անհատ ձեռներեցները»՝ մարդիկ, որոնք օրվա հացը վաստակելու համար վաճառում են տան եղած-չեղածը կամ համեմատաբար էժան գնով ձեռք բերած այս կամ այն անորակ մթերքն ու արդյունաբերական ապրանքը: Իհարկե, սրանց բացակայությունը բոլորովին չի նշանակում, թե այս կարգի «առևտրականները» հարստացել կամ նյութական բարեկեցության են հասել. պարզապես, քաղաքային իշխանություններն արգելել են նման առևտուրը՝ ելնելով «քաղաքի տեսքը բարելավելու» ազնիվ նպատակից:

Վերացել են նաև անհամար սեղանիկները, որոնք երբեմն լուրջ պատնեշ էին հանդիսանում մայթերով անցուդարձ անող, առանց

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

այդ էլ ամեն ինչից հոգնած ու ձանձրացած մարդկանց համար: Փոխարենը հայտնվել են նոր ու գեղեցիկ, «կապիտալիստական» ճոխություն բուրող խանութները (ներեցե՛ք, ուզում էի ասել՝ մարքեթները կամ սուպերմարքեթները՝ մոդայից հետ չմնալու համար), որտեղ կարող ես գնել ցանկացած ապրանք. ինչպես ժողովուրդն է ասում՝ օձի կաթն էլ կարող ես գտնել դրանցում: Հավանաբար, զարմանալու ոչինչ չկա. հիմա էլ՝ կոմունիզմի փոխարեն կապիտալիզմ ենք կառուցում: Սակայն, հենց այստեղ էլ կարելի է նկատել առաջին հակասությունը. այս շքեղ «մարքեթներում» կամ գնորդներ չկան, կամ էլ եթե կան, ապա դրանց թիվը, չնչին բացառությամբ, ձգտում է անսահման զրոյի: Վաճառում են շատերը, սակայն գնում են, ավա՜ղ, հատուկենտ մարդիկ, այսպես կոչված՝ «ընտրյալները», որոնց վաստակածն ուղիղ համեմատական է այստեղ վաճառվող թանկ ու կրակ ապրանքների գներին, և որոնց ընտանեկան բյուջեում նման ծախսերը ճեղքեր չեն առաջացնում: Իսկ մյուսները, որոնք բացարձակ մեծամասնություն են կազմում, անհուն կարոտով նայում են այդ՝ հիմնականում արտասահմանյան ապրանքներին և գնում են ավելի էժանը, համապատասխանաբար, ավելի վատորակը փնտրելու: Աղքատ մեծամասնությանն իրենց կողմը գրավելու համար նույնիսկ չեն օգնում գեղեցիկ օրիորդներն ու տղաները, որոնց՝ «նեխող կապիտալիզմից» փոխ առած ձևերը (հաճախորդներին կեղծ-սիրալիր ժպիտներով դիմավորել, «կաշվից դուրս գալով» իրենց պատրաստակամությունը ցուցադրել՝ «ծառայելու» բոլոր հարցերում և այլն) նույնիսկ չեն օգնում առևտրին. գիքորյան «Էստի համեցեքը» այդպես էլ մնում է «Ձայն բարբառոյ յանապատի»:

Էլ ավելի շքեղ տեսք են ստացել երևանյան սրճարաններն ու ռեստորանները: Դրանք նախկինում էլ այցելուներին հիացմունք էին պատճառում թե՛ իրենց ձևավորմամբ, թե՛ ուտեստների բազմազանությամբ ու հրաշալի համով: Հները երկրորդ երիտասարդությունն են ապրում՝ հիշեցնելով նախկին փառքն ու այն երջանիկ օրերը, երբ դրանք մատչելի էին համարյա թե բոլորի համար՝ անկախ այցելուի զբաղեցրած կամ չզբաղեցրած պաշտոնից ու գրպանի պարունակությունից: Իսկ նորերը փորձում են գերազանցել հներին: Այժմ պատկերն այլ է. շատերի



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

համար դրանք անառիկ ամրոցներ են, որովհետև որքան էլ գրավեն իրենց գունային և լուսային գովազդներով, որքան էլ բարձր մակարդակի վրա լինի սպասարկումը և համեղ ու ցանկալի՝ ճաշատեսակները, միևնույն է, ծակ գրպանով գործազուրկի կամ հանապազօրյա հացը մի կերպ վաստակողի համար դրանք մնում են անհասանելի: Այդպիսիներին մնում է միայն երազել, որ «Մի օր էլ իրենց փողոցում տոն կլինի», որ ամեն ինչ ունի սկիզբ և վախճան, և լավ օրերը դեռ առջևում են: Բայց, արի ու տես, որ հակասությունների շարանն այստեղ էլ է շարունակվում. ասում են (իսկ ես պետք է խոստովանեմ, որ մի անգամ աչքովս եմ տեսել), որ երևանյան սրճարաններն ու ռեստորանները լի են այցելուներով... կեսգիշերից հետո, որ հիմնական հաճախորդները երիտասարդներ են, որ քեֆ-ուրախությունը տևում է մինչև առավոտ, որ Երևանն այս առումով անցել է աշխարհի հայտնի քաղաքների՝ շարքը: Առաջին ռեակցիան բացասական է. դա հնարավոր չէ՝ համատարած աղքատության ու գործազրկության մեր ժամանակներում: Սակայն, ավելի սառը դատելով, հասկանում ես, որ այդ հաճախորդները նույն ընտրյալներն են, այն, իրոք, հաջողակ գործարար մարդիկ, որոնք վայելում են իրենց կամ, ո՞վ գիտի, միգուցե, այլոց քրտինքով վաստակածը: Այստեղ ակամա հիշում ես հայտնի հեքիաթը. «Քեֆ անողի քեֆը չի պակասի»: Միգուցե, այդպես էլ պետք է լինի՝ արցունքի կողքին՝ ժպիտ, քաղցածի կողքին՝ կուշտ, հիմարի կողքին՝ հանճար, և այս բոլորը՝ մի ժողովուրդ, որ կոչվում է հայ:

* * *

Մեր օրերում մուրացկաններով ոչ մեկին չես զարմացնի: Եթե առաջներում նմաններին մենք տեսնում էինք միայն կինոնկարներում և արտասահմանյան երկրներում աշխատող խորհրդային լրագրողների՝ գույները թանձրացրած հեռուստատեսային ռեպորտաժներում, խղճում էինք այդ՝ մարդկային սանդուղքի ստորին աստիճանին գտնվող էակներին, խստորեն քննադատում էինք կապիտալիստական աշխարհը, ապա այժմ մենք ունենք մեր «սեփական», արտասահմանյանից ոչնչով չտարբերվող, դեռ ինչ-որ տեղ էլ գերազանցող մուրացկանները: Ցավով պետք է նշեմ, որ դրանց



ГАУРУ "Медиацентр им. И. Гаспринского"

թիվը Հայաստանում և, հատկապես, Երևանում ու այլ մեծ քաղաքներում գնալով ավելանում է: Քայլում ես փողոցներով և այս ու այն անկյունում, հատկապես բանուկ մայթերին, տեսնում ես նստոտած կամ կանգնած, ամեն անցորդի ձեռք մեկնող, խիղճ հարուցող ձայնով օգնություն աղերսող մարդկանց: Իհարկե, մուրացողների բանակը միատարր չէ. նրանց մի մասն իրոք կարիքից դրդված՝ ապրուստի այլ միջոց չունենալու պատճառով է դիմում այս վերջին միջոցին: Սակայն կան նաև այնպիսիները, որոնք ոչ այնքան կարիքից, որքան բնածին՝ ծուլությունից մղված և մուրացկանությունն արհեստ դարձրած՝ միանգամայն շահադիտական նպատակներով են փող մուրում: Առաջին հայացքից դժվար է տարբերել իսկական մուրացկանին կեղծից, և երբ նրանցից որևէ մեկը ձեռք է պարզում ինձ, ես հիշում եմ հետևյալ դառը խորհուրդը. «Եթե մարդն այնքան է նվաստացել, որ փող է մուրում, ապա մի հարցրու ինքդ քեզ՝ իրո՞ք նա դրա կարիքն ունի, թե՞ ոչ. եթե գրպանումդ կա՝ տո՛ւր»: Այս առիթով հիշեցի մի սրտաճմլիկ դեպք: Երևանում՝ կանգառում կանգնած, ավտոբուսի էի սպասում, երբ ինձ մոտեցան երկու երեխա՝ վեց կամ յոթ տարեկան, և փող խնդրեցին: Իրար շատ էին նման, և ես առանց հարցնելու կռահեցի, որ քույր ու եղբայր են: Երկուսն էլ կեղտոտ ու հին շորերով էին և նույնքան կեղտոտ, մրոտ երեսներով ու ձեռքերով: Լուռ կանգնած ինձ էին նայում իրենց մանկական անմեղ աչքերով, համբերատար սպասելով, թե երբ կերջանկացնեմ իմ առատաձեռնությամբ: Անխոս նրանց մեկնեցի դրամը, և նրանք, շնորհակալություն հայտնելով, հեռացան: Արդեն սովորական դարձած այս դեպքը ես երևի չհիշեի, եթե չլիներ աղջնակը՝ սև, խոշոր աչքերով, թխահեր, գեղեցիկ դեմքով այն փոքրիկ հայուհին, որ նույնիսկ իր մրոտ դեմքով հմայում էր անցորդներին: Սակայն ամենատպավորիչը աղջնակի հայացքն էր՝ մանկական թախծոտ հայացքը, որ մինչև օրս աչքիս առաջ է: Տպավորվել է այնքան, որ չեմ կարողանում մոռանալ: Դեռ մինչև օրս նույն հարցն է պտտվում իմ գլխում. «Ինչո՞ւ այսքան դաժան է ճակատագիրը, ո՞րն է այս փոքրիկի մեղքը»…

* * *

Գործուղումս մոտենում էր ավարտին: Եվս մեկ օր, և ես դարձյալ հեռու կլինեմ հայրենիքից: Հեռու, ոչ այնքան տարածության,

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

որքան՝ ավելի հաճախ Հայաստանում լինելու հնարավորության բացակայության, նույնիսկ մեկ օրով հայրենի օջախից բաժանված լինելու և այդ բաժանումից առաջացած կարոտի զգացման առումով:

Ընդամենը երկու շաբաթ տևեց վաղուց սպասված հանդիպումը: Երկու շաբաթ. դա և քիչ է, և շատ: Քիչ է, որովհետև երկու վայրկյանի պես անցան այդ երկու շաբաթները՝ անընդհատ հիշեցնելով, որ անկասելիորեն մոտենում է բաժանման ժամը և, ո՜վ գիտի՝ մեկ էլ երբ կլինեմ հայրենիքում: Այդ ժամկետը նաև շատ է, որովհետև ինձ են սպասում Սիմֆերոպոլում թողած բազմաթիվ գործեր ու խնդիրներ, որոնց լուծման համար իմ ներկայությունը պարտադիր է: Հասկանալի է՝ բաժանվել չէի ուզում ո՛չ իմ մորից, ո՛չ իմ տանից, ո՛չ իմ հայրենի հողից: Բաժանումը միշտ էլ դժվար բան է, այն էլ՝ այդքան թանկ գանձերից: Հասկանալի է նաև, որ չմեկնելու ցանկությունը լոկ սենտիմենտալ զգամունք է այս դեպքում, քանի որ կա աշխատանք, կան պարտականություններ, այդ աշխատանքի ու պարտականությունների նկատամբ պատասխանատվության զգացում, որից փախչել չես կարող, որքան էլ մեծ լինի ցանկությունդ:

Հակասական զգացմունքների ալիքը հորդում էր ամբողջ ուժով. ուզում էի և՛ գնալ, և՛ մնալ: Երկու ցանկությունն էլ ուժեղ էին և անզիջում: Սակայն կար նաև մի շատ կարևոր բան, որի մասին ես ամաչում էի նույնիսկ ինքս ինձ խոստովանել: Արդեն նշել եմ, որ Ղրիմում, եթե այն համեմատենք Հայաստանի հետ, կյանքն ավելի բարեկեցիկ է, կենցաղային պայմաններն՝ ավելի տանելի: Այլ կերպ ասած, ապրելն ավելի հեշտ է: Եվ, հավանաբար, այս երկու տարվա ընթացքում ես սովորել եմ, որ լույսը չեն անջատում, որ գազ ու ջուր կա, որ ձեռքերը չեն սառչում բնակարանում, որ գործազրկությունն այնպիսի ահռելի չափերի չի հասնում, ինչպես Հայաստանում է, և ինձ համար դժվար է նորից ապրել այն կյանքով, որով ապրում, ավելի ճիշտ՝ գոյատևում է իմ ժողովրդի մեծ մասը: Եվ ժամանակին շատ տարածված՝ արտասահմանից քառասնական թվականներին Հայաստան վերադարձած հայերի այն արտահայտությունը, թե՝ «Չգիտեմ՝ ինչի մասին եք խոսում, սակայն երթալը ճիշտ է», ցավոք սրտի, հիմա լիովին կարող է նաև ինձ վերաբերել:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Օդանավակայանում՝ հրաժեշտից առաջ, մեկ անգամ ևս ուզում էի տեսնել աստվածաշնչային Արարատը: Ավա՜ղ, այս անգամ էլ ամպերն ամբողջովին վարագուրել էին նրան: Երևի, իրոք, մեղքս շատ մեծ է: Եվ ինչպես կարող է փոքր լինել, եթե մայրս արցունքներն աչքերին է ճանապարհում ինձ…

* * *

…Ինքնաթիռը սրընթաց վայրէջք է կատարում, և ես չեմ հասցնում հայացքով ընդգրկել ներքևում սփռված ղրիմյան տեսարանները, որոնք ինձ արդեն լավ ծանոթ են և… ո՜վ ամենակարող Աստված՝ արդեն հարազատ: Եվ հանկարծ ինքս ինձ բռնում եմ այն մտքի վրա, որ սրտատրոփ րոպեներն եմ հաշվում, թե երբ ինքնաթիռի անիվները կդիպչեն ղրիմյան հողին: Հանկարծ զգում եմ, որ կարոտել եմ ընտանիքիս, ընկերներիս, Ղրիմի կենարար հողին ու ջրին: Մի՞թե երկու տարին բավական է, որպեսզի ևս մեկ կարոտ համակի քեզ, և դու մնաս երկու կարոտների արանքում… Սա արդեն նոր փորձություն է, որ բաժին է ընկել ինձ և ինձ նման շատերին, մի նոր խնդիր, որի լուծման համար ժամանակ է պետք: Ուրեմն, ժամանակն էլ թող լինի դատավոր…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

## Командировка

*Недавно съездил в командировку в Армению. Два года не был на родине, и меня к ней тянула не только безграничная тоска, но и любопытство: в каком положении страна, как живёт народ, есть ли перемены к лучшему? Правда, приезжающие оттуда кое-что рассказывали, но, во первых, их рассказы иногда были противоречивыми, и, как говорится, лучше один раз увидеть, чем сто раз услышать. Вот о том, что я увидел и о моих в основном грустных впечатлениях и хочу рассказать.*

* * *

...Самолет стремительно шёл на посадку, и я не успевал сквозь стёкла иллюминаторов полностью воспринимать (осознать) быстро чередующиеся друг за другом виды: Эчмиадзин и Звартноц, Мусалер (село, в котором я родился), многочисленные плодовые сады и кое-где покрытые лоскутами снега поля. И всё это обернуто серой, но прозрачной облачной вуалью. Всё это так знакомо! Что я говорю! Всё это такое близкое и родное, всё это настолько моё, впитавшееся в кровь со дня рождения вместе с землей и водой, солнцем и материнским молоком. И я, ничтожная частица этой страны, что называется Родина, кажется, целую вечность был отлучен от мамы, моего дома и сада, моих корней... Прости меня, мама, прости, родная земля...

Меня отрезвил голос стюардессы: «...Наш самолет совершил посадку... Температура воздуха... Экипаж прощается с вами...».

* * *

Здравствуй, Армения!

Только вступил на родную землю, повернулся, чтобы увидеть библейский Арарат. Увы! Серые облака пленили гору. Говорят, Арарат от грешников скрывает своё лицо. Я человек не суеверный, но печаль легла на душу. Так что у меня настроение было ниже нуля, как и температура воздуха. Наверное, очень грешен...

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Мать всегда ждет меня, но сейчас мой визит был неожиданным. Когда я вошел в дом, она не знала, верить ли глазам? Слёзы радости и тоски смешались… Наверное, только она каждый раз меня прощает, каким бы великим ни был мой грех…

Не знаю отчего: от приятного тепла, что доходило до меня из печи, или от долгой беседы, а может быть, от усталости, я разомлел, уставшее тело было в гармонии с покоем души… Какой бесценный клад – мама, как хорошо в родном доме!..

* * *

Недолгое расставание, которое мне кажется целой вечностью, и тоска, родившаяся от этого расставания, ведут меня по где-то прямым, а где-то кривым и грязным улочкам родного села, которые так и не успели стать красивыми и широкими улицами, «ведущими в светлое будущее». Скорее всего, это дороги в никуда. Они, вероятно, потеряли надежду, что когда-нибудь увидят себя благоустроенными и чистыми, а вдоль дорог – зелень и цветы, большие и красивые деревья, которые так оберегают от летней жары. Кстати, о деревьях: морозные и темные зимы 1993-1994 гг. стали последними для деревьев нашего и окружающих сёл. Но два года назад некоторые из них ещё были живы. Ныне голые улочки, голый единственный сквер села. Только торчат пеньки, и то не все, бывало, дерево вырывали с корнем…

Трудно винить людей: нет другого топлива или оно очень дорогое, а тепло нужно всем, как кислород, как хлеб.

Дерево деревом, но положение людей тоже очень тяжелое. Плохо живут, за исключением небольшой горстки людей, все. Чтобы понять это, далеко ходить не надо. На каждом шагу встречаю друзей, знакомых, одним словом, односельчан, которые считают своим долгом поздороваться за руку и задать традиционный вопрос: «Как живешь»? Я отвечаю теплым рукопожатием и традиционным ответом: «Ничего, слава Богу»! После чего следует не менее традиционный вопрос: «Здесь луч-

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ше или там»? – «И там, и здесь», – в полушутку, полувсерьез отвечаю я и объясняю, что Крым, по сравнению с Арменией, в экономическом и социальном отношении находится в лучшем положении, но здесь моя Родина, мой народ, мой дом… Так что сами судите, где мне лучше? – «Здесь очень плохо, очень, – отчаянно руками машут они, – жить стало намного труднее. Что там говорить, сам видишь»…

Вижу, дорогие односельчане, вижу: экономика разрушена, безработица достигла огромных размеров, продолжается блокада дорог со стороны соседних государств. И конца этому не видно. Мало кто верит, что будет хорошо: верят только те, кто относительно хорошо живет. А по неофициальным данным, половина населения Армении находится на пороге бедности. Люди кое-как перебиваются, в основном занимаясь мелкой торговлей. В деревнях пытаются выжить, обрабатывая землю или разводя скот. Не у всех получается, потому что дорогие удобрения, сельхозтехника, топливо – солярка или бензин. Те, что потеряли всякую возможность зарабатывать хлеб насущный, забывая честь и уважение, вынуждены просить о помощи, тем самым увеличивая армию попрошаек…

* * *

А сейчас давайте оставим сельскую «идиллию» и перейдем к городским будням: поговорим о столице Армении – Ереване.

Реальное лицо каждого государства – это его столица со всеми своими положительными и отрицательными сторонами. И даже иностранец (я уже не говорю о местном), если он достаточно внимателен, может различить и правильно оценить главное и второстепенное, форму и содержание. Если мир основывается на противоречиях, если человек – сгусток этих противоречий, то не нужно искать более яркого примера, чем Ереван и ереванцы.

Конечно, за эти два года, пока меня не было в Ереване, коечто изменилось в столице (речь идет о внешних изменениях): улицы стали более чисты и благоустроены и, как раньше (вернемся назад хотя бы на десять лет), приятно ходить по ним.

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Правда, ещё чувствуется результат поголовной вырубки деревьев. Но вместо тех, которые «превратились» в тепло (последнее в 1993–94 годах фактически стало вопросом жизни и смерти, унесло тысячи и тысячи деревьев), выросли новые, а оголенные пустили новые побеги. На тротуарах нет и тех жалких «предпринимателей», которые зарабатывали хлеб насущный, продавая всё, что дома есть, или относительно дешево приобретенный какой-нибудь товар. Конечно, их отсутствие отнюдь не означает, что такого рода торговцы разбогатели или достигли материального благополучия: просто городские власти запретили такую торговлю, чтобы якобы «облагородить внешний облик города».

Исчезли также многочисленные большие и маленькие «торговые столики», которые порой создавали серьезную преграду уставшим и утомленным всем этим прохожим. Вместо них появились новые и красивые, пахнущие «капиталистической» роскошью магазины (извините, чтобы не отстать от моды, хотел сказать – супермаркеты), где можно купить всё, что сердце пожелает. Как в народе говорят, здесь можно найти даже «змеиное молоко». Видимо, нечего удивляться: ведь строим капитализм! И вот тут можно увидеть первое противоречие: в этих роскошных супермаркетах или вовсе нет покупателей, или их число устремляется к безграничному минусу. Продают все, но, к сожалению, покупают редкие люди: те избранные, заработок которых прямо пропорционален дорогим товаром, а такие расходы не «прорубают» щели в их семейном бюджете. А остальные, что составляют большинство, с безмерной тоской смотрят на эти дорогие (в основном импортные) товары и идут искать более дешевые, соответственно более некачественные. Чтобы привлечь это большинство к себе, молодые девушки и парни из кожи вон лезут: ложно мило улыбаются, готовы исполнить любой каприз клиента, но это тоже не помогает, их старанье остается «гласом вопиющего в пустыне».

Ещё более роскошны ереванские кафе и рестораны. Они и раньше привлекали посетителей и своим красивым интерьером,

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

и разнообразием вкусных блюд. Старые переживают вторую молодость, напоминая о тех счастливых и славных днях, когда они были доступны практически всем независимо от занимаемой должности или содержания кармана. Сейчас другая картина: для многих эти заведения – неприступные крепости. Как бы они ни привлекали своими цветными и световыми рекламами, на каком бы высоком уровне не было бы там обслуживание и насколько вкусны ни были бы блюда, всё равно для безработного с дырявым карманом или для человека, который еле-еле сводит концы с концами, они остаются недоступными. Таким людям остается только мечтать о том, что «когда-нибудь и на их улице будет праздник», что все имеет своё начало и конец, и хорошие дни ещё впереди. Но вот что странно: цепь противоречий и здесь продолжается. Говорят (а я должен признаться, что однажды сам видел), что ереванские кафе и рестораны переполнены... после полуночи. Основные посетители – молодые люди, а веселье продолжается до самого утра. В этом отношении Ереван достиг уровня всемирно известных городов.

Первая реакция – отрицательная. Этого не может быть при такой нищете и массовой безработице. Но потом, рассуждая более трезво, понимаешь, что эти посетители – те же избранные, те действительно удачливые люди, которые наслаждаются жизнью, тратя свои или, может быть, чужим потом заработанные деньги. Именно здесь вспоминаешь известную народную поговорку: «Пирующему не убавится пира». Может быть, так и должно быть: рядом живут слёзы и смех, голодный и сытый, глупый и гений, и всё это – один народ, что называется армяне.

* * *

В наши дни никого не удивишь попрошайками. Раньше мы таких видели только в фильмах или в телевизионных репортажах работающих за рубежом наших советских корреспондентов и искренне жалели этих несчастных людей, при этом строго осуждая капиталистический мир. Сейчас у нас есть свои собственные попрошайки, которые ничем не отличаются

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

от заграничных, а в чём-то даже превосходят их. С болью должен отметить, что их число в Армении, особенно в Ереване и других крупных городах, становится больше. Ходишь по улицам и видишь в разных, особенно многолюдных местах: сидят или стоят люди, которые протягивают руку каждому прохожему и жалостливым голосом просят о помощи. Конечно, армия попрошаек разношерстна: часть их на самом деле вынуждена прибегнуть к этому методу зарабатывать на хлеб. Но есть и такие, которые не столько от нужды, сколько от природной лени попрошайничество выбрали себе профессией. На первый взгляд трудно отличить настоящего попрошайку от ненастоящего, и когда я вижу протянутую руку, вспоминаю один горький совет: «Если человек настолько унизился, что просит денег, то не спрашивай сам себя – на самом деле он в этом нуждается. Если в кармане есть – дай»!

По этому поводу вспомнил один душераздирающий случай. В Ереване на остановке ждал автобус. Ко мне подошли два ребенка лет шести-семи. Очень были похожи друг на друга, и я без труда понял, что это брат и сестра. Оба были в грязных одеждах, лица и руки тоже были грязные. Попросили денег и молча терпеливо ждали, глядя на меня своими детскими невинными глазами, когда я их осчастливлю своей щедростью. Я молча дал им деньги, и они, поблагодарив меня, ушли. Я бы, наверное, не запомнил бы этот, ставший уже обычным, случай, если бы не та черноокая, красивая девочка, та маленькая армяночка, которая, несмотря на свое грязное личико, всё равно завораживала меня. Но самоми впечатляющими были её глаза: не по-детски грустные, которые до сих пор стоят передо мной. Они запечатлелись мне настолько, что, я, видимо, не забуду их никогда. До сегодняшнего дня у меня в голове крутятся одни и те же вопросы: «Почему так жестока судьба, в чем вина этой малышки»?

* * *

Моя командировка подходила к концу. Ещё один день, и я опять окажусь вдали от Родины. Далеко не столько из-за

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

расстояния, сколько по тому, что не могу часто приезжать в Армению, что даже месяца достаточно, чтобы я опять начал тосковать по маме и родному очагу, по родной земле…

Долгожданная встреча длилась всего две недели. Две недели: это и мало, и много. Мало, потому что они прошли как две секунды, всё время напоминая мне о том, что неотвратимо приближается час расставания и, кто знает, когда я ещё буду в Армении. Это и много, поскольку в Симферополе меня ждёт много дел и зада, для решения которых моё присутствие необходимо. Вполне понятно, что я не хотел расставаться ни с мамой, ни с домом, ни с родной землей. Расставаться всегда тяжело, особенно с такими дорогими вещами, как дом родной, родина. Я уже не говорю о маме: это несравнимо ни с чем. Так же понятно, что желание не уезжать – это всего лишь сентиментальное чувство в данном случае, потому что есть работа и есть ответственность перед этой работой, от чего не убежишь ни за что, как бы велико ни было твоё желание.

Противоречивые чувства штормовали со всей силой: оба желания были сильны и неуступчивы. Но при всем этом было ещё одно желание, о котором я боялся признаться даже сам себе. Я уже отмечал, что по сравнению с Арменией Крым более благополучный. Иначе говоря, жить здесь легче. И, видимо, за эти два года я привык, что свет не выключают, есть вода и газ, что руки не мерзнут зимой в квартире, что дети нормально ходят в школу. Наконец, у меня есть любимая работа. Одним словом, сейчас мне трудно вновь жить той жизнью, которой живет, точнее выживает большая часть моего народа. Когда-то в Армении было распространено одно высказывание, которое говорили репатрианты, вернувшиеся в середине сороковых годов в Армению: «Не знаю, о чем вы говорите, но правильно – надо уезжать из Армении»! Я всегда с болью воспринимал эти слова. Сейчас стыдно мне признаться и вдвойне больно, что то же самое могу сказать и я…

В аэропорту, перед расставанием, я ещё раз захотел посмотреть на библейский Арарат. Опять, увы, серый занавес закры-

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

вал гору. Видимо, действительно я очень грешен. И как может быть мой грех маленьким, если мама провожает меня со слезами на глазах…

* * *

Самолет стремительно шёл на посадку, и я не успевал сквозь иллюминаторы полностью воспринимать быстро чередующиеся друг за другом крымские виды, которые уже хорошо знакомы мне. И вдруг я ловлю себя на том, что с нетерпением считаю минуты, когда шасси самолета коснётся крымской земли. Вдруг меня охватывает чувство тоски по моей семье и друзьям, по крымской плодородной и животворящей земле. Неужели два года достаточно, чтобы у тебя родилась ещё одна тоска, и ты останешься между ними? Это уже новое испытание, что выпало на мою долю, новая задача, решение которой требует времени. Тогда пусть время и будет судьей…

## Մարտիկի երգը

Նվիրում եմ մորեղբորս՝
Ազատ Ղամբարյանի հիշատակին

Գարունը միշտ էլ գեղեցիկ է։ Նրա պատճառած բերկրանքն, այս կամ այն չափով, զգում է մեզանից յուրաքանչյուրը, եթե, նույնիսկ, հոգսերն ու խնդիրները, վիշտն ու ցավը երբեմն ստիպում են մոռանալ, որ կյանքում, բացի սևից, կա նաև սպիտակը, բացի վատից՝ նաև լավը։

Գարնան պարզված գեղեցկությունը մեր հոգում հույսի շող է արթնացնում, նոր ուժ և պայքարելու եռանդ ներարկում, որպեսզի մենք շարունակենք կյանքի այն հատվածը, որը մեզ տրված է ի վերուստ։

Գարունը, հատկապես մայիսը, նաև հաղթանակների ժամանակ է։ Համենայն դեպս, այդպես էր նախկին Խորհրդային Միության ժողովուրդների համար։ Եվ, չնայած, այսօր ամեն հանրապետություն անկախ և ազատ պետություն է՝ իր նախագահով, անձեռնմխելի սահմաններով, ազգային դրոշով

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ու օրհներգով, որքան էլ ամեն ազգ փորձում է անառիկ պահել իր ազգային ամրոցն ու արտասահմանցի է համարում երեկվա համերկրացուն ու համաքաղաքացուն (եկեք չմոռանանք, որ ոչ հեռու անցյալում բոլորս էլ խորհրդային երկրի զավակներ ենք եղել), այնուամենայնիվ, կա մի տարեթիվ, որը չի ճանաչում ոչ մի սահման՝ ո՛չ պետական, ո՛չ աշխարհագրական, ոչ ազգային: Կա մի հիշարժան օր՝ 1945 թվականի մայիսի 9-ը, որն ամենամեծ ցանկության դեպքում նույնիսկ հնարավոր չէ մոռանալ, ջնջել պատմության էջից. դա Հաղթանակի օրն է:

Հնարավո՞ր է, արդյոք, մոռանալ հաղթանակի զոհասեղանին դրված միլիոնավոր կյանքերը, ավերված քաղաքներն ու գյուղերը, համակենտրոնացման ճամբարները, խորտակված ճակատագրերը, անկատար երազանքները:

Որքան ծանր ու դժվարին, զրկանքներով լի է արդարացի պայքարն, այնքան քաղցր է հաղթանակի բերկրանքը, քանզի այն ձեռք է բերվել անչափ թանկ գնով: Սակայն ինչպես հաճախ է պատահում, հաղթանակի բերկրանքն անմիջապես չես զգում, քանզի անչափ դառն ու կորստաբեր են լինում այդ իսկ հաղթանակին նախորդած օրերն ու ամիսները: Եթե հիշվում է հաղթնակի պահը, ապա չի մոռացվում նաև այն տանջալից, փոշոտ ու փշոտ ճանապարհը, որով անցել է զինվորը՝ իր յուրաքանչյուր քայլով էլ ավելի մոտեցնելով հաղթանակը: Իսկ երբեմն էլ զինվորը չի հասնում վերջնակետին՝ հավերժ մնալով այդ անհանգրվան ճանապարհի որևէ հատվածում, անհայտ մի վայրում՝ ավելացնելով իր նման անհայտ այլ զինվորների անհայտ գերեզմանները…

* * *

Խրամատում ցուրտ էր ու խոնավ: Աշնանային բարակ անձրև էր մաղում անվերջ ու անդադար: Գիշերն անձրևի հետ իջել, նստել էր զինվորների հոգնաբեկ, անքուն դեմքերին: Անսովոր լռություն էր տիրում շրջապատում: Օգտվելով անսպասելի ու կարճ դադարից՝ զինվորներից մեկն աշխատում էր փոքր-ինչ հանգիստ տալ գերլարումից ու հոգնածությունից նվացող մկաններին ու նյարդերին. նա կուչ էր եկել ցուրտ խրամատում, ամուր գրկել էր հրացանն ու փակել աչքերը: Սակայն աչքերին քուն չէր գալիս… Ոչ այնքան այն պատճառով, որ թրջվել ու սառել

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

էր մարմինը, այլ, ավելի շուտ՝ տանջող հիշողություններից: Նա հիշել էր մորը միայնակ, որն օր ու գիշեր որդուն էր սպասում՝ լուռ ու համբերատար կանգնած գյուղ մտնող փոշոտ ճանապարհին…

Հանկարծ գիշերային լռությունը խախտեց թախծոտ ու զգացմունքային երգը, որ մեղմ զեփյուռի պես տարածվեց խրամատով մեկ: Եվ նույնիսկ այն մարտիկները, որոնք չէին հասկանում երգի բառերը, սթափվեցին նրա ելևէջներից ու սկսեցին լուռ ականջ դնել այն զինվորին, որին այդպես էլ չէր հաջողվել քնել, որպեսզի գոնե մի պահ մոռանա պատերազմ կոչվածը: Զինվորները լսում էին երգը և, հավանաբար, նրանք էլ հիշեցին հայրական տունը, մորն ու հարսնացուին, հարազատ վայրերը, որովհետև առանց մեկնաբանության էլ հասկանալի էր, թե ինչի մասին է երգը.

«Թռչեի մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն,
Տեսնեի այն առուն,
Որ ամեն մի գարուն
Ջրերով վարարուն
Կարկաչում էր սարերում…»:

* * *

Լուսաբացին որոտացին հրանոթները, ճարճատեցին գնդացիրներն ու ինքնաձիգները… Գունդը նետվեց մարտի, և աշնանային սառն ու թաց հողը նորից ներկվեց հայրենիքի պաշտպանների տաք արյունով:

Դաժան, անզիջում ու երկարատև էր մարտը. դեպի բարձունք տանող լանջը ծածկվեց թշնամու գնդակներից՝ խոցված զինվորներով. ամեն մեկը՝ մի տան ճրագ, ամեն մեկը՝ մի ջահել կյանք…

Մահը չխնայեց նաև երգող զինվորին: Թշնամու գնդակից խոցված՝ նա մի վերջին անգամ հիշեց մորը, իրենց գյուղը և այն մենավոր ընկուզենին, որի տակ այնքան խաղացել էր մանուկ օրերին: Հետո ամեն ինչ խավարով պատվեց ու անհայտացավ. կակաչ բացվեց զինվորի կրծքին՝ ալ-կարմիր կակաչ, իսկ նրա մեռնող շուրթերն ասես շարունակում էին մրմնջալ անավարտ մնացած երգի տողերը.



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

«...Հայրենիքն իմ սրտում՝
Թե չընկնեմ ես մարտում,
Ա՛խ, իմ մայր թանկագին,
Տուն կգամ ես կրկին,
Կփոփեմ քո հոգին
Համբույրով սրտագին,
Կսեղմեմ քեզ իմ կրծքին...»:

* * *

Հաղթանակը մտավ ամեն գյուղ ու քաղաք, ամեն տուն ու այգի և ազդարարեց պատերազմի ավարտը: Նա հայտնեց նաև, որ զինվորները շուտով տուն կվերադառնան... Վերադարձան, սակայն՝ ոչ բոլորը... Վերադարձածների մի մասն էլ՝ խեղանդամված, պատերազմի չորս տարիների ակոսները դեմքերին...

Շատ մայրեր, որդիների փոխարեն, տեսան նրանց մահվան ծանուցագրերը, իսկ ոմանք դա էլ չտեսան և մինչև իրենց մահն այդպես էլ չիմացան՝ արդյոք կենդանի՞ են իրենց զավակները, թե՞ ոչ: Միգուցե, դեռ կվերադառնա՞ն մի օր... Չվերադարձան, մնացին օտար հողում, դարձան անհայտ զինվորներ՝ մոր և հայրենիքի կարոտը սրտում, անավարտ երգը շուրթերին...

## Песня бойца

*Посвящаю памяти моего дяди –*
***Азату Гамбаряну***

Весна всегда красивая. Радость, которую она дарит нам, более или менее чувствует каждый из нас. Если даже проблемы и заботы, печаль или боль иногда нас заставляют забывать, что в жизни, кроме черного, есть и белое, кроме плохого, – хорошее. Эта красота пробуждает в нашей душе лучик надежды, дает нам новую силу, новую энергию, чтобы мы продолжали ту часть жизни, которая нам дана свыше.

Весна, особенно май, – пора побед. Во всяком случае так было для народов бывшего Советского Союза. Сегодня каждая

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

бывшая советская республика – независимое, свободное государство со своим президентом, неприкосновенными границами, своим национальным флагом и гербом. Каждый народ пытается сделать неприступным свою национальную крепость и называет иностранным гражданином вчерашнего соотечественника (давайте не забывать, что в недалеком прошлом мы все были советскими гражданами), все равно есть одна дата, которая не признает никаких границ – ни государственных, ни географических. Есть один памятный день – 9-ое мая 1945 года, который даже при большом желании невозможно стереть со страниц истории: это День Победы. А разве возможно забыть миллионы жизней, положенные на алтарь победы? Разве возможно забыть разрушенные города и села, концентрационные лагеря, разбитые судьбы, матерей и невест в черном, осиротевших детей, несбывшиеся мечты...

Насколько тяжела и трудна справедливая борьба, настолько сладка радость победы, поскольку она завоевана слишком большой ценой. А цену Великой Отечественной мы все хорошо знаем...

Но часто бывает так, что не сразу чувствуется радость победы, потому что слишком горькими были до этой победы дни и месяцы, годы. И если вспоминается миг победы, то не забывается та пыльная и мучительная дорога, по которой прошел солдат, каждым своим шагом приближая миг победы. Бывало и так, что солдат не доходил до своей цели – победы, навечно оставаясь на каком-то отрезке этой длинной дороги, в неизвестном месте, дополняя неизвестные могилы таких же неизвестных солдат, как и он.

* * *

В траншее было холодно и сыро. Не переставая моросил осенний дождь. Ночь с дождем опустилась и легла на уставшие, не выспавшиеся лица солдат.

Необыкновенная тишина царила вокруг.

Пользуясь неожиданной и короткой передышкой, солдат пытался унять ноющие от перенапряжения нервы и мышцы. Он скрю-

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

чился в холодной траншее, крепко обнял ружье и закрыл глаза. Но не мог спать… не потому, что замерз. Его больше всего мучили воспоминания. Он вспоминал одинокую мать, которая день и ночь ждёт сына, молча и терпеливо стоя на пыльной дороге…

Вдруг ночную тишину нарушила грустная песня, которая, как легкий ветерок, пробежала по траншее. И даже те бойцы, которые не понимали слов песни, оживились от её звуков и стали молча слушать. А пел тот солдат, которому так и не удалось заснуть, чтобы хоть на миг забыть войну. Бойцы, молча слушая его, наверное, тоже вспомнили родной дом, маму и невесту, так как и без объяснений было понятно, о чем поется в песне:

«Мысленно полететь бы домой,
Туда, где мама моя не спит,
Увидеть бы тот ручей,
Который каждую весну
Журчит в горах…».

* * *

На рассвете загрохотали пушки, затрещали пулеметы и автоматы… Полк рванулся в бой. Он был долгим и тяжелым. Склоны холма покрылись телами сраженных вражескими пулями солдат, каждый из них – свет очага, каждый из них – молодая жизнь…

Смерть не пощадила и поющего бойца: сраженный пулей, он в последний раз вспомнил маму, родную деревню и тот одинокий орешник, под которым так много играл в детстве… Потом всё покрылось тьмой и исчезло… Красный мак распустился на груди бойца, а его умирающие губы как будто продолжали шептать строки незаконченной песни:

«Родина в моем сердце:
Если не умру я в бою,
Ах, мама дорогая,
Я вернусь домой,



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Чтоб утешить твою душу
Сердечным поцелуем,
Прижму тебя к груди».

* * *

Победа вошла в каждый город и деревню, в каждый дом и сад, объявила о конце войны. Она также обещала, что скоро солдаты вернутся домой… Вернулись… но не все… А часть вернувшихся – калеки с лицами, избороженными войной…

Многие матери вместо своих сыновей увидели извещения об их смерти. А некоторые и того не увидели, до конца своих дней так и не узнали, живы ли их сыновья или нет? Может быть, вернутся когда-нибудь? Не вернулись… Остались лежать в чужой земле, превратились в неизвестных солдат, храня в сердце тоску по матери и родине, а на губах – незавершенную песню…

## Ես քնքշորեն համբուրում եմ քեզ

«Ես քնքշորեն համբուրում եմ քեզ»…

Հեռախոսագծի այն մյուս՝ հեռավոր ծայրում հնչած այս բառերը մոգական ազդեցություն ունեցան: Պահն անկրկնելի՛ էր, արբեցնող՝ ինչպես թունդ գինին: Բառերը գրվեցին, ո՛չ դրոշմվեցին սրտում: Սիրտն ազդանշան տվեց ուղեղին, և ուղեղն սկսեց անդադար կրկնել. «Ես քնքշորեն համբուրում եմ քեզ»… Նույն բառերը կրկնվում էին անվերջ, կարծես էլ ուրիշ բառ չկար աշխարհում, կարծես ողջ աշխարհն էր ամփոփված այս բառերում, կարծես, դա միակ լույսն էր համատարած խավարի մե՛ջ… Բառերը կրկնվեցի՛ն, կրկնվեցի՛ն, ձգվեցի՛ն, երկարեցի՛ն և դարձան այն ոլորապտույտ անտառային արահետը, որով ես քայլում էի՝ խշխշացնելով չորացած տերևները…

* * *

Ձմեռ է՝ ոչ խստաշունչ, ոչ սիբիրյան, սակայն երբեմն բուքն այնպես է ոռնում, որ մոռանում ես, թե հարավում ես ապրում՝



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Ղրիմում: Այնուամենայնիվ, ձմեռ է՝ ցուրտ, իսկ գարունը սարերի հետևում է, մինչև նրա գալուստը դեռ շատ ու շատ օրեր պիտի հաշվես, հաշվես ու համբերես, համբերես ու հաշվես… Կբավարարի՞, արդյոք, համբերությունդ, թե՞… Էլ ինչ՝ «թե», ուզես-չուզես, պիտի համբերես, դիմանաս՝ քրթմնջալով ու նվնվալով, սառչելով ու դողալով, հոգումդ գարնան պատրանք ստեղծելով, աֆրիկացիներին երանի տալով, էսկիմոսների վրա զարմանալով՝ մինչև որ կգա երազանք-գարունը: Իսկ այժմ դեռ ձմեռ է…

* * *

Երեկոյանում էր, արդեն զգացվում էր մթնշաղի շունչը. ուր որ է՝ աշնան կարճատև արևը կանցնի հորիզոնից այն կողմ…

Շտապում եմ, սակայն քայլերս չեմ արագացնում՝ գուցե մի քանի սունկ էլ գտնեմ: Զարմանալի… քիչ էր մնում՝ ասեի՝ զարմանալի էակներ են այդ սնկերը, չնայած, երբեմն թվում է, թե գիտակցում են իրենց արածը՝ թույլ ազդանշաններ արձակելով փնտրողի կողմը՝ թե եկ՝ այստեղ ենք, լավ փնտրիր, ավելի ուշադիր, մենք քո կողքին ենք… Շրջվում ես ազդանշանի կողմը, աչքերդ «չորս անում»՝ իրոք որ կողքիդ են՝ մեկ-երկու քայլ այն կողմ, երբեմն՝ լավ քողարկված, այնքան լավ, որ կնախանձեր ցանկացած հետախույզ, երբեմն էլ՝ այնքան բացահայտ ու մերկ կանգնած, որ զարմանում ես, թե ինչպես շուտ չես նկատել: Հետո հասկանում ես՝ չես նկատել, որովհետև մտքովդ չի անցել, թե կարող են արահետի կողքին լինել՝ բոլորի աչքի առաջ: Հավանաբար, դա էլ քողարկվելու մի ձև է: Նման սնկերին ես որակել եմ «Ճանապարհային սնկի սինդրոմ» ոչ գիտական անվամբ: Դու նրանց փնտրում ես թաքստոցում, իսկ նրանք հենց քթիդ տակ են…

* * *

Շեղվեցի, սնկերը նույնիսկ ձմռանը հանգիստ չեն տալիս: Եվ այսպես, երեկոյանում էր: Անտառով քայլելիս՝ հազվադեպ եմ հայացքս գետնից կտրում՝ ողջ ուշադրությունս, հիմնականում, սնկերի կողմն է: Անտառում արդեն կիսամութ է, խոտն ու քարը դժվար են զանազանվում սնկից: Սոճիների մութ բներն, ասես, սևազգեստ աբեղաներ լինեն, լուռ աղոթում են՝ ձեռքերը երկինք պարզած: Եվ հանկարծ… ծառերի արանքով տարածվող

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

անսովոր վառ լույսն ինձ ստիպեց կանգ առնել և նայել լույսի կողմը, այսինքն՝ դեպի արևմուտք: Նայեցի ու… քար կտրեցի և չկարողացա զսպել հիացական բացականչությունս. «Պա՛հ, կա՛նգ առ, դու հրաշալի ես»: Իրոք որ, մի հրաշք տեսարան էր բացվել իմ առաջ… Բոսոր արևը մայր էր մտնում: Հաշված րոպեներ էին մնացել մայրամուտի ավարտին: Հորիզոնը շառագունել էր, բոցավառվում էին լաջվարդ երկնքում լողացող, արևի հրդեհով բռնկված՝ սպիտակաթույր, թափանցիկ ամպերի հատուկենտ քուլաները, որոնք կարծես բրոնզե հալոցք լինեին: Մի քանի տասնյակ մետր այն կողմ անտառահատվածը վերջանում էր, որտեղից սկսվում էր երկու այլ անտառահատվածների միջով ձգվող բավականին լայն, կանաչապատ ճանապարհը: Այն հասնում էր մինչև հորիզոնի գիծը և միաձուլվում էր կապույտ երկնքի, ոսկեզօծ ամպերի և շիկացած արևի հետ. վերջինս նարնջագույն էր ներկել և ճանապարհը՝ ավելի շեշտելով զմրուխտ կանաչը, և սոճիների կատարները, էլ ավելի էր պայծառացրել երկնագույնը, ընդգծել՝ հասած ծիրանի պես կախ ընկած ամպերի ծվենները: Արևի ճառագայթները տեղ-տեղ ճեղքել էին սոճիների անտառը և, շրջանցելով ծառերի մութ բները, հասնում էին ինձ: Ես զմայլված դիտում էի այդ հեքիաթային տեսարանը. ոտքերս գամվել էին գետնին, հայացքս սառել էր բնության այդ հրաշքի վրա: Գեղեցիկ բնապատկերներ շատ եմ տեսել, սակայն նման տեսարան դեռ չէի տեսել: Մոռացել էի ամեն ինչի՝ նույնիսկ՝ սնկերի մասին: Ցանկությունս մեկն էր՝ ժամանակը կանգ առներ, և հավերժանար այս հրաշքը: Ավա՛ղ, ամեն ինչ անցողիկ է կյանքում… Արևը կուլ գնաց հորիզոնում, ստվերները թանձրացան և մարեցին: Հեքիաթն ավարտվեց: Եվ միայն վրա հասած մութն ինձ ստիպեց սթափվել և ափսոսանքով քայլել տան ճանապարհով: Գնում էի ու մտածում՝ արդյո՞ք երազ չէր այս ամենը՝ երազ կարճատև ու անկրկնելի, երազ դյութական ու արբեցուցիչ: Կկրկնվի՞, արդյոք, այն գոնե մեկ անգամ ևս, թե՞ այդպես անդարձ կորչելու է խավարում, որ, գուցե, մի օր՝ տարիներ անց, այցի գա մեկ ուրիշին՝ ստիպելով նրան բացականչել. «Պա՛հ, կա՛նգ առ, դու հրաշալի ես»…

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

«Ես քնքշորեն համբուրում եմ քեզ»…

Որքա՞ն ժամանակ է անցել, ե՞րբ ասվեցին այս բառերը՝ երե՞կ, թե՞ տասնամյակներ առաջ: Սակայն, մի՞թե դա կարևոր է: Ժամանակն անզոր է նրանց նկատմամբ, նրանք հավերժ են, իսկ ժամանակն՝ անցողիկ: Ժամանակը, պարզապես, անկարող է մոռացության տալ այդ բառերը…

Հիշողության նս մեկ պատառիկ, որ քաղցր թախիծ է պատճառում ու չի մոռացվում, ու չի մոռացվում…

## Я нежно целую тебя

«Я нежно целую тебя»…

Эти слова, прозвучавшие на другом, далеком конце телефонной линии, оказали на меня магическое воздействие. Миг был неповторимым, опьяняющим, как крепкое вино. Слова отпечатались… нет, они заполонили сердце. Сердце просигналило мозгу, и он начал повторять эти слова: «Я нежно целую тебя»… Одни и те же слова повторялись бесконечно, будто не было других слов в этом мире… Как будто весь мир был собран в этих словах, и это был единственный свет в беспросветной тьме. Слова повторялись, повторялись, растягивались и превратились в ту извилистую лесную тропинку, по которой я шел, шурша сухими листьями…

* * *

Зима… Не очень холодная и не сибирская погодка, но иногда так завоет метель, забываешь, что живешь на юге, в Крыму. И всё-таки зима, холодно, а весна – за горами. До её прихода ещё много дней придется считать и терпеть… Хватит ли терпения или?.. А что «или»? Хочешь или нет, придется ныть и терпеть, замерзать, скрипеть зубами и терпеть, в душе создавая иллюзию весны, завидовать афри-

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

канцам, удивляться эскимосам, пока придет заветная весна. А пока – зима и мои воспоминания…

* * *

Вечерело… Уже чувствовался дух сумерек… Вот-вот короткое осеннее солнце спрячется за горизонтом…

Спешу, но шаги не убыстряю, может быть, ещё пару грибов найду. Удивительные… хотел сказать, удивительные существа эти грибы. Хотя иногда кажется, что они осознают, что делают, пуская слабые сигналы в сторону грибника: «Мы здесь, рядом, будь внимателен, хорошо ищи»… Поворачиваешься на сигнал, смотришь внимательно, в самом деле они рядом, в двух шагах от тебя. Они хорошо замаскированы, да так хорошо, что позавидует любой разведчик, а иногда стоят перед глазами без маскировки, а ты удивляешься, что раньше их не заметил. Потом понимаешь: в голову не приходило, что они могут быть возле тропинки, у всех на глазах. Может быть, и это хороший способ замаскироваться. Таким грибам я дал «ненаучное» название: «Синдром дорожного гриба». Ты его ищешь в «тайнике», а он – под носом…

* * *

Отвлекся, эти грибы даже зимой покоя не дают. Итак, вечерело. Когда иду по лесу, редко смотрю вверх, всё внимание в основном на грибах. В лесу уже полумрак, трудно отличить камни и траву от грибов. Темные стволы сосен, как монахи в чёрном, молча молятся, протянув руки к небу. И вдруг… яркий и необыкновенный свет, просачиваясь сквозь деревья, заставил меня остановиться и посмотреть в его сторону, то есть на запад. Посмотрел и… окаменел, и не смог сдерживать восхищенный возглас: «О, миг, остановись, ты прекрасен»! В самом деле передо мной открылась чудесная панорама. Огромное оранжевое солнце поспешно катилось

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

к линии горизонта, до заката оставались считанные минуты. Горизонт багровел весь, яркое пламя охватило и редкие, прозрачные и белоснежные хлопья облаков, которые были похожи на расплавленные бронзовые слитки.

В нескольких десятках метров дальше, где заканчивался лесной участок, между двумя другими лесными массивами начиналась довольно широкая, покрытая зеленой травой дорога. Она поднималась вверх, доходила до линии горизонта и сливалась с синим небом, золотистыми облаками и багровым солнцем. Последнее оранжевым цветом покрасило и дорогу, ещё больше подчёркивая изумрудную зелень и вершины сосен, делало ярче синее небо, выделяло похожие на спелый абрикос клочки облаков. Лучи солнца, пробираясь кое-где сквозь сосновый лес, обходили черные стволы деревьев и доходили до меня. Я очарованно смотрел на эту сказочную панораму: ноги пригвоздились к земле, взгляд застыл на этой чудо-картине. Я много видел красивых пейзажей, но такое даже не снилось мне. Забыл обо всем, даже о грибах. У меня было лишь одно желание: пусть остановится время и увековечится это чудо. Увы, всё в этой жизни проходящее… Горизонт проглотил солнце, тени загустели и погасли. Сказка закончилась… И только темень заставила меня опомниться, и я с сожалением отправился домой. Шёл и думал: быть может это сон? Сон короткий и неповторимый, сон волшебный и пьянящий. Повторится хоть один раз он или так безвозвратно исчезнет во тьме, чтобы когда-нибудь, спустя годы, явиться кому-то другому, заставляя его воскликнуть: «О, миг, остановись, ты прекрасен»!

* * *

«Я нежно целую тебя»…

Сколько времени прошло с тех пор, когда были сказаны эти слова, вчера или десятилетия назад? Но разве это важ-

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

но? Время бессильно над ними, они вечны, а время уходит. Время просто не может стереть эти слова…

Вот ещё один клочок памяти, который навевает сладкую грусть и не забывается, не забывается…



ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"



ГАУРК "Медиацентр им. И. Гаспринского"

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
## СОДЕРЖАНИЕ


ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ .............................................3
ВМЕСТО ПРЕДИСЛОВИЯ ..........................................3

**ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ**
**ВРЕМЕНА ГОДА**

Աշնանային տրամադրություն.................................6
Осеннее настроение................................................7
Առաջին ձյունը ........................................................8
Первый снег..........................................................10
Գարունն անցավ ...................................................11
Весна прошла .......................................................11
Գարնանային էտյուդ .............................................12
Весенний этюд .....................................................13
Ամառային տրտմություն ......................................14
Летняя печаль.......................................................16

**ԵՂԵՌՆ**
**ГЕНОЦИД**

Ապրիլի 24-ը… .......................................................20
24-ое апреля… .......................................................21
Հարթաքանդակի մոտ ............................................23
У барельефа..........................................................24
Ատելություն ..........................................................24
Ненависть .............................................................26


ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

## ԱՂՈԹՔ
## МОЛИТВА

Աստղաթափ ....................................................................30
Звездопад ....................................................................31
Վերջին նամակը....................................................................31
Последнее письмо ....................................................................33
Մենություն ....................................................................34
Одиночество ....................................................................35
Խոստովանություն ....................................................................36
Признание....................................................................37
Աղոթք ....................................................................37
Молитва ....................................................................40

## ԱՄԱՆՈՐ
## НОВЫЙ ГОД

ՆՆՏ կամ «Նոր» Նոր տարի ....................................................................44
ННГ или «Новый» Новый год ....................................................................45
ՀՆՏ կամ «Հին» Նոր տարի ....................................................................45
СНГ или «Старый» Новый год ....................................................................46
Լինե՞լ, թե՞ չլինել ....................................................................47
Быть или не быть? ....................................................................52

## ՉՈՐՍ ՆՈՎԵԼ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ
## ЧЕТЫРЕ НОВЕЛЛЫ О ЛЮБВИ

Գարնանն էլ է ձյուն գալիս… ....................................................................60
И весной снег идёт…....................................................................60
Երկու մոմ ....................................................................61
Две свечи ....................................................................62
Ես և դու ....................................................................63
Я и ты ....................................................................63

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Ժամանակը և մենք ....................................................64
Время и мы ..............................................................65

**ԱՅՍ ԽԱՅՏԱԲՂԵՏ ԱՇԽԱՐՀԸ**
**ЭТОТ ПЁСТРЫЙ МИР**

Ամեն երեկո ............................................................68
Каждый вечер .........................................................70
Ծիրանենին ..............................................................72
Абрикосовое дерево ................................................75
Գործուղում ..............................................................77
Командировка ........................................................87
Մարտիկի երգը .......................................................94
Песня бойца ............................................................97
Ես քնքշորեն համբուրում եմ քեզ ..........................100
Я нежно целую тебя ..............................................103

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

**УДК 821(=1.479.25)**
**ББК 84(2Рос=Арм)**
**П33**

**П32** **Пилосян Р.**
**Клочки памяти**: *книга первая.* — Симферополь: ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского», 2018. — 112 с. : илл. – На армянском и русском языках
**ISBN 978-5-906959-52-2** **УДК 821(=1.479.25)**
**ББК 84(2Рос=Арм)**

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

**ISBN 978-5-906959-52-2**
**© Пилосян Р.,** 2018
**© ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского»,** 2018

*Литературно-художественное издание*

**Пилосян Рушан**

**КЛОЧКИ ПАМЯТИ**

**ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ**

*Книга первая*

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Компьютерная вёрстка *А. Веселов*
Корректор русского текста *В. Настина*

Художник *С. Багдасарян*

Подписано в печать 06.06.2018 г. Формат $60x84^{1}/_{16}$.
Гарнитура «Peterburg». Усл. печ. л. 6,51.
Объём 7,0 печ. л. Тираж 300 экз. Заказ № 56110.

**ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского»**
295048, Республика Крым, г. Симферополь, ул. Трубаченко, 23-а.
*E-mail: mediacenter2015@mail.ru* ОГРН 1159102113455

**Отпечатано в типографии ООО «КОНСТАНТА»**
308519, Белгородская обл., Белгородский р-н,
п. Северный, ул. Березовая, 1/12
Тел./факс +7 (4722) 300-720,
www.konstanta-print.ru

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"